

*Հ*ԵՎԱՆԻ ԱՆՏԱՌԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կայ 1938, 49 և ուրի

Ա. ՇՈՎԻԿՅԱՆ

ԱՆՏԱՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՍՏԵՐՄԵՐ

□ □ □

0 4 0 8 0 0 0 0 2 0 2 4 0 0 2 0 0 0 0 0 0 0

0 0

0  
0 0

0 0

ՓՀ

37330



Ա. ՇՈՎԵԿՅԱՆ

634.94 : 631.53.1

Ծ

Ա Ն Տ Ա Բ Ա Ց Ի Ն  
ԾԱՌԱՄԵՐՄԵՐ

A 23193



## Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Անտառկուլտուրական ծավալիող աշխատանքները՝ անտառացան, անտառատունների և անտառային տնկարանների զարգացող ցանցը, քաղաքների, գյուղերի, յերկաթուղու կայարանների, կուրորտային-հանգըստյան տների ու բանվորական ավանների կանաչապարպման աշխատանքները, ինչպես նաև տնտեսականապես ու քաղաքականապես ամրացած մեր կոլեկտիվ տնտեսությունների գծով ձեռնարկված անտառացման ու անտառմելիորատիվ աշխատանքները, պտղաբուծության դործի զարգացումն ու ծավալումը, վորոնք իրենց մասշտաբներով և արագության տեմպերով ամրող նախընթաց պատմության մեջ իրենց նմանը չեն ունեցել, —որավուր հսկայական պահանջներ են ներկայացնում դեպի անտառային ծառասերմերն ու ծառապտուղները, վորոնք հանդիսանում են թված բնագավառների բարգավաճման համար հիմնական բաղա ու սկզբնաղբյուր:

Բնության այդ բարիքը մեր յերկրի արտադրողական ամենակարևոր ուժերից մեկի՝ մեր լեռնային խայտարդետ անտառային բուսականության պտուղներն են:

Երբքառաս տարիներում մեր անտառները տալիս են հարյուրադարավոր տոններով զանազան տեսակի թանգարժեք ծառասերմեր ու պտուղներ, վորոնք հսկայական նշանակություն ունեն մեր արհեստական անտառաճեցման և պտղաբուծության զարգացման համար: Այս տեսակետից բավական ե հիշատակել միայն այն, վոր Յերևանի անտառատնտեսությունը 1935 թվին պատրաստել ե 1000 կգ-ից ավելի տանձի և խնձորի մաքուր սերմեր, վորպիսիներն ստանալու համար վերամշակված ե 70 հազարից ավելի կգ տանձ ու խնձոր: Այդ 1000 կգ սերմերն ոգտագործվել են կոլտնտեսություններում պտղաբուծությունը զարգացնելու համար: Այդ 1000 կգ սերմերն իրենց մեջ պարունակում են մոտավորապես 34 միլիոն հատ սերմ, վորից թեկուղ 10 միլիոն հաջող աճելու դեպքում մեր կոլտնտեսություններն ու խորհանտեսությունները կստանան 10 միլիոն նոր ծառեր, վորոնցից ստացվելիք արդյունքները կլինեն հսկայական:

Բացի դրանից, անհրաժեշտ ե հիշատակել, վոր Հայանտառեստը

հավաքել և հանձնել և Սննդարդյունաբերությանը 1933 թվին 800 տոնն և 1934 թվին՝ 1600 տոնն զանազան անտառային վայրի ծառապտուղներ: Այս յերկու որինակը բավական է ապացուցելու ծառասերմերի՝ մեր տնտեսական կյանքի համար ունեցած խոշոր դերը: Այստեղ հեղինակը կանգ չի առնում անտառային բազմատեսակ ծառասերմերի ու ծառապտուղների՝ մեր տնտեսական կյանքի պահանջներին բավարարելու ոգտակար կողմերի վրա, ինչպես, որինակ՝ պտուղների և սերմերի վերամշակումից ձեմ, պավիղլաներ, մուրաբաներ, կոնսերվեր, խմիչքներ և այլն ստանալը: Նա իր ուսումնասիրության առարկան և դարձնում ծառասերմերը՝ վորսես անտառաբուծության, կանաչազարդման և պտղաբուծության զարդացման սկզբնաղբյուր: Նա կանգ չի առնում ծառասերմերի հատկությունների, վորակի և պատրաստման խնդիրների վրա: Պարզ ե, վոր նրա նպատակն է յեղել ընդգծելու կաղմակերպչական ու տեխնիկական այն խնդիրները, վորոնց միջոցով վերը թված բնագավառներում աշխատողները կարողանան կաղմակերպել ու ստեղծել անհրաժեշտ քանակով վորակակիս բարձր և հարուստ սորտիմենտներով անտառային սերմացին տնտեսություն:

Անտառային տնտեսության այս կարևոր բնագավառն ընդհանուր առմամբ շատ քիչ և ուսումնասիրված: Հետազոտողների համար այս բնագավառը դիտական աշխատանքների մեծ փորձադաշտ է: Այդ խընդիրը, մանավանդ Հայաստանի լեռնային պայմաններում, պիտի ասենք, վոր ավելի քան հետաքրքիր է, վորովհետեւ խիստ ընդգծված ուլյեփների բարդությունների հետևանքով միևնույն ծառատեսակները տարբեր պայմաններում հանդես են դալիս վորոշ ինքնուրույն նշաններով և այդ նշանները նկատելի յեն վոչ միայն տերևների, և սերմերի մորֆոլոգիական կազմի մեջ, այլև նրանց վորակի ու հատկությունների մեջ:

Այդ հատկություններն անտառադիտորին ըմբռնելու կարևորությունը անտառաբուծության այդ բնագավառում դրազվողների ակտուալ խնդիրներից մեկը պիտի լինի: Պլանային անտառկուրուրական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ է հաշվի առնել անտառացման պետական ու տեղային նշանակություն ունեցող պլանների, ինչպես նաև պտղաբուծության համար պահանջվող ծառասերմերի պահանջը, իսկ այդ պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է կաղմակերպել առանձին ծառատեսակների բերքատվության հաջորդականության, նրանց պատրաստման, տեղափոխման և պահպանման հնարավորությունների ուսումնասիրությունները և ծանոթանալ այդ աշխատանքների տեխնիկային: Մի քանի տարվա աշխատանքների

փորձը ցույց է տալիս, վոր այդ խնդիրներն զգալի դժվարություններ են առաջացնում անտառկուլտուրական աշխատանքների բնագավառներում և բացասական են անդրադառնում այդ աշխատանքների վրա:

Մեր անտառկուլտուրական աշխատանքների այդ խոշոր բացը վորոշ չափով ծածկելուն և այդ բնագավառում աշխատող ընկերներին ոգնելուն և նվիրված Ա. Ծովիկյանի այս աշխատությունը Յեվ Յերեվանի անտառանտեսությունը կարծում է, վոր հեղինակն իր ուժերը չի խնայել անելու այն, ինչ վոր այս կարճ ժամանակում հնարավոր եր:

Յերեանի անշառանտեսությունը չի պնդում, վոր այս աշխատությունն իր ծավալով և շոշափած հարցերով սպառիչ պատասխան և տալիս անտառային ծառասերմերի անտեսության առաջնագնած բոլոր խնդիրներին և հրատապ հարցերին: Ինժեներ-անտառագետ Ծովիկյանի այս աշխատությունը Հայաստանի պայմաններում առաջին փորձն և չափազանց գնահատելի յե այն տեսակետից, վոր հեղինակը հնարավորության սահմաններում դրված հարցերը բղխեցրել և մեր յերկրի պայմաններից, հաշվի առնելով մեր լեռնային անտառների սպեցիֆիկ հատկություններն ու ոգտագործելով մեր անտառկուլտուրական աշխատանքների փորձը:

Յերեանի անտառանտեսությունը հավատացած է, վոր այս գրքով զգալի չափով ոգնած կլինի մեր պրակտիկ աշխատող ստորին և միջակ պերսոնալին ու կոլտնտեսություններում անտառացման և կանաչադրդման աշխատանքների դեկավարող բրիգադներին իրենց առորյա պրակտիկ աշխատանքների ամենաանհրաժեշտ հարցերում, տալով մեր լեռնային պայմաններին համապատասխանող կոնկրետ ցուցումներ:

Յերեվանի անտառանտեսության դիրեկցիոն

# ԺԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

Ծառատեսակների բազմացման սկզբնաղբյուրը հանդիսանում են ծառասերմերը։ Ծառատեսակներն իրենց բնույթով ոժտված են սերմարտաղրողականության ունակությամբ։

Սերմերը յերաշխիք են ոգտագործված անտառային տարածությունների բնական ու արհեստական աճի վերականգնման, ինչպես նոր տարածությունների անտառացման համար. այդ իսկ պատճառով ել անտառային սերմաբուծության գործի ճիշտ կազմակերպումը խիստ անհրաժեշտ է։

Անտառանյութերի աճող պահանջը տարեց-տարի կրճատում և անտառային տարածությունները և նրանց վրա յեղած փայտեղենների պաշարը։ Անտառային տնտեսության առաջ խնդիր ե դրվում ապահովելու հատվող անտառային տարածությունների բնական կամ արհեստական աճն այն վայրերում ու այն չափով ու այն ծառատեսակներով, վորոնք կարևոր են մեր ժողովրդական տնտեսության ընդհանուր շահերի տեսակետից, և ստեղծելու անտառային նոր տարածություններ այն վայրերում, վորտեղ նրանք չկան, սակայն վորտեղ նրանց ստեղծելու կարիքն զգացվում է յերկրի արտաղրողական ուժերի զարգացման համար։ Այդ տեսակետից անտառային տնտեսության առաջ հրամայական պահանջ ե դրվում լայն չափերով ոգտագործելու ծառասերմերը, պատրաստելով համապատասխան վորակի ու քանակի հարուստ սորտիմենտ տարբեր նպատակաղրույթների համար։

Ծառատեսակների վերաճումը և բազմացումը տեղի յե ունենում առհասարակ և գլխավորապես սերմերով, սակայն մեր տերեւավոր ծառատեսակների մեծ մասը հաջողությամբ վերաճում ե վեգետատիվ միջոցով, տալով բնաընձյուղներ և արմատաընձյուղներ (շիվեր)։ Բացի վեգետատիվ միջոցով վերաճելուց, մի շարք ծառատեսակների բազմացումը կատարվում է կտրոնների տնկումով (շիվերի), ինչպես, որինակ բարդի, ուռի և այլն, վորոնց շիվերը տնկելով՝ արմատակալում են և մեծանալով՝ ծառությունում։

Անտառահատումից հետո մի շարք տերեւավոր ծառեր (կաղնին, լորին, թղկին, կաղամախին, և այլն) մեծ հաջողությամբ վերաճում են

վեգետատիվ միջոցով, տալով նոր ընձյուղներ, վորոնք միանգամայն ապահովում են տվյալ հատատեղերի աճը։ Սակայն վերաճի այդ ձևնի իր հերթին մի շարք թերություններ, և մենք մեր անտառանտեսավարության միջոցառումներով միայն հազվագյուտ դեպքերում և հատուկ նպատակների համար պիտի դիմենք այդ մեթոդին։ Անտառագիտության պրակտիկան գիտե, վոր այդ մեթոդը չի ապահովում բարձրաբուն, յերկարակյաց, առողջ և տեխնիկապես արժեքավոր ծառուների առաջացումը։ Հայտնի յենակ այն, վոր հասակավոր և տարիքից անց, ծերացող ու ծերացած ծառերի ընձյուղատվության ընդունակությունը սերնդից սերունդ ընկնում ե, միևնույն մայր արմատների վրա առաջացող նոր սերունդը հյուծում ե այդ արմատները և արմատների ծերության հետևանքով հիվանդության ու ֆըտման հակումներն անդրադառնում են նրանց վրա առաջացած նոր ընձյուղների վորակի վրա, վորոնք լինում են շատ թուլակազմ և յենթակա դանաղան վասսատուների հարձակման ու հիվանդացման։

Ահա թե ինչու ընձյուղի առաջացմամբ առաջացած ծառուներն անհամեմատ ավելի կարճակյանք են և վատորակ, քան թե սերմերից առաջացած ծառուները։

Այդ հանգամանքն անտառագիտությանը վաղուց ե հայտնի, և շինարարության համար լավորակ ծառուտ ստանալու նպատակով անտառագետները ձգտում են սերմերի միջոցով ստանալու, այսպես ասած, բարձրաբուն ծառուտ։ Դրա համար ել ծառասերմերից առաջացած ծառուտն անտառագիտության մեջ կոչվում ե բարձրաբուն ծառուտ, իսկ այդ կարգի տնտեսությունը կոչվում ե բարձրաբուն տնտեսություն։

ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Պլանային և մեծ չափերով անտառկուլտուրական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ են մեծ քանակությամբ այնպիսի ծառատեսակների սերմեր, վորոնց կուլտուրաներին զարկ են տրվելու Պակայն յուրաքանչյուր տարի պահանջվելիք բոլոր տեսակների ծառասերմերը բավարար քանակությամբ ձեռք բերել հնարավոր չե, վորովհետեւ մեր ծառատեսակների ղղալի մասը յուրաքանչյուր տարի բերք չի տալիս: Նրանք պտղաբերում են (սերմ են տալիս), այսպես ասած, պտղաբեր տարիներին: Պտղաբերությունը տարբեր ծառատեսակների համար, տարբեր հողակլիմայական պայմաններում տարբեր ընդունակություններով և տարբեր հաջորդականությամբ ե կատարվում:

Ահա թե ինչու չափազանց կարենք ե ուսումնասիրել ու հավաքել անհրաժեշտ տեղեկություններ և վորոշել տարբեր ծառուտներում, տարբեր հողակլիմայական պայմաններում պտղաբերության հաջորդականության ժամանակամիջոցը և մեկ միավոր տարածության վրա ծառասերմերի քանակն ու սպասվելիք սերմատվության ճիշտ գնահատականը:

Մեր խիստ ընդգծված լիոնային ռելյեֆի պայմաններում (մակերեսի կտրտվածությունները), վորպես հետևանք, նույնքան խայտրղետ են մեր ծառուտների կազմը, հասակը, բերքատվության հաջորդականությունը և այլն: Այդ խոկ պատճառով ել տարբեր ծառատեսակների սերմնատվության հաջորդականությունն ուսումնասիրելու համար պահանջվում ե յուրահատուկ մեթոդների կիրառում, ըստ վորում մեթոդների ընտրությունը պիտի բղխի հետապնդվող նպատակի ընույթից: Ահա թե ինչու այդ խնդրում կիրառվում են տարբեր մեթոդներ, վորոնց ծանոթանալու համար անհրաժեշտ ե մի փոքր կանգ առնել:

ՖԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՑՈՒՄՆԵՐ

Այս մեթոդի իմաստը կայանում է նրանում, վոր տվյալ անտառամասում և ծառուտում կազմակերպում են հատուկ դիտումներ և ժամանակի ընթացքում համապատասխան անկետային ձևով կամ որպերով արձանագրում են այն բոլոր արտաքին յերեվույթները (ողերենութարանական և այլն), վորոնք այսպես կամ այնպես աղղում են սեր-

մատվության հաջորդականության, քանակի, վորակի և ժամանակամիջոցի վրա:

Նույնպիսի ձեերով արձանագրվում են ծառատեսակների ծաղկելու և սերմերի զարգացման առանձին ետապների ժամանակամիջոցներն ու փոփոխությունները և նրանց վրա ներգործող ազդակները:

Մի կողմից՝ այդպիսի դիտողություններով հավաքված փաստերի հարուստ նյութերի մշակումը, մյուս կողմից՝ տեղական հասակավոր ազգաբնակչության հարցաքննումով, ինչպես նաև անտառային տնտեսություններում ըստ տարիների յեղած արխիվային տվյալներով, պտուղների և սերմերի մթերման ու բացթողման մասին գոյություն ունեցող փաստաթղթերով հնարավոր և մի շարք տարիների համար վորոշել թե վոր տարիներն են այս կամ այն ծառատեսակի սերմերի բերքի առատ տարի յեղել և նրանց հաջորդականության ժամանակամիջոցը: Այսպես, որինակ՝ Հայաստանում վերջին տարիներն զգալի աշխատանք ե կատարված մթերող որդանների կողմից, վորոնք մթերել են բավական քանակությամբ տանձի, հոնի, խնձորի, հաճարենու, ընկուզենու, հացենու, կաղնու և այլն ծառատեսակների պտուղներ ու սերմեր: Նրանց տվյալները կարող են վորոշ որիենտիր ծառայել այդ խնդրի լուծման համար: Այդպիսով, մի շարք տարիների ուշադիր դիտումներով, հարցումներով, փաստերի հավաքումով և մշակումով հնարավոր և վորոշել տվյալ անտառամասի կամ ծառուտի պտղաբերության հաջորդականությունը:

Քանի վոր դիտումների ու փաստերի հավաքումով հնարավոր և ծառասերմերի չափը վորոշել աչքաչափի մեթոդով, հետևաբար սերմատվության քանակի աստիճանը դարձյալ վորոշվում ե աչքաչափի մեթոդով, և սերմատվության չափն ըստ տարիների տարբերելու համար զանազան հետազոտողներ բերքատվության չափը վորոշում են հետեւվյալ կերպ:

0. Անբերք տարի—յերբ կոներ ու սերմեր բոլորովին չեն լինում:

1. Շատ վատ, բիշ բերք—յերբ անտառի յեղերքներում կամ ներսում շատ քիչ ծառերի վրա շատ քիչ քանակությամբ պտուղներ կամ սերմեր կան:

2. Թույլ բերք—յերբ անտառի յեղերքներում և անտառի ներսում իրարից ազատ կանգնած ծառերի վրա բավարար և համաչափ կերպով սերմեր ու պտուղներ կան, իսկ անտառի ներսում աճող ծառերի վրայի բերքը թույլ ե:

3. Միջին բերք—յերբ անտառի յեղերքին և առանձին-առանձին ազատ կանգնած ծառերի վրա բավական քանակությամբ, իսկ միջա-

հասակ ու հասակավոր ծառուտներում բավարար չափով սերմեր ու պտուղներ կան:

4. Լավ բերք—յերբ ծառուտների յեղերքին և առանձին, ազատ կանգնած ծառերի վրա առատ, իսկ միջին ու հասունացած հասակ ունեցող ծառուտներում բավարար սերմեր ու պտուղներ կան:

5. Եռտ լավ բերք(առատ)—յերբ անտառի յեղերքում առանձին ու ազատ կանգնած ծառերը, ինչպես նաև անտառի մեջ բոլոր ծառերն առատ սերմեր ու պտուղներ ունեն:

Բերքատվության աստիճանը աչքաշապիի մեթոդով վորոշելու ու դնահատելու համար, յեղած բոլոր կասիֆիկացիաներից վերը բերված կլասիֆիկացիան ամենից շատ ե համապատասխանում անտառում կամ ծառուտներում տեղի ունեցող յերեռութներին, չնայած վոր այս կլասիֆիկացիան ունի և իր թերությունը: Այսպես, որինակ՝ ամենաառաջին կետը—օ՞ն, ըստ վորի բերք բոլորովին չի լինում, հակառակ դրան՝ մենք պիտի ասենք, վոր յերբեք ել այնպիսի տարի չի լինում, վորպեսզի բերք բոլորովին չլինի, միշտ ել աննշան քանակությամբ բերք լինում եւ:

Այսպիսով ֆենոլոդիական մեթոդը հենված ե դիտողությունների ու աչքի չափի ու փորձի վրա, հետեաբար իր սլարդության ու հեշտության հետ միասին ունի իր բացասական կողմը—այն և՛ վհչ ամեն դեպքում հնարավոր կլինի որյեկտիվ կերպով և ճիշտ վորոշել բերքատվության չափը: Հետեաբար խիստ կարիք ե զգացվում այդ մեթոդը ճշտելու: Սակայն, իր թերություններով հանդերձ, ֆենոլոգիական մեթոդը մեր պայմանների համար առայժմս ավելի մատչելի յեւ և հեշտ իրազործելի, և մեր անտառային տնտեսություններն այդ մեթոդը կիրառելու համար ավելի հնարավորություններ ունեն, քան մի այլ մեթոդ:

## ԱՍՏԻՍԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴ

Այս մեթոդի եյությունը կայանում ե նրանում, վոր անտառային տնտեսությունների ծառասերմերի ու պտուղների պատրաստման և, վորպես կողմնակի արդյունք՝ տոմսերով բաց թողնված հաշվետության մատերիալների հիման վրա կատարում են ընդհանուր հաշվառում և վորոշում են, թե վոր տարիներում են այս կամ այն ծառատեսակների սերմեր շատ հավաքված յեղել:

Այս մեթոդով վորոշում են առանձին ծառասերմերի քանակական չափը վորոշ տարածության վրա: Ճիշտ ե, այս մեթոդն արտաքուստ թվում ե, թե ավելի ուսակ ե ու ճիշտ, մանավանդ վոր գործ ունի կոնկրետ թվերի հետ, վորոնք ստացվում են անտառնտեսության ար-

խիմիկարից, բայց այս մեթոդի բացը կայանում է նրանում, վոր յերբեք  
ել ծառասերմերի լրիվ բերքը չի հավաքվում և վորպես այդպիսին լրիվ  
չի յենթարկվում հաշվառման, վորպեսզի հնարավոր լինի այդ տվյալ-  
ներով վորոշելու տվյալ ծառուտի բերքի ճիշտ քանակը:

Հետևաբար, այս մեթոդով ձեռք բերվող տվյալները կարող են  
ոգտագործվել միայն հավաքված բերքի չափը վորոշելու համար և վոչ  
թե բերքի ճիշտ չափը վորոշելու համար: Բացի վերը թված յերկու  
մեթոդներից, գոյություն ունեն ծառերի սերմատվության չափի աստի-  
ճանները վորոշելու համար մի շաբք այլ մեթոդներ ևս, ինչպես, որի-  
նակ՝ սոճենու և այլ ասեղնավոր ծառերի կոները համատարած հաշվի  
առնելու մեթոդը, պրոֆ. Նեստերովի մեթոդը, մողելի ծառերի սերմա-  
տվության հաշվառման և այլն մեթոդներ, վորոնք ավելի բարդ են և  
նրանց իրազործումն ավելի մեծ դժվարությունների հետ և կառված  
ու պահանջում ե ավելի շատ ծախսեր ու ժամանակ, վորի համար մենք  
դրանց վրա կանգ չենք առնում: Այսպիսով, ուրեմն, բերքատվության  
ճիշտ հաշվառումով կալայմանավորվի ծառասերմերի և սլլանավորման  
պատրաստման գործն ու նրանց իրականացման հնարավորությունը,  
հետևաբար՝ անտառկուլտուրական աշխատանքների ծավալման մաս-  
շտաբը:

---

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՆԹԱ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԺԱԿՏՈՐՆԵՐԸ

Անտառների արհեստական ու բնական վերաճն ու բաղմացումը ժառանակների միջոցով կատարելու համար անհրաժեշտ ե համապատասխան քանակի ու վորակի (ծլելու ընդունակ) զանազան ծառասերմեր ունենալ: Իսկ համապատասխան վորակի ու քանակի ծառասերմերի առաջացումն ու գոյությունը պայմանավորվում են մի շարք ֆակտորներով, ինչպես, որինակ՝ լույսի, ջերմության, խոնավության, հողի և իրենց՝ ծառատեսակների ներքին կենսաբանական հատկություններով:

Այդ տեսակետից անտառային սերմարուծության մեջ չափազանց կարեռ ու հետաքրքիր գլուխ հանդիսանում ե ծառատեսակների բերքատվության հաջորդականության որինաչափություններն ու այդ որինաչափությունները պայմանավորող ֆակտորների ուսմունքը: Այդ խնդիրներին ծանոթանալու համար անհրաժեշտ ե նախեառաջ վորոշել, թե ինչպես ե հասկացվում «ծառասերմերի բերքատվություն» տերմինը: Պրոֆ. Ն. Պ. Կորրանովը բերքատվությունը ձևակերպում է հետեւյալ կերպ: «Բերքատվություն — դա այն հատկությունն ե, վար գալոց ե տալիս, թե վարքանուվ ե բաւյսն իրագործել սեռական բազմացումը» և դանում ե, վոր «բերքատվության չափը կարող ե համարվել միայն նորմակերպով զարգացած սերմերի բանակը, այսինքն՝ սերմերը սաղմերով»:

Բացի պրոֆ. Ն. Պ. Կորրանովի ձևակերպումից, անտառային գրականության մեջ հայտնի յեն նաև մի շարք այլ ձևակերպումներ, ինչպես, որինակ՝ պրոֆ. Տոլսկու, Գումանի, Նեստերովի, Սոբոլեվի և այլնի ձևակերպումները, վորոնք հիմնականում համարյա թե միևնույն բանն են կրկնում:

Անտառային տնտեսության մեջ շատ հաճախ բերքատվություն տերմինի տակ հասկանում են ծառասերմերի, կոների կամ պտուղների քաշը կամ ծավալը՝ մեկ ծառից կամ մի խումբ ծառերից, կամ ել տարածության մեկ միավորից, այսպես, որինակ՝ մեկ հեկտարից, նայած, թե ինչի մասին ե խոսքը:

Բերքատվությունը բնորոշող ձևակերպումներից ավելի պրակտիկ նշանակություն ունի պրոֆ. Ն. Պ. Կորրանովի ձևակերպումը: Սակայն չպիտի մոռանալ, վոր բերքատվության հետ շատ սերտ կերպով կապված ե նաև ծաղկի բերքը, այսպես ասած, ծաղկատվության տարին:

Վաղեմար Գուստավովիչ Կապալերը՝ անդրադառնալով այս խնդրին, ասում են, «Կարենը ե վորոշել, թե վոր տարին համարել բերքի տարի։ ծաղկելու տարին, սերմերի ու պտուղների հասունանալու տարին, սերմերի թափելու տարին, թե նրանց հավաքելու տարին»։ Տերեավոր ծառատեսակների մեծ մասի և փշատերեսավորների մի քանիսի ծաղկելը, սերմերի կամ պտուղների հասունանալն ու թափելը կատարվում ե մի տարում և այդ դեպքում, իհարկե, կասկած չի կարող լինել։

Սակայն փշատերես ծառատեսակների մեծ մասի նկատմամբ այլ կերպ ե դրությունը։ Որինակ՝ սովորական սոճենու ծաղկելը տեղի յեւ ունենում մի տարում, սերմերի ու կոների հասունացումը՝ յերկրորդ տարում, իսկ թափելը և հաճախակի-նրանց հավաքելը՝ յերրորդ տարում, և Վ. Գ. Կապալերը գտնում ե, վոր բերքի տարին պիտի համարել սերմերի հասունանալու տարին։

Ծառերի պտղատվությունը մի կարենը ակտ ե նրանց կյանքում։ Նրանք սկսում են պտղաբերել միայն այն ժամանակ, յերբ հասնում են վորոշ հասակի և յերբ իրենց մեջ կուտակում են անհրաժեշտ քանակությամբ համապատասխան նյութեր, վորոնք այլև չեն գնում ծառի աճն ուժեղացնելու համար և մնում են վորպես պաշար, վորոնք ծառերի կողմից ոգտագործվում են պտղաբերության համար։

Բնութագրելով բերքատվությունն ու պտղաբերությունը, ծանոթանանք արտաքին և ներքին այն ֆակտորների հետ, վորոնք պայմանավորում են պտղաբերության ժամանակը, հաջորդականությունը և բերքատվության առատության չափը։

Այդ բնագավառում յեղած ռուսական, գերմանական ու շվեյցարական բազմաթիվ ուսումնասիրություններն ապացուցում են, վոր բերքատվության ժամանակը, հաջորդականությունը, ինչպես և առատությունը պայմանավորող արտաքին ամենակարենը ու առաջին տեղը բոնող ֆակտորներից մեկը կլիման եւ այդ կլիմայական պայմաններում՝ բուսաճման պայմանները և տվյալ ծառուտի ընդհանությունը։ Բայց վորովհետեւ բացի արտաքին ֆակտորներից, բավական ուժեղ ֆակտոր են նաև ծառատեսակների իրենց ներքին կենսաբանական հատկությունները, այդ իսկ պատճառով ել վորոշ հաջորդականությունը պահպանելու համար մենք սկսենք արտաքին ֆակտորների տեսությունից։

Արտաքին ֆակտորներ տերմինի տակ պիտի հասկանալ ծառատեսակների համար յեղած կոմպլեքս պայմանների միջավայրը, վորի մեջ տեղի յեւ ունենում ծառատեսակների աճը և բազմացումն ու պտղաբերությունը։

## Կ Լ Ի Մ Ա Ն

Դարերի ընթացքում յերկրագործությամբ զբաղվող ժողովուրդները նկատել են, վոր տաք, խոնավ և մեղմ կլիմա ունեցող տարիներին բուսականության բերքն ավելի առատ է յեղել, քան չորային և ցուքա տարիներին:

Հին պատմագիրների և ճանապարհորդների հիշատակությունների մեջ կան տվյալներ, վորոնք վկայում են իրենց ճանապարհորդած տաք, մեղմ և խոնավ կլիմա ունեցող յերկրների անհամեմատ առատաքերության մասին:

Անտառագիտական մտքի զարգացումը վաղուց և իր դիտողությունների առարկա դարձրել և իր ուսումնասիրության արբիտը քաշել ծառատեսակների պտղաբերության վրա ազդող արտաքին ու ներքին ֆակտորները:

Այդ բնագավառում յեղած ուսումնասիրությունների ի մի ամփոփումը թույլ է տալիս մեղ ասելու, վոր կլիմայական ելեմենտներից (մթնոլորտային տեղումներից և քամիներից, ջերմությունից և այլն) ամենակարևորը ջերմությունն է։ Սակայն ջերմության քանակը, տեղությունն ու տատանումները տարբեր ծառատեսակների համար լինում են տարբեր և տվյալ ծառատեսակի համար նորմալ ջերմությամբ և դիմավորապես պայմանավորվում պտղաբերության քանակը, չափն ու վորակը։

Այդ տեսակետից Խորհրդային Հայաստանի լեռնային խայտաբղետ անտառները չափազանց բնորոշ և հարուստ նյութեր են մատակարարում հետազոտողին:

Մեր խիստ ընդգծված ռելյեֆին հատուկ՝ իրենց կազմով ու հասակով տարբեր տիպի ծառուտները, տարբեր բարձրության գոտիների և տարբեր սարալանջների վրա միենույն ծառատեսակների պտղաբերության հասակը, բերքատվության չափի հաջորդականության ժամանակամիջոցը և վորակը խիստ կերպով տարբերվում են։

Այսպես, որինակ՝ կաղնին ցածր, հարավային տաք լանջերի վրա, կլիմայական խստություններից պաշտպանված՝ ավելի վաղ հասակումն և սկսում պտղաբերել և բերքատվությունն ավելի հաճախ և կրկնվում, քան թե բարձր դոնայում, հյուսիսային ցուրտ սարալանջերի վրա։

Հարավային տաք լանջերի վրա հաջողությամբ աճող հոնին և բոխին ավելի հաճախ առատ բերք են տալիս, քան թե ուրիշ լանջերի վրա աճած այդ նույն ծառատեսակները։

Բուսական, շվեյցարական, գերմանական բաղմաթիվ ուսումնասիւ-

լություններն ապացուցում են այն, վոր վորքան դեպի խստաշունչ կյուսիս ենք գնում, այնքան սոճենին՝ վորպես ամենատարածված ծառ, ավելի յերկար ընդհատումներով, ավելի քիչ և ավելի ուշ հասակումն ե պտղաբերում:

Մեզ ծանոթ ծառատեսակներից ընկուղենին կոտայքի շրջանում լավ պտղաբերում ե, բայց կոտայքին սահմանակից Ախտայի շրջանում, վորն ավելի բարձր ե և ցուրտ, պտուղներ չի տալիս:

Ալահվերդու շրջանի անտառներում ընկուղենին ամենուրեք պտղաբերում ե, բայց Ստեփանավանում՝ վոչ: Այս փաստերն ապացուցում են, վոր պտղաբերության ժամանակի, հաջորդականության, առատության և վորակի համար վճռական դերը խաղում ե ջերմությունը:

Ակներե և, վոր տարբեր ծառատեսակների համար ջերմության տարեկան քանակը և տատանման աստիճանները մի դեպքում կարող են լինել բավարար և նրանց պահանջի համար նորմալ, մյուս դեպքում կարող են լինել մինիմալ, վորը չի տա անհրաժեշտ եֆեկտ, և յերրորդ դեպքում կարող ե լինել չափազանց, վորը բացասական հետևանք կտա:

Հետեւաբար, վորքան կլիման խիստ ե, այնքան պտղաբերությունն ուշ հասակումն ե լինում, բերքատվության հաջորդականության ժամանակամիջոցը յերկար ե լինում և ուշ և կրկնվում, բերքատվության չափն ավելի քիչ ե լինում և վորակը՝ ավելի վատ:

Կլիմայական խիստ պայմաններում աճած ծառասերմերը մեծ մասամբ փուչ են լինում, կիսահասած և ծլունակության տոկոսը շատ ցածր ե լինում:

Պրոֆեսոր Ա. Պ. Տոլսկու և Ռենեվալի ուսումնասիրությունները հանգում են այն յեղրակացություններին, վոր կլիմայական անբարենպաստ պայմանների շնորհիվ ծառերի ծաղկման ունակությունն իջնում ե՝ և կրծատվում իգական ծաղկատվությունը: Հաճախակի ցուրտ վայրերում նկատելի յե, վոր սերմերի զգալի մասը լինում է փուչ, այսպես, որինակ՝ Ծաղկաձորի անտառների ամենավերին զոնայում աճող կեչու ծառերն ավելի շատ փուչ սերմեր են տալիս, քան թե ներքին զոնայում աճող կեչու ծառերը:

Սակայն պիտի նկատի առնել նաև այն, վոր շատ հաճախ փուչ լինելու հանգամանքը բացատրվում է պարտենոկարպիկ<sup>\*)</sup> զարգացման հետեւանքով:

<sup>\*)</sup> Պարտենոկարպիկ զարգացում — յերբ պտուղն առաջանում է չըեղթնագործված ծաղիկներից, վորոնք ծլունակությունից զուրկ են:

## ԾՈՎԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՈՒՑ ՈՒՆԵՑԱԾ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ

### ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հայոնի յե, յերկրագնդի ամենացածր մակերեսը կամ վայրը համարվում է ծովի մակերեռույթը. ինչքան մենք ծովից հեռանում ենք և բարձրանում դեպի լեռնագագաթները, այնքան ել մենք ծովի մակերեռույթից բարձրանում ենք դեպի վեր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր ծովի մակերեսվույթից շատ բարձր լեռնալանջերի ու լեռնագագաթների վրա, մանավանդ ցուրտ գարուն ունեցող հյուսիսային թաց և խոնավ լանջերի վրա, ծառերն սկսում են պտղաբերել ավելի ուշ հասակում, առատ պտղատվություն չի լինում, պտղատվության հաջորդականության ժամանակամիջոցն ավելի յերկար և և կիսահաս ու փուչ սերմերի տուկոսն անհամեմատ ավելի շատ ե, քան թե ցածր վայրերում: Հետևաբար, վորքան ծովի մակերեռույթից բարձրանում ենք, այնքան միևնույն ծառատեսակների սերմերն ավելի քիչ են զարգացած, քաշով ավելի թեթև են և ծլելու համար քիչ ընդունակ:

Բնության մեջ շատ հաճախ կարելի յե նկատել, վոր այս կամ այն վայրում բնական կամ արհեստական միջոցներով աճած ծռուտեսակները, չնայած բոլորովին չեն պտղաբերում կամ հազվագյուտ դեպքում են պղտաբերում, սակայն պտուղներն այն աստիճանի չեն հասունանում, վորակեսղի ընդունակ լինեն ծլելու: Այդ հանգամանքը բացարկում է նրանով, վոր տվյալ հողակլիմայական պայմաններում տվյալ ծառատեսակի պտղաբերության համար մինիմալ պահանջներն անդամ բացակայում են:

Այսպես, որինակ՝ կենինդրադի պայմաններում արհեստականորեն աճեցրած ընկուղենին և հաճարենին չեն պտղաբերում, իսկ մի քիչ դեպի հարավ՝ թեպետ և պտղաբերում են, բայց չեն հասունանում:

Հայաստանի բարձր լեռնային պայմաններում, վորտեղ կլիմայական պայմանները խիստ են, վորոշ ծառատեսակներ յերկար ընդմիջումներով և կամ վատ վորակի սերմեր ու պտուղներ են տալիս:

Այսպես, որինակ՝ Ծաղկաձորի անտառների յենթալպիական շրջանի (վերին մասը) անտառներում աճող կեչու և թղենու ծառասերմերի մեծ մասը փուչ և և անտառկուլտուրական նպատակների համար վոչ պիտանի:

Այդ նույն Ծաղկաձորում և դեպի Սևան թեպետ դժվարությունը աճում և ընկուղենին, բայց չի պտղաբերում: Սակայն պիտի նկատել, վոր ծովի մակերեռույթից միևնույն բարձության վրա և յերբեմն

ավելի բարձր տեղում յեղող այս կամ այն ծառատեսակը կարող է հա-  
ջողությամբ աճել ու պտղաբերել, իսկ մի ավելի ցածր վայրում՝ վոչ:

Այսպես, որինակ՝ Գեղարդի վանքի շրջակայքում, վորը ծովի  
մակերևույթից ավելի բարձր է, քան թե Ստեփանավանը, ընկուզենին  
մեծ հաջողությամբ աճում և առատ պտղաբերում է:

Ավղանստանում ընկուզենին աճում ու պտղաբերում է մինչև  
3000 մետր ծովի մակերևույթից բարձր լեռնալանջերի վրա, բայց մեղ  
մոտ յերկու հազար մետրի վրա շատ մեծ դժվարությամբ է  
աճում:

Այդ հանգամանքը հավանականորեն բացատրվում է նրանով,  
վոր, նախ՝ այդ ծառերն աստիճանաբար ընտելացել են տվյալ պայման-  
ներին և վոր, մյուս կողմից՝ չնայած միահավասար կամ ավելի բարձր  
վայր լինելու հանգամանքին, տարբեր վայրեր այս կամ այն պատճառ-  
ների շնորհիվ իրենց մեջ պարունակում են տվյալ ծառատեսակի աճ-  
ման ու պտղաբերության համար շտա քիչ բավարար պայմաններ:

Ստորև բերված աղյուսակը (ըստ Ենգլերի և Ցիզլարի) ցույց է  
տալիս, թե ինչ մեծ աղղեցություն և գործում ծառասերմերի քաշի վրա  
ծովի մակերևույթի բարձրությունը:

### Վորտեղից և վերցված սերմը

Բարձրու- թյունը մետր	Տեսակը	Քաշը կ. կ. գ.	1000 կ. կ. գ. կերպությունը	Համարական պայմանը
Հարավային Տիրու (ալպյան)	1585	4,27		
»      »      »	1753	5,36		
»      »      (Կարինայան)	1650	6,77		
»      »      »	1600	7,67		
Հյուսիսային Տիրու	1300	8,42		
»      »	1900	9,82		

Ըստ Ենգլերի 1000 հատ սոճենու սերմերի քաշն ունի հետևյալ  
պատկերը.

Ծովի մակ. 1700—1900 մետր բարձրության վրա 4,277—5,214 գրամ

»      » 500—800      »      » 6,519—7,820      »

Այս յերեսույթը մեր լեռնային պայմաններում ավելի յէ աչքի  
ընկնում:

Այսպիսով, ուրեմն, վորքան բարձրանում ենք դեպի լեռնագո-  
դաթները, այնքան կլիմայական պայմանները խստանում են և

\*) Տես Проф. Тольский — Основы лесокультурного дела в СССР, часть 1,  
Лесное семеноводство 1932 г., стр. 40.

նմանում հյուսիսային շրջանների կլիմայական պայմաններին, և պատահական չե, վոր մեր մի շարք բարձրաբերձ լեռնային անտառներում աճում են հյուսիսային անտառներին հատուկ սնձենին, կեռին, սալորա-կեռասը և այլն:

Անտառկուլտուրական աշխատանքների տեսակետից վերը թված դիտողությունները շատ խիստ կարեոր են, և ծառասերմերի պատրաստման խնդրում այդ դիտողություններն անհրաժեշտ ե հաշվի առնել:

## Հ Ո Ւ Յ Ս

Պտղաբերության ժամանակի, առատ բերքատվության հաջորդականության կրկնողության ժամանակամիջոցի, ինչպես նաև պտուղների ու սերմերի քաշի, ծավալի ու վորակի համար լույսը հանդիսանում է վճառական ֆակտորներից մեկը: Թույլ լույսի, հետեաբար և ածխաթթվուտի թույլ յուրացման դեպքում ստեղծվում են ավելի բարենպաստ պայմաններ աճեցողության, քան թե ծաղկելու համար: Լույսի առատության դեպքում, ընդհակառակը, ստեղծվում են բարենպաստ պայմաններ ծաղկելու համար:

Հայտնի յե, վոր հեռավոր հյուսիսային յերկրները բնորոշ են իրենց խստաշունչ յերկար ձմեռներով, կարճ ամառների կարճ վեգետացիոն ժամանակամիջոցով, տարեկան արևային լույսի ընդհանուր հանրագումարի քչությամբ, վորի հետեանքով և հիշյալ շրջաններում աճող ծառատեսակների սերմերն իրենց ծավալով, քաշով, ինչպես նաև պտղատվության հասակով, բերքի հաջորդականությամբ ու առատությամբ շատ խիստ տարբերվում են հարավային շրջաններում աճած այդ նույն ծառատեսակների պտղաբերության հաջորդականության ժամանակամիջոցից և այլն: Բազմաթիվ ուսումնասիրություններ (պրոֆ. Կոբրանով, Թոմիչով, Տոլսկի և այլն) հաստատում են լուսավորության և պտղատվության աստիճանների մեջ յեղած վորոշ կապը վոչ միայն տարբեր յերկրամասերի նկատմամբ, այլև միևնույն աշխարհագրական հողակլիմայական պայմաններում և միևնույն ծառուտներում. լուսավորվածության տարբեր աստիճանների աղղեցությունը պտղաբերության հասակի առատ բերքատվության հաջորդականության ժամանակամիջոցի, չափի ու վորակի համար հսկայական ե: Այսպես, որինակ՝ մեր հաճարենին, կաղնին, հացենին, թղկենին և այլն խիտ ծառատներում, վորտեղ բարձրահասակ ծառերի սաղարթները միանում են և մի ընդհանուր ծածկոց կազմում ու ստվերավորում են նրանց, ավելի ուշ, ավելի հազվադեպ, ավելի քիչ և ավելի ցածր վորակի սեր-

մեր ու պտուղներ են տալիս, քան թե այդ նույն պայմաններում աճող, բայց արևի լույսով առատ կերպով լուսավորված նույն ծռուտեսակները:

Լույսը՝ վորպես պտղաբերության վրա ազդող կարևորագույն գործոններից մեկը, ավելի ուժեղ է արտահայտվում այնպիսի ծռուտներում, վորտեղ ծառերն ըստ գիտնական կրաֆտի կլասիֆիկացիայի յեն խմբավորված։ Այս դեպքում 1-ին խմբին (կարգին) պատկանող ծառախումբը, վորի սաղարթները համաչափ և նորմալ են դարձացած ու լուսավորված, իր բերքատվության թե վորակով և թե քանակով 10—20 անգամ ավելի բարձր ե, քան թե 4-րդ և 5-րդ խմբին պատկանող ծառերը։

Բացի այդ, միևնույն ծառի սաղարթի տարբեր մասերի տարբեր ինտենսիվությամբ լուսավորվածության հետեանքով նրա բերքատվության չափն ու վորակը խիստ տատանվում են։

Սակայն վորոշ տարածության վրա, կենտրոնացված կերպով և մեծ չափերով ծառասերմերի պատրաստման համար առաջին խմբին պատկանող ծառախմբերն առանձին նշանակություն ունենալ չեն կարող, վորովհետեւ այդ խմբին պատկանող ծառերի քանակը շատ քիչ ե։ Այդ իսկ պատճառով ել բանվորական ու փոխադրական ուժի խնայողության և ծառասերմեր պատրաստելու ինքնարժեքի իջեցման տեսակետից վճռական նշանակություն ունեն 2 և 3-րդ խմբերին պատկանող ծառերը, վորոնք թեպետ ավելի քիչ են պտղաբերում, քան թե 1-ին կարգի ծառերը, սակայն վորոնք նորմալ ծառուտներում կազմում են 50—60%։ Այսպիսով, ուրեմն, ակնհայտ է դառնում լույսի դրական ազդեցությունը առատ և վորակով բարձր ծառասերմերի բերքատվության համար։ Հետեաբար, սերմերի պատրաստման ժամանակ պիտի ձգտել պատրաստելու սերմեր այն ծառերից, վորոնց սաղարթների ծավալը մեծ ե և բավարար չափով լուսավորված։

Այդ պատճառով ել նոսք ծառուտներում և ծառուտների յեղբերում բավարար չափով լուսավորված հատկենությունը և մենավոր ծառերն ավելի հաճախ և շատ են բերք տալիս, քան թե ծառուտի ներսի ծառերը։ Սակայն անհրաժեշտ է չմոռանալ այն, վոր չափից դուրս լուսավորվածությունը չոր կլիմայական պայմաններում, արևի կիզիչ ճառագայթների տակ բացասական և անդրադառնում բերքատվության չափի և վորակի վրա այն իմաստով, վոր ծաղիկները և պտուղները թույլ են դարձանում և չորանում են։

## ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Գարնանը, ծառերի ծաղկելու շրջանում, ջերմության աստիճանից ուժեղ տատանումներից ինչպես տերևները, նույնպես և ծաղիկները ցրտահարության են մատնվում, վորի հետևանքով ծաղիկները վոչընչանում են և բերքատվությունը քչանում ու վատանում ե:

### ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ

Ինչպես գյուղատնտեսական կուլտուրաների, նույնպես և անտառային ծառատեսակների բերքատվության համար չափազանց կարևոր դեր են խաղում մթնոլորտային տեղումները: Սակայն սխալ կլինի, յեթե պնդենք, վոր մթնոլորտային տեղումներն առհասարակ և ամեն դեպքում դրական դեր են խաղում ծառերի պտղաբերության համար: Այդ իսկ պատճառով ել անհրաժեշտ են մթնոլորտային տեղումների առանձին տեսակների դերը:

ա) Կարկօւտ .— Մթնոլորտային տեղումների այս տեսակը լեռնային անտառների պայմաններում ավելի վտանգավոր ե և շատ հաճախ կարկտի տեղումը դուզադիպում ե ծառատեսակների ծաղկման շրջանի հետ և կարկտահարության յենթարկում ծաղկի փոշիները և հնարավորություն չի տալիս բեղմնավորման պրոցեսների զարգացմանը: Սակայն կարկտահարության վտանգը միայն ծառածաղկման շրջանին չի հատուկ: Կարկտահարությունից տուժում են և ուղղակի վոչնչանում նաև կիսահաս և հասունացած սերմերն ու պտուղները:

բ) Անձրեվներ .— Մթնոլորտային տեղման այս տեսակն ընդհանուր առմամբ բարենպաստ ազդեցություն ե ունենում բերքատվության վրա, սակայն վաղ գարնանը, ծառերի ծաղկման շրջանում, հորդառատ անձրևները վողողում են, քշում ծաղկափոշիները և խանգարում բեղմնավորման պրոցեսին: Այդ յերեսույթը շատ ուժեղ արտահայտվեց 1936 թ. գարնան հորդառատ անձրևների ժամանակ:

### Ք Ա Մ Ի Ն Ե Բ

Քամիները ևս իրենց հերթին զգալի մնաս են՝ հասցնում ծառատեսակների բերքատվությանը: Ամենախոշոր հարվածը քամիների կողմից հասցվում է գարնան ծառածաղկման ժամանակ, յերբ ցուրտ և ուժեղ քամիներ են փչում և քշում են ու տանում ծաղկափոշիները, ծաղկի թերթիկները և շատ հաճախ պոկում են ու վայր դցում բեղմնավորման ու պտղատվության ամբողջ ապարատը, վորի հետևանքով և բեղմնավորում, հետևաբար և պտղատվություն չի լինում:

Հաճախակի փչող չորային քամիները վնասում են նաև կիսահատ ու հասունացած պտուղներին և սերմերին, մի կողմից՝ պոկելով ու քշելով նրանց և, մյուս կողմից՝ չորացնելով կամ թույլ չտալով պտուղներին ու սերմերին նորմալ մեծությամբ դարգանալու և հասունանալու:

## ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԵՐ

Անտառագիտության մեջ «հողային պայման» տերմինն անտառամման համար ավելի ընդարձակ հասկացողություն ունի և ընդհանքապես այդ տերմինի մեջ դրված կոմպլեքս հասկացողությունն եւ հողի քիմիական, ֆիզիկական, խոնավության և ջերմահաղորդման հատկություններն ու նրա արտադրողականության կարողությունը և այլն:

Այնքան, վորքան թված պայմաններով ե պայմանավորվում ծառությունների տիպը, կազմը, աճի ընթացքը և այլն, ուրեմն և անկասկած ե, վոր պտղատվության ժամանակի հաջորդականության կրկնողությունը և առատությունը պայմանավորված են հողային այդ կոմպլեքս պայմաններով: Վորքան լավ են հողային պայմանները, այնքան ել տվյալ ծառությունը տարբերվում ե իր բարձր արտադրողականությամբ, վոր անտառագիտական տերմինով ու լեզվով կոչվում ե բոնիտետ, և Սուբոլիկ, ֆոմիչնի ու ուրիշների ուսումնասիրություններն ապացուցել են, վոր բարձր բոնիտետի ծառերի սերմերն ավելի խոշոր ու ծանր են լինում:

## ՎՆԱՍԱՏՈՒԵՐ

Հայտնի յե, վոր ծառասերմերն ու ծառապտուղներն ունեն իրենց թշնամի վնասատուները, վորոնք յերբեմն մասսայական չափերով դարդանում ու տարածվում են անտառներում, այդիներում և այլն:

Միջատարանությունից և ֆիտոպատոլոգիայից հայտնի յե, վոր մի շաբք ծառատեսակներ ունեն իրենց հիմնական ու յերկրորդական թշնամի վնասատու միջատներ, սնկեր և բակտերիաներ: Վնասատուները հարձակվում են ծառերի տարբեր մասերի վրա, և նրանց պատճառած վնասները տարբեր բնույթ են կրում:

Վնասելով արմատներին, կեղևին, փայտի միջուկին, տերեններին, ճյուղերին, բողբոջներին, վնասատուները թուլացնում են ծառերի կենսական գործունեյությունը, խախտում են նրանց նորմալ կյանքը, հետեւքար, աղղում են նրանց սերմարտադրողական և սերմառաջացման պրոցեսների վրա: Հարձակվելով ծաղկափոշիների, ծաղկի թերթիկների

վրա, զիշնչացնում են նրանց, հետևաբար, վիշնչացնում կամ ել իջեցնում են ապագա ծառապտուղների և ծառասերմերի վորակն ու քանակը:

Միջատները պտուղների և սերմերի մեջ աճեցնում են իրենց ճիճուները, իսկ վերջիններս ել սնվելով պտուղների ու սերմերի հյութերով, քայքայում են նրանց և շատ հաճախ բոլորովին վիշնչացնում են կամ թուլացնում և անդիմացկուն դարձնում նրանց:

Հայտնի յե, վոր կաղնու, հացենու, թղկու և այլ սերմերի մեջ շատ հաճախ այս կամայն միջատի ճիճուներ են՝ տեղավորված լինում և այդ յերեսույթը յերբեմն այնպիսի մասսայական բնույթ ե կրում, վոր սերմերը բոլորովին վիշնչանում են և կամ նրանց ծլունակության տոկոսն իջնում և նվազագույն չափերի:

Համառոտակի բնութագրելով պտղատվության վրա բացասական ու դրական կերպով աղղող արտաքին ֆակտորները, այժմ անցնենք ներքին, այսինքն իրենց՝ ծառատեսակների կենսարանական հասկությունների նկարագրությանը, վորոնք այս կամ այն կերպ ուժեղացնում կամ դանդաղեցնում և նպաստում կամ խանգարում են բերքատվության սլրոցեսներին:

### Հ Ա Ս Ա Կ Բ

Պտղատվության վրա աղղող ներքին ամենակարևոր ֆակտորներից մեկը հասակն եւ ծառատեսակները, հակառակ գյուղատնտեսական հացահատիկային և այլն կուլտուրաներին, սկսում են պտղաբերել ավելի ուշ և տարբեր հասակներում: Բացի այդ, միևնույն ծառատեսակները տարբեր հողակլիմայական պայմաններում պտղաբերում են տարբեր հասակում:

Միևնույն հողակլիմայական պայմաններում, սակայն ծառութիւնաբեր պայմաններում աճած միահասակ ծառատեսակներն սկսում են պտղաբերել տարբեր հասակներում: Ուրիշ ծառերի սաղարթներից ստվերավորված, հետևաբար, արևի լույսից զրկված և ուրիշ ծառերի արմատների մրցումից ճնշված ծառերն սկսում են պտղաբերել ավելի ուշ, ավելի քիչ և վատորակ, քան թե աղատ աճած և ուրիշ ծառերի սաղարթների ու արմատների մրցման ճնշումից աղատ ծառերը:

Ոգտվելով այս խնդրին նվիրված մի շարք ուսումնասիրություններից և Հարավային յերկաթուղու շուրջը մի քանի տասնյակ տարիների ընթացքում ստեղծված դանաղան հասակի պաշտպանողական անտառային շերտերի (կուրսկ—Խարկով—Պոլտավա, Խարկով—Տագանրոդ), ապա Կույբիշևի յերկրի (միջին Վոլգայի) և Լենինգրադի շրջա-

կայքի անտառային կուլտուրաների վրա կատարած մեր դիտողություններից, ինչպես նաև Հյուսիսային յերկրի, Իվանովսկու մարզի, Կույբիշևի յերկրի, Լենինգրադի մարզի, Ռուկրախնայի և վերջին յերկու տարիներում Հայաստանի լեռնային անտառների վրա կատարած մեր դիտողությունները թույլ են տալիս մեզ անելու հետեւյալ յեղբակացությունները.

ա) Արհեստական անտառներում, վորտեղ ծառերն աճեցված են համաշափ հեռավորությունների վրա և համեմատաբար ավելի լավ են լուսավորված, քան թե տարրեր հասակի և վոչ համաշափ հեռավորության վրա աճած բնական անտառներում, ծառերն ավելի վաղ հասակում են սկսում պտղաբերել և պտղաբերող ծառերի թիվն ավելի շատ է լինում, քան թե բնական անտառներում: Այսպես, որինակ՝ 27,28 թվերին տնկած սոճենու կուլտուրաներն Արագածում իրենց գոյության 8—9-րդ տարում սկսեցին պտղաբերել: Հարավային յերկաթղթի շուրջն ստեղծած անտառային պաշտպանողական շերտում (Իլովայկայի, Դերալցովի և Տագանրոգի շրջաններում) հացենիները 7—8 տարեկան հասակում արդեն սկսել եյին պտղաբերել:

բ) Պտղաբերող ծառերի թիվը շատանում և հասակի հետ միատեղ և սերմերի վորակը լավանում և ու նրանց հատկություններն ավելի աշքի յեն ընկնում նրանց միջին հասակում, վորի հետեւանքով սերմերի քաշը շատանում և և վորակը լավանում: Դա տեղի յե ունենում, այսպես ասած, հասունության հասակում, յերբ նրանք տալիս են մաքսիմում չափերով սերմեր և զգալի ժամանակ մնում են այլ աստիճանի վրա, ապա կամաց-կամաց իջնում են: Բայց պտղաբերությունը շարունակում է մինչև խոր ծերություն և մինչև մահ: Իսկ ավելի վաղ և ավելի ծերացած հասակում այդ հատկությունները պակասում են:

Ավելի զարգացած, բարձր ու փարթամ սաղարթ ունեցող ծառերի և նրանց արմատների ճնշվածության տակ գտնված ծառերն ավելի ուշ, ավելի քիչ և ավելի վատորակ սերմեր են տալիս:

Բացի վերոհիշյալ յերեւյթներից, ծառատեսակների՝ կյանքում անտառկուլտուրական գործի համար կարենը են նաև հետեւյալ յերեւյթները.

ա) Ծառերի պտղաբերության՝ հասակը սովորաբար հասնում է, նրանց, ըստ բարձրության աճի, կուլմինացիայից հետո:

բ) Իրեւ հետեւթյուն նախորդ դրույթի՝ արագած ծառատեսակները — բարդենիները, ուռենիները, ամերիկական թղկին, սպիտակակացիան, ընկուղենին և այլն — չու չաղ հասակում և առաջ ո

հաճախ են պաղաբերում, քան թե դանդաղ աճող ծառերը, ինչպես, որինակ՝ կազնին, հաճարենին և այլն:

Արագաճ ծառատեսակները՝ լինելով լուսասեր, պաղաբերության պրոցեսին ավելի վաղ են հասնում, քան թե ստվերատար կամ, ինչպես ասում են, ստվերասեր ծառատեսակները, ինչպես, որինակ՝ հաճարերին:

գ) Հատման հետևանքով առաջացած բնաընձյուղներ — կամ արմատաընձյուղները, վորոնք սնվում են զարգացած մալր արմատներից, ավելի արագ են աճում, քան թե սերմերից առաջացած ծիլերը, հետեւ վապես արմատաընձյուղներից կամ բնաընձյուղներից առաջացած ծառերն ավելի վաղ հասակումն են պաղաբերում, քան թե ծառասերմերից առաջացած այդ նույն ծառատեսակները, վորովհետև նրանց ըստ բարձրության աճի կուլմինացիան ավելի վաղ ե հասնում:

### ԾԱՌԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Առորյա կյանքում պաղաբուծներն ու անտառագետները շատ հաճախ են նկատում, վոր ծառերը մեխանիկական այս կամ այն մնասվածքն ստանալուց հետո սկսում են ուժեղ կերպով ծաղկել և առատ պաղաբերել:

Ռուսաստանում սոճենու հսկայական տարածություններ ոգտագործվում են սոճենու խեժ ստանալու համար: Այդ նպատակի համար սոճենու ծառերի բների ներքեսի մասում կեսից մինչև մեկ մետր բարձրության վրա վորոշ ձևով տաշում են, վորպեսզի վիրավորված տեղից խեժը դուրս թափվի. այդ ոպերացիայից հետո նկատելի կերպով ուժեղանում են ծաղկատվությունը և առատ բերքատվությունը:

Պտղաբերությունը ծառի կյանքում մի ծանր ակտ ե և կապված ե նրա պահեստի նյութերի սպառման հետ. այդ պահեստի նյութերի հաշվին են գոյանում ծառի պտուղները կամ սերմերը:

Մեխանիկական մնասվածքների հետևանքով սերմերի բերքատվության ուժեղացումը բացատրվում է նրանով, վոր մնասվածքների հետևանքով սննդանյութերը դժվար են տեղափոխվում և այդ պատճառով ժամանակավորապես ծառի տվյալ մասում ստացվում ե պահեստի նյութերի առատություն:

Գերմանացի անտառագետ Գարտիկը գտնում է, վոր ուժեղ պաղամակության տարում պաղաբերող ծառերի աճն զգալի չափերով հետևածում:

ԾԱՌԱՍԵՐՄԵՐԻ ՎՈՐԱԿԵ

Անտառների բնական աճի և անտառաբուծական աշխատանքների համար ծառասերմերը կարող են իրենցից արժեք ներկայացնել միայն այն դեպքում, յերբ նրանք իրենց վորակով կարող կլինեն ապահովել անտառների բնական աճը և տալ անհրաժեշտ վորակով տընկանյութեր տնկարանների համար:

Այդ իսկ պատճառով ել անտառային սերմաբուծության համար այս կամ այն ծառասերմերը կարող են արժեքավոր լինել միայն այն դեպքում, յերբ նրանք բնական աճի և անտառաբուծական աշխատանքների համար վորոշ տնտեսական արժեք կներկայացնեն, դրա համար ել անտառային սերմաբուծությունն ուսումնասիրում ե ծառասերմերի վորակն ու հատկությունները, վորոնք այդ տեսակետից կարևոր են:

Քանի վոր բնական վերաճի համար, ինչպես նաև բնական վերաճին նպաստելու ու անտառաբուծական ձեռնարկումների հաջողությունների համար վճռական դեր ե խաղում ծառատեսակների վորակը, ապա այդ տեսակետից ծառասերմերի բնորոշ հատկանիշներն են նրանց մեծությունը, ծանրությունը, գույնը, հոտը, ծլունակության  $\%$  և այլն, վորոնց նկարագրության վրա և կանգ կառնենք:

ԾԱՌԱՍԵՐՄԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

Անտառային ծառատեսակների մեջ նկատելի յե, վոր արագաճ ծառատեսակների խմբին պատկանող մի շարք ծառատեսակներ՝ բարդիները, ուսիները, կեչին, թեղին և այլն, տալիս են ավելի մանր սերմեր, քան թե դանդաղաճ ծառատեսակները, ինչպես, որինակ՝ կազնին, հաճարին և այլն:

Այդ հանգամանքը սերմաբուծության համար այնքան ել կարեւողը չե, վորովհետեւ, որինակ, ամերիկյան թղկին կամ ընկուղենին համարվում են արագաճ ծառատեսակներ, սակայն նրանց սերմերը՝ ուրիշ ծառատեսակների հետ համեմատած, բավականին մեծ են:

Սերմաբուծության համար ամենակարևորը միենույն ծառատեսակների սերմերի մեծության մեջ յեղած տարրերության պատճառներն են:

Այդ խնդրին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների ամ-

փոփումը՝ մի կողմից, և մյուս կողմից՝ մեր դիտողությունները մեր լեռնային անտառների նկատմամբ՝ հնարավորություն են տալիս մեզ հետեւյալ յեղբակացություններն անելու մեր պայմաններում։

■) Վորքան տվյալ ծառուտը բարձր ե ծովի մակերեսից, վորքան վեգետացիոն ժամանակամիջոցը կարճ ե, վորքան խիստ են կլիմայական պայմանները, վորքան քիչ ե արեի ճառագայթների տևողությունն ու թրւյլ, նույնքան և փոքր են այդ վայրի ծառասերմերը (Ծաղկաձորի, Ապարանի և այլն անտառամասերի հյուսիսային լանջերի վրա):

■) Վորքան հողն աղքատ ե, չոր և սննդանյութերից զուրկ, այնքան ել մանր են տվյալ վայրի ծառասերմերը (հարավային վողողված չոր սարալանջերի վրա հացենու, կաղնու և այլն ծառատեսակների սերմերն ավելի մանր են, քան թե այդ նույն լանջերի հարուստ և խոնավ հողերի վրա յեղած նույն ծառատեսակների սերմերը):

■) Միենույն պայմաններում աճած այն ծառերի սերմերը, վորոնք ավելի շատ են ստվերակալված, ընդհանուր առմամբ ավելի մանր են։

Ծառասերմերի մեծություններն իրար հետ համեմատելու տարրեր մեթոդներ կան. այդ նպատակի համար գոյություն ունեն հասուլք ցանցեր, վորոնց միջով անց են կացնում ծառասերմերը, կամ ել սանտիմետրով չափում են նրանց յերկարությունն ու տրամագիծը։

## ՍԵՐՄԵՐԻ ՔԱՇԸ

Անտառային գրականության մեջ ընդհանրապես տիրում ե այն կարծիքը, վոր ծառասերմերի քաշը սերտ կերպով կապված ե նրանց մեծության, այսինքն՝ ծավալի հետ։

Այդ կարծիքն ընդհանուր առմամբ ճիշտ ե, բայց, ինչպես վերը հիշատակեցինք, հայտնի յե նաև այն, վոր միենույն ծառատեսակների սերմերն իրենց մեծությամբ տարրեր են լինում, վորպիսի հանգամանքը, ինչպես այդ ցույց տվինք, հետեւանք ե տարրեր հողակլիսայական պայմանների, հասակի և այլն։ Բացի այդ, միենույն ծառատեսակների միենույն մեծություն ունեցող ծառասերմերն իրենց քաշով տարրեր են լինում, վորը հետեւանք ե տվյալ սերմերի քիմիական կազմի մեջ յեղած տարրեր նյութերի քանակությունների տարրերությունների։ սա, իհարկե, առաջանում ե հողակլիմայական և այլ պայմաններից, վորպիսի հանգամանքն անտառկուլտուրական գործնական աշխատանքների համար ունի կարևոր նշանակություն։

Անտառային սերմարուծության մեջ սերմերի քանակը վորոշում  
են յերեք ձևով:

ա) Հատով—յերբ հաշվում են և հաշվառքը յերբեմն կատարում են  
տասնյակներով, հարյուրյակներով կամ ել հազարյակներով։ Այս ձեռք  
շատ հասարակ և բանվորական ուժի արտադրողականության տեսա-  
կետից աննպատակահարմար եւ Բայց այդ մեթոդը հնարավոր և կիրա-  
ռել միայն շատ սահմանափակ մեծապտուղ ծառասերմերի նկատմամբ,  
ինչպես, որինակ՝ ընկուղի, շագանակի և այլն։

Այս մեթոդին հաղվագյուտ դեպքերում են դիմում, յերբ թան-  
գարժեք և մեծ ծավալ ունեցող սերմեր դժվարությամբ են ձեռք բեր-  
վում և պահանջվում ե խնայողաբար և վորոշ տարածության վրա  
սահմանված վորոշ քանակությամբ ցանել, այսպես, որինակ՝ տնկա-  
րանի մեկ քառակուսի մետր տարածության վրա ցանել դիցուք 40  
հատ ընկուղ, ինչպես այդ ներկայումս կիրառում ենք Հայաստանի  
անտառային տնկարաններում։

բ) Ծավալային քառակության մեջ՝ յերբ ծավալային չափերով են չափում-  
որինակ՝ մեկ հեկտոլիտր, վոր հավասար ե 100 լիտրի, մեկ դեկալիտր,  
վոր հավասար ե 10 լիտրի, և այլն։

Աշխատանքի ռացիոնալիզացիայի տեսակետից ծավալային չա-  
փերով չափելն ավելի լավ ե, բայց չափման այդ ձևն ունի այն բա-  
ցասական կողմը, վոր չափերի մեջ լցնելով՝ սերմերը կարող են լավ  
չղասավորվել և խոնավության, ջերմության ու այլ պատճառներով  
քանակի տեսակետից տալ տարբերություններ։

գ) Քառը կենոքով—յերբ սերմերի քանակը վորոշում ենք կշռելով։  
Այս դեպքում քանակն արտահայտում ենք կիլոգրամներով, գրամնե-  
րով և այլն։

Այս դեպքում ստացվում ե սերմերի բացարձակ քաշ, և սերմերի  
քաշը վորոշելու համար անտառային սերմարուծության մեջ ընդուն-  
ված ե քաշել 1000 հատ։

Այդ նպատակի համար—քաշ վորոշող սերմերի՝ փորձի համար  
վերցրած նմուշները լավ խառնում են իրար և վերցնում են տմենա-  
մեծերից մինչև ամենափոքրերը, դեն գցելով կոտրվածները ու քաշում,  
այսպես ասած, դեղատան սիստեմի կշռոքով մինչև 0,1 գրամ ճշտու-  
թյամբ՝ ընկուղենու, կաղնու, շագանակի և նման մեծ սերմերի համար,  
իսկ մանր սերմերի՝ ուռենու, սոճենու և այլ սերմերի համար՝ մինչև  
0,01 գրամ ճշտությամբ։

Ստորև բերված աղյուսակը բնորոշում ե տարբեր ծառասերմերի  
մեկ կիլոգրամ քաշի մեջ յեղած սերմերի քանակը 1000-ներով։

Շառատեսակներ անունները	1 կիլոգրամի մեջ 1000-ներ- ընդ	Շառատեսակների անունները	1 կիլոգրամի մեջ հազար- ներով
Սոճի . . . . .	158,6	Շաղանակ իսկական . . .	0,130
Գաղնի . . . . .	270,300	Հաճարենի . . . . .	4,7
Ենչի . . . . .	1.854,4	Բոխի . . . . .	23,4
Թղթի լայնատերեկ . . .	9,8	Տկողին . . . . .	1,2
» դաշտային . . . .	14,6	Լորի՝ մեծատերեկ . . .	9,9
Տքնատեր սովոր . . . .	22,2	» մանրատերեկ . . . .	24,
» յելունդավ . . . .	34,2	Դժնիկ . . . . .	18,3
Ակացիա գեղին . . . .	29,3	Գերմաստրի . . . . .	17,1
» սպիտակ . . . .	46,24	Ռալորակեռաս	8,9
Հացի սովորակ . . . .	14,6	Ռնձնի . . . . .	6,0
Ռալոր վայրի . . . .	1,5	Կեռաս վայրի . . . . .	4,9
Բալենի վայրի . . . .	4,9	Կեռաս մահալերան . . .	9,1
Սզնի սովորական . . . .	13,4	Փոշնի արհելւան . . . .	5,6
Ցակ կեռաս . . . . .	380,6	Բեկուզ . . . . .	0,2
Ալաժարի . . . . .	1,2	Թեղի լեռնային . . . .	100—140
Տանձի վայրի . . . . .	29,3	» դաշտային . . . .	146
Խնձորենի վայրի . . . .	29,3	Արևանտ . . . . .	50,7
Անփուտ . . . . .	16,5		

Ենք արդեն առիթ ենք ունեցել ասելու, վոր միևնույն ծառատեսակների սերմերի մեծությունը, տարբեր հողակլիմայական պայմաններում, ծովի մակերևույթից տարբեր բարձրության վրա, տարբեր մեծություն են ունենում: Հետեւաբար, այս աղյուսակում բերված տվյալները կայուն լինել չեն կարող: Այսպես, որինակ՝ այդ աղյուսակում ընկռողի 200 հատը քաշում ե մեկ կիլո, բայց մեր Գառնիի ընկռողի 90—120 հատն ե քաշում մեկ կիլո:

Մտեփանավանի շրջանում 35-36 թ. ձմեռը հավաքած սոճու սերմերի մեկ կիլոգրամն իր մեջ պարունակում ե մոտավորապես 102.000 հատ: Այդ իսկ պատճառով ել աղյուսակում բերված տվյալները կարող են ծառայել միայն վորպես որինտիր տվյալներ:

Այսպիսով, ուրեմն, քաշի մեկ միավորի մեջ միևնույն ծառասերմերից տարբեր քանակությամբ են պարունակվում, և դա հիմնականում բացատրվում ե նրանց մեծությամբ, սերմահավաքի ժամանակից, սերմերի փշության և կիսափշության տոկոսից, խոնավությունից և այլն: Բայց միևնույն հողակլիմայական պայմաններում, միևնույն ծառատեսակների սերմերի համար գոյություն ունի միջին քաշ:

Անտառկուլտուրական աշխատանքների տեսակետից ամենակարևորը փչության 0/0-ի չափն ե, վորովհետև սերմերի մեծ տոկոսով փուչ լինելու հանգամանքն ստիպում ե շատ սերմեր ցանել: Իսկ այդ թանգ ե նստում:

Փուչ ծառասերմերն առողջ ե լավ սերմերից կարելի յե անջատել քամահարությամբ, ջրի մեջ լցնելով և այլն:

Քամահարության ժամանակ ծանր սերմերը մնում են մի կողմի, իսկ փչերն ու վատորակները՝ մյուս կողմի վրա: Սերմերը լցնելով ջրի մեջ, փուչ սերմերը բարձրանում են ջրի յերես, իսկ առողջները մնում են ջրի տակ: Այս ձևով կարելի յե մեծ և ծանր սերմերն առանձնացնել:

## ԾԱՌԱՍԵՐՄԵՐԻ ԳՈՒՅՆՆ ՈՒ ՀԱՄԼ

Լավ վորակ ունեցող ծառասերմերը տարբերվում են նաև իրենց գույնով:

Այս խնդրին նվիրված՝ պրոֆ. Սոբոլի, Կոբրանովի և Կուրդյանու ուսումնասիրություններն ապացուցում են, վոր ծառասերմերին հատուկ է գույների վորոշ կայունություն, ըստ վորի, «միանգամայն նորմալ կերպով զարգացած լեռնային սոճու սերմերն ունենում են սև գույն», ասում ե պրոֆ. Ն. Պ. Կոբրանովը: Ըստ մի շարք հետազոտողների տվյալների՝ վատ զարգացած ծառասերմերն ունենում են սփրթնած գույն:

Գույնի հետ սերտ կապված ե նաև համը, հետևաբար՝ և հոտը:

Առողջ սերմերին հատուկ ե յուրահատուկ համ ու հոտ և այդ համն ու հոտն առանձին ծառասերմերի համար ըստ յերեսութիւն բավարար չափով կայուն հատկանիշ են: Վատորակ սերմերը շատ հաճախ ունենում են տարբեր համ ու հոտ, նայած թե ինչ ֆակտորների ներգործման տակ են նրանք իրենց վորակը կորցրել:

Սոճու առողջ սերմերին հատուկ ե դեղնասպիտակավուն փայլող գույնը: Այդպիսի առողջ սերմերն ունենում են դուրեկան համ, իսկ նեխած սերմերն ունենում են անդուրեկան համ ու հոտ:

Շատ անգամ սերմերը բորբոսնած են լինում և պատված սպիտակ կամ կանաչավուն գույնի ցանցով, վորը նշան ե սերմի վտառակության:

Այդպիսի սերմերն ունեն դեղնած, սևացած կամ կաղտավուն գույն և տհաճ համ:

ՍԵՐՄԵՐԻ ԾԼՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Եինչև այժմ մենք համառոտակի կերպով քննության յենթարկեցինք արտաքին այն պայմանները, վորոնց ուսմունքը մեզ հնարավորություն ե տալիս ծանոթանալու սերմառաջացման պրոցեսները ղեկավարող որենքների հետ:

Սակայն սերմաբուծության համար և անտառային կուլտուրաների եկոնոմիկայի տեսակետից այդ շատ քիչ ե: Վերջին տարիների հսկայական ագրո-անտառային, անտառկուլտուրական, քաղաքների ու ավանների կանաչազարդման, ինչպես նաև պտղաբուծության վիթխարի ծրագրերի իրագործումը հրամայական պահանջ ե դրեւ անտառային սերմաբուծության առաջ՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելու ծառասերմերի ներքին հատկությունների վրա, վորպես վերը թը-ված վիթխարի ծրագրերի իրագործման համար ամենադլխավոր յերաշխիքի:

Մեծաքանակ սերմերը վոչ մի նշանակություն չեն կարող ունենալ, յեթե նրանք ընդունակ չեն ծլելու, կամ ցածր ծլունակություն ունեն:

Ահա թե ինչու սերմաբուծության մեջ ամենակարևոր տեղը ըըռնում ե սերմերի ծլունակության ուսմունքը, վորի իմաստը սերմաբուծական տնտեսության տեսակետից շատ խիստ կարևոր ե:

Սերմերի ծլունակություն ասելով պիտի հասկանալ սերմերի այնպիսի ծիլեր տալու ընդունակությունը, վորոնք նորմալ կերպով են զարգանում: Սակայն, սերմերի հավաքելու, վերամշակելու, փոխադրելու ու պահպանելու մեթոդների ու տեխնիկայի թուլության պատճառով, պատրաստած սերմերի յուրաքանչյուր պարտիայի մեջ լինում են փուչ և վնասված սերմեր, վորոնք ազդում են սերմերի ծլունակության ընդհանուր <sup>0/0</sup>-ի վրա և իջեցնում նրանց տնտեսական արժեքը:

Սերմերի ծլունակության վրա դրական ու բացասական կերպով ազդող գլխավոր ֆակտորների՝ սերմերի հասունության, ջերմության, լույսի, խոնավության և այլն չափերից ե կախված ծլունակության բարձր կամ ցածր <sup>0/0</sup>-ը, վորոնց վրա և մենք կանգ կառնենք:

ՍԵՐՄԵՐԻ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Սերմերն ունեն իրենց հասունանալու տարբեր ֆազերը (աստիճանները), ըստ վորում գյուղատնտեսական սերմաբուծության մեջ տարբերում են սերմերի հասունացման հետևյալ յերեք ֆազերը, վորոնք հիմնականում ընդունելի յեն նաև ծառասերմերի համար:

ա) Կաթնային աստիճանի հոգունանշալը—դա սերմի զարգացման այն աստիճանն է, յերբ սերմն իր մեջ պարունակում ե սպիտակ կաթնագույն նյութ։ Այդ աստիճանում սերմերն ունեն խոնավության ամենաբարձր 0/0-ը։ Այս աստիճանին զարգացած սերմերն ընդունակ չեն ծիլեր տալու։ Բացառություններ կարող են ունենալ միայն շատ արագած ծառասերմերը (ուռենու, բարդու), վորոնք կաթնային աստիճանի հասունացած վիճակում ընկնելով բարենպաստ պայմանների մեջ մի քանի որվա ընթացքում հասունանում են և ընդունակ են ծիլեր տալու։ Այդ աստիճանի հասունությունը տնտեսական նպատակների համար պիտանի չե, բարդությունների հետ ե կապված և ընդունելի յե միայն փորձնական նպատակների համար։

բ) Կիսաթիտասունության կամ մոմաթաղանթային հասունության աստիճանը բնորոշ է, յերբ յեղունգով սեղմելիս հեշտությամբ յեղունգը մտնում է սերմի մեջ և սերմը կտրվում է։

Այդ աստիճանին հասած սերմերը թեպետ և հնարավոր ե ծլեցնել, բայց մինչև ծլելը նրանք հողում նախ իրենց հասունացման ցիկլն են ավարտում և շատ քիչ նորմալ հասունացում ե տեղի ունենում, վորի հետևանքով ել ծիլերը քիչ են լինում։ Այդ աստիճանի հասունացումը տնտեսական նպատակների համար քիչ արժեք ե ներկայացնում, վորովհետև նրանց մեծ մասը փչանում ե և նրանց արհեստական պայմաններում հասունացնելը բարդությունների հետ ե կապված։

գ) Լրիվ հասունացած—յերբ սերմերը նորմալ կերպով զարգանում հասունանում, պնդանում, կամ ել վորոշ չափով փուխր են լինում և սեղմելուց կամ տափականում են, կամ ել փշրվում, որինակ՝ ընկուղը, հաճարին և այլն։ Փորձը ցույց ե տալիս, վոր սերմերի հավաքելուց և պահելուց հետո ել շատ հաճախ նրանք դեռ շարունակում են իրենց հասունանալու պրոցեսները։ Այդ շրջանում նրանց սաղմերն իրենց զարգացման կատարելության են հասնում և արտահայտվում ե նըրանց բարձր ծլունակությունը և միայն դրանից հետո սկսվում ե նրանց հանգստի շրջանը։

Ցեթե սերմերի հավաքը չի կազմակերպվում սերմերի լավ հասունանալու շրջանում, ապա նրանց հավաքելուց հետո անհրաժեշտ ե նրանց պահել այնպիսի պայմաններում, վորպեսզի թարմ ողի տղատմուտք լինի և խոնավություն չլինի, վորպեսզի սերմերը կարողանան չորանալով ու հասունանալով հանդերձ իրենց ապահովել դիմաց կուն նյութերի համապատասխան պաշարով, հակառակ դեպքում սերմերի մեջ յեղած նյութերը խոնավությունից լուծվում են, նեխում և ցանելու համար անպետքանում։ Այդ իսկ պատճառով ել սերմերի հավա-

քելուց հետո պահելը, մինչև վոր նրանց հասունանալու ժամանակա-  
շրջանը լրացվի, պահանջում ե մեծ հմտություն և լուրջ խնամք:

Մի շարք հեղինակների կարծիքով՝ թևավոր սերմերի հասունաց-  
ման ամենալավ նշանը համարվում ե սերմերի թևերի գորշանալը և  
կաշիանալը:

Մեր դիմավոր ծառատեսակների հասունանալու ժամկետները.

Ծառատեսակների անունները

Սերմերի հասունանալու ժամկետը

Սոճի

Ծաղկելուց հետո 2-րդ տարվա աշնանը՝ գեկ-  
տեմբեր-նոյեմբերին

Կաղնի

Ծաղկելուց նույն տարվա աշնանը՝ հոկտեմբեր-  
նոյեմբերին

Հացի

Ծաղկելուց նույն տարվա աշնանը՝ հոկտեմբեր-  
նոյեմբեր

Լոբի

Ծաղկելուց սույն տարվա աշնանը՝ հոկտեմբեր-  
նոյեմբեր

Կեչի  
Ընկուզենի

Ծաղկելուց նույն տարվա աշնանը՝ ողոստուին  
» » » » սեպտեմբեր-  
հոկտեմբեր

Կաղամախի, բարդի և ուռի

Ծաղկելուց նույն տարվա գարնանը՝ տուբիւ-  
մայիս

Թեղի  
Թղիներ

Ծաղկելուց նույն տարվա աշնանը՝ մայիս հունիս  
» » » » հոկտեմբեր-նոյ-  
եմբեր

Հաճարի

Ծաղկելուց նույն տարվա աշնան՝ հոկտեմբեր-  
նոյեմբեր

Բոխի

Ծաղկելուց նույն տարվա աշնանը՝ հոկտեմբեր-նոյ-

Ակացիա սպիտակ

Ծաղկելուց նույն տարվա աշնանը՝ սեպտեմբեր  
» » » » սեպտեմբեր

Գլեղիչիա

հոկտեմբեր

Տլողին

Ծաղկելուց նույն տարվա աշնանը՝ սեպտեմբեր-  
հոկտեմբեր

Զկեռ

Ծաղկելուց նույն տարվա աշնանը՝ սեպտեմբեր-  
գեկտեմբեր

Սնձնի

Ծաղկելուց նույն տարվա աշնանը՝ նոյեմբեր-  
դեկտեմբեր

Տանձի և խնձորի

Ծաղկելուց նույն տարվա աշնանը՝ նոյեմբեր-  
դեկտեմբեր

Այս տվյալներն, իհարկե, ամեն տեղի համար միևնույնը պիտի  
չեն կարող, վորովհետև մեր լեռնային պայմաններում ցածր և պաշտ-

պանված ու տաք ձորերում ծաղկատվությունն ու սերմերի հասունությունն ավելի վաղ և տեղի ունենում, քան թե բարձր և ցուրտ զոնաներում:

## Խ Ա Ն Ա Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ

Ծառասերմերի ծլելու համար պահանջվում է բավարար քանակությամբ խոնավություն, վորպեսզի նրանք կարողանան իրենց մեջ ջուր ծծել, ուռչել և պատռել իրենց պատյանն ու դուրս քշել իրենց սաղմերը: Տարբեր ծառասերմեր իրենց ծլելու համար տարբեր խոնավություն են պահանջում: Այդ տեսակետից մեր մի շարք անտառատեսություններում հետաքրքիր արդյունքներ ստացվեցին: Այսպես, որինակ՝ Ստեփանավանի շրջանտառատեսության տնկարանում մայիսի վերջերին—հունիսի սկզբներին (վորին հաջորդեցին չորային յեղանակներ) ցանած թեղու սերմերի մի մասի ծիլերը դուրս յեկան նույն տարում, իսկ մյուս մասի ծիլերը դուրս յեկան հաջորդ տարում: Այս յերևույթը շատ հետաքրքիր և մանավանդ այն տեսակետից, վոր անտառային գրականությունը մինչև հիմա հաստատում եր, վոր թեղու սերմերն իրենց ծլունակությունը կարող են պահպանել մի քանի որ և լավագույն դեպքում՝ 10—15 որ:

Այնուամենայնիվ մենք դեռ վաղ ենք համարում յեղրակացնելու, վոր թեղու սերմերը հավաքելուց հետո կարելի յե 10—15 որից ավել պահել:

Նման յերևույթ նկատվեց նաև Ապարանի անտառատեսությունում, վորտեղ 35 թ. գարնան սեղոնին ստրատիֆիկացիայի յենթարկված ու ցանած հացու սերմերի մի մասը ծիլեր տվեց այդ նույն գարնանը, բայց մի մասը՝ վերահաս չորային յեղանակների հետևանքով մնաց և ծիլեր տվեց 36 թ. գարնանը:

Նույնպիսի յերևույթ տեղի ունեցավ թթենու սերմերի հետ կողքի անտառատեսության տնկարանում 34-35 թվերին և սոմենու սերմերի հետ՝ Շահալիի տնկարանում 34-35 թվականներին: Ծառասերմերի ծլելու համար հողի խոնավության ուղտիմալ 0%-ը տարբեր ծառատեսակների համար տարբեր եւ:

## Զ Ե Ր Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ

Սերմերն իրենց ծլելու համար պահանջում են վորոշ աստիճանի ջերմություն և բոլոր ծառասերմերը ծլում են ջերմության 0°-ից բարձր. տարբեր ծառատեսակների ծլելու համար ջերմության աստիճանը տար-

բեր ե լինում: Սակայն միևնույն ծառատեսակները տարբեր աշխարհագրական պայմաններում իրենց ծլելու համար պահանջում են տարբեր աստիճանի ջերմություն: Այդ ինդրին նվիրված տարբեր ուսումնասիրությունները հանգել են այն յեզրակացության, վոր տարբեր ծառասերմերի ծլելու համար գոյություն ունի ջերմաստիճանի ոպտիմալ (բավարար) աստիճան, վորի ընթացքում ծլելու տեմպերն ուժեղանում են: Բայց փորձերը ցույց են տվել, վոր փոփոխական ջերմաստիճանն ավելի յե արագացնում ծլելու պրոցեսը, քան թե կայուն և միապաղաղ ջերմաստիճանը:

Բոլոր հետազոտողները ծառատեսակների սերմերի մեծ մասի ծլելու համար ոպտիմալ ջերմությունը համարում են 18—20 աստիճանը՝ ըստ Ցելսյուսի: Իսկ ըստ Կինտիցի տվյալների՝ հացու, սոճու, գլյադիչայի և միշտաքարքայի ծառասերմերի համար ոպտիմալ ջերմաստիճանը համարվում է 24—28:

Այսպիսով, ուրեմն, բացի ծառատեսակներից, կարեոր հանգամանք են սերմերի ծաղումը: Հայտնի յե, վոր Շվեյցարական ալպերում ծառասերմերն սկսում են ծիլեր տալ 0 աստիճանից ել ցածր, նույնիսկ սառուցների մեջ:

Արհեստական պայմաններում աճեցվող ծառասերմերի աճեցման պրոցեսներն ընդհանուր առմամբ ավելի անհաջող են, քան թե բնական պայմաններում: Բայց արհեստական կերպով աճեցնելու դեպքում հաճախ սերմերի վրա դանագան քիմիական նյութերով են ազդում, վորի հետևանքով աճման պրոցեսներն արագանում են կամ դանդում:

Այսպիսի դեպքերում ծլող սերմերի տոկոսը՝ նույնպես տառանվում ե:

### Լ Ո Ւ Յ Ս

Բնական պայմաններում աճող ծառասերմերն աճում են կատարյալ մթության մեջ, և անտառային հողակլիմայական պայմանները, վորոնց մեջ տեղի յե ունենում աճման պրոցեսը, միանգամայն այլ են, քան թե արհեստական լաբորատոր պայմանները: Հետևաբար, լաբորատոր պայմաններում աճեցված ծառասերմերի արդյունքներն ընդհանրացնել բնական պայմաններում աճեցվող ծառասերմերի նկատմամբ՝ սխալ կլինի:

## Հ Ա Դ Լ

Ծառասերմերի ծլման պրոցեսների հաջողության համար խիստ կարեոր դեր է խաղում հողի վորակը: Հողի քիմիական ու ֆիզիքական հատկությունները, ինչպես և նրա կազմը (հողի մեջ պարունակվող աղերը՝ թթվուտային աստիճանը, որգանական նյութերով հարուստ մինելը, ջերմահաղորդման ունակությունը, խոնավության աստիճանը և այլն), սերմերի ծլման պրոցեսների համար վճռական դեր են խաղում: Հետևաբար, ծառասերմերի ծլման պրոցեսների և ունակությունների մասին այս կամ այն դատողությունն անելու համար անհրաժեշտ ե, վորպեսզի ծառասերմերը ծլեցնելու փորձերի աշխատանքները կատարվեն այնպիսի պայմաններում, վորտեղ գոյություն ունեն վերը թված բոլոր ֆակտորները:

## Ո Դ Լ

Ծառասերմերի ծլման համար խիստ կարեոր է թթվածին գաղը, առանց վորի սերմերը ծլել չեն կարող: Փորձը ցույց է տալիս, վոր սերմերին ողից զրկելու դեպքում ծլման պրոցեսները կանգ են առնում և նրանց զարգացումն առաջ չի դնում:

Թթվածինը, վորը կազմում է ողի բաղկացուցիչ մասերից մեկը, անհրաժեշտ է ծլող սերմերի շնչառության համար, վորի դեպքում տեղի յե ունենում ածխածնի, ջրածնի և որդանական նյութերի թըթավումը:

## ԾԱՌԱՍԵՐՄԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Չնայած այն հանգամանքին, վոր այս խնդիրը պետք է դեռևս ավ ուսումնասիրել, մանավանդ մեր լեռնային պայմաններում, սակայն լակնայտ է, վոր մի տեղի ծառասերմերից մի այլ հողակլիմայական պայմաններում աճելու համար ավելի քչերն են ընդունակ ծիլեր տալու, քան թե այդ նույն ծառասերմերը՝ իրենց հայրենիքում:

Սակայն լինում են դեպքեր, յերբ հակառակն է պատահում: Այդ, իհարկե, բացատրվում է նրանով, վոր տվյալ սերմատեսակի համար նոր պայմաններում աճելու նպաստավոր պայմաններն ավելի շատ են, քան թե նախկին վայրում:

## ՍԵՐՄԵՐԻ ՊԱՀԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Անտառկուլտուրական նպատակների համար պատրաստվող ծառասերմերը մինչև ցանելը վատ պահելու դեպքում կորցնում են իրենց վորակը։ Այդ հանգամանքը խիստ անդրադառնում է ծլունակության  $0/0$ -ի վրա և շատ հաճախ վճռական դեր է խաղում։

Ամենալավ վորակի սերմերն անզամ վատ պահելու հետևանքով կորցնում են իրենց վորակը և վորպես սերմացու բոլորովին անարժեք են դառնում ու անպետքանում։

Յերբ հասունացած և առողջ սերմերը նոր են սկսում թափակել ծառերից, այդ ժամանակ նրանց ծլունակության  $0/0$ -ն ավելի բարձր է լինում, քան թե վորոշ ժամանակից հետո։ Փորձերը ցույց են տալիս, վոր վորքան յերկար են պահվում սերմերը, այնքան ել իջնում են նրանց ծլունակության  $0/0$ -ը։ Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս ծառասերմերի ծլունակության պահպանման տևողությունը։

Ծառատեսակներ	Սերմերը պահպանում են իրենց ծլունակությունը	Ծանոթություն
Սոճենի սովորական . . . . .	3—5 տարի	
Սոճի Ղըիմի . . . . .	3—5 »	
Կաղնի . . . . .	1—1,5	լավ պահելու դեպքում
Հաճաքի . . . . .	0,5—1 տարի	
Բոլիսի . . . . .	2—3 »	
Կեչի . . . . .	6—8 տարի	
Սպիտակ ակացիա . . . . .	3—5 տարի	
Դեղին . . . . .	5 »	
Շմոքֆ . . . . .	3—4 »	
Սղնի . . . . .	2—3 »	
Կտակենի . . . . .	1—2 »	
Թեղի . . . . .	մինչև մի քանի շաբաթ	
Թղիկ ամերիկական . . . . .	2 տարի	
Թղիկ լայնատերե, թաթարական		
և դաշտային . . . . .	2 »	
Տկողին . . . . .	1 »	
Լոբի . . . . .	2 »	
Մնձնի . . . . .	1 »	
Հացի . . . . .	2—3 »	

\*) Կազմված ե ըստ Միջին Վոլգայի Անտառորեստի ավալների։ Տես «Средлес» թրест, Урочные нормы по лесокультурным работам 1931 թ.

## ՍԵՐՄԵՐԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծառասերմերի ծլունակության համար մաքրությունը թերևայնքան ել կարեոր հանգամանք չե: Բայց անտառկուլտուրական աշխատանքների նպատակների համար խիստ կարեոր ե սերմերի մաքրության աստիճանը, այսինքն՝ թե տվյալ սերմերի ընդհանուր քանակից վոր  $^{0}/_{0}$ -ն են կաղմում մաքրուր սերմերը և վոր  $^{0}/_{0}$ -ը՝ կողմնակի աղտոտություն:

Սերմաբուծության մեջ ընդունված ե ասել՝ սերմերի մաքրության  $^{0}/_{0}$ -ը, այսինքն՝ տվյալ քանակության սերմերի ընդհանուր քաշի վոր  $^{0}/_{0}$ -ն ե կաղմում մաքրուր սերմերի քաշը: Հայտնի յե, վոր ծառասերմերի պատրաստման ժամանակ նրանց մեջ մնում են թփերի, փուչ սերմերի և այլն մնացորդներ, վորոնք վոչ մի արժեք չեն ներկայացնում: Այդ աղբոտությունը կաղմում ե տվյալ քանակության ընդհանուր քաշի վորոշ մասը, վորը կոչվում աղբատարյան  $^{0}/_{0}$ :

Ծառասերմերի տեսեատկան պիտանիությանը պայմանավորված ե ծլունակության  $^{0}/_{0}$ -ով, մաքրության աստիճանով և ծլելու համար այլ հատկություններով: Անտառաբուծության մեջ հատուկ ուշադրություն ե դարձվում սերմերի մաքրության  $^{0}/_{0}$ -ի վրա, հետեւաբար և տնտեսական պիտանիության վրա: Ոգտագործելով ոռւսական և գերմանական՝ այդ խնդրին նվիրված ուսումնասիրությունների արդյունքները, պրոֆ. Ա. Պ. Տոլսկին կաղմել ե մի աղյուսակ, վորը ցույց ե տալիս առանձին ծառասերմերի մեջ յեղած աղբոտության  $^{0}/_{0}$ -ները: Բայց նրա կաղմած աղյուսակի՝ մեր գլխավոր ծառատեսակների սերմերի աղբոտության  $^{0}/_{0}$ -ն ունի հետեւյալ պատկերը.

№ № ըստ կարգի	Ծառատեսակների անունը	Միջին	Կողմնակի խառնությունը ( $^{0}/_{0}$ )	
			Մաքրեմում	Մինիմում
1	Բոխի . . . . . . .	5,8	7,5	3,7
2	Հացի սովորական . . .	8,7	23,5	3,4
3	Սոճի . .	2,6	8,1	0,0
4	Կաղնի կոթավոր (ամառային) . . . . . . .	0,0	0,0	0,0
5	Սոլիտակ ակացիա . . .	2,4	—	—
6	Հաճարի . . . . . . .	1,2	1,6	0,9
7	Կեչի . . . . . . .	57,4	67,8	45,1
8	Թեղի դաշտային . . .	36,2	46,9	30,8
9	Մզնի սովորական . . .	2,1	5,5	0,0

**Խառնվածության** (աղբի) մեջ կարող են լինել փոշի, ծառատերեների մանրունք, փայտի, քարի մանրունքներ, կողմնակի սերմեր և ջարգված կամ փչացած սերմերի մնացորդներ և այլն:

Այդ տվյալները, իհարկե, լրիվ չեն և մեծ ճշտություններ պահանջել չենք կարող, վորովհետև այդ  $^{0}/_{0}$ -ները կարող են տարբեր լինել վոչ միայն այն պատճառով, վոր տարբեր վայրերում սերմերի վորակը տարբեր ե լինում, այլև այն պատճառով, վոր սերմերի պատրաստելու հմտությունից ու ջանացողությունից շատ բան ե կախված:

### ՎՆԱՍՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ծառասերմերը** շատ հաճախ ունենում են մեխանիկական վնասվածքներ, ինչպես, որինակ՝ կարկտահարությունից, սերմերի անզգուշ հավաքելուց, տեղափոխելուց, վորի դեպքում սերմերը կարող են ջարդվել և փչանալ:

Բացի մեխանիկական վնասվածությունից, ծառասերմերը հաճախ վարակվում են սնկային կամ բակտերիալ հիվանդություններով և պարագիտների ու միջատների՝ սերմերի վրա հարձակվելուց վերջիններակորցնում են իրենց վորակը:

Հաճախ նկատվում ե, վոր հացենու, կաղնու, լորենու և այլն տեսակի ծառասերմերը նեխում և բորբոսակալում են:

**Ծառասերմերի** հիվանդության դեպքերը պայմանավորված են կլիմայական պայմաններով, մի կողմից, և մյուս կողմից՝ ծառուտների ընդհանուր դրությամբ։ Այսպես, որինակ՝ Ապարանի, Ծաղկաձորի անտառներում կաղնու, հացենու և թղկենու սերմերն անհամեմատ ավելի վատորակ են, ավելի շատ վնասվածքներ ունեն, քան թե, դիցուք՝ կողքի, Շահալի և Շնողի անտառամասերում յեղած այդ նույն ծառատեսակների սերմերը։

Շատ հաճախ միջատներն իրենց ձվերը դնելով ծառասերմերի մեջ, վնասում են վերջիններիս և ձվերից առաջացող վորդիկները կերակրվում են սերմերով և ապա դուրս գալիս։

Այդպիսի դեպքերում սերմերը բոլորովին կամ կիսովին կորցնում են իրենց ծլունա կությունը, յեթե վնասվում են սերմերի սաղմերը։

Փորձերը ցույց են տալիս, վոր յեթե նման դեպքերում կաղնու սաղմերն ուժեղ չեն վնասվում, ապա նա շարունակում է պահպանել իր ծլունակությունը։ Վնասված ծառասերմերը թուլանալով ավելի յեն յենթակա հետագա փչացման, ուստի խիստ կարեոր ե, վոր նրանք լավ պահպեն։

## ԾԱՌԱՍԵՐՄԵՐԻ ԾԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ 0/0-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Նախորոք իմանալու համար, թե ցանվելիք ծառասերմերը ծլելու ընդունակ են, թե վոչ, և թե այդ սերմերի վոր 0/0-ն եւ ընդունակ ծիլեր տալու, վորպեսզի տնտեսական հաշիվներ տեսնենք և համոզվենք, թե արդյոք այդ սերմերը կարդարացնեն իրենց վրա կատարվող ծախսերը, թե վոչ,—նախքան սերմերի հողի մեջ ցանելը վորոշում են ցանվելիք ծառասերմերի ծլունակության 0/0-ը:

Ծլունակության 0/0-ը վորոշում են ցանելով սերմերը բնական կամ լաբորատոր պայմաններում։ Վորովհետեւ բնական պայմանները կապված են տարվա յեղանակների գժվարությունների հետ, ուստի ընդհանուր առմամբ ծլունակության 0/0-ը վորոշելու համար փորձերն արվում են լաբորատորական պայմաններում։ Այդ նպատակի համար ստեղծված են հատուկ հարմարություններ և միջոցներ։

Ինչպես վերն ասել ենք, ծլունակություն ասելով հասկանում ենք թե տվյալ քանակության սերմերի վոր մասն եւ (վոր 0/0-ը) ընդունակ ծիլեր տալու։ Դրա համար այն ծառասերմերը, վորոնց ծլունակությունն ուղղում ենք վորոշել, բաժանում ենք պարտիաների (մասերի) և յուրաքանչյուր պարտիայից վերցնում ենք 100 հատ կամ 100 գրամ, կամ ել մեկ կիլոգրամ սերմ, իսկ յեթե քաշով ենք վերցնում, նորից հաշվում ենք, թե տվյալ քաշի մեջ քանի սերմ կա և վորոշ ժամանակամիջոցում ծլեցնում ենք նրանց ու հաշվի առնում ծլածների ու չծլածների քանակն առանձին-առանձին։

Բոլոր ծլածների քանակը համեմատում ենք ամբողջ ցանածի քանակի հետ և վորոշում, թե ծլածների քանակը վոր 0/0-ն եւ կազմում ամբողջ ցանվածի համեմատությամբ։ Ծլածների քանակը՝ արտահայտված 0/0-ով՝ կոչվում է ծլունակության 0/0։

Ծլունակության 0/0-ը վորոշելու համտը վերցրած նմուշը պիտի տվյալ սերմերի պարտիայից վերցնել այնպես, վոր նա իր վորակով, մաքրությամբ և այլ հատկություններով ամբողջ պարտիայի համար բնորոշ լինի։

Վորովհետեւ ծլունակությունը վորոշելու այդ ձեր վերաբերում ե միայն լիքը և առողջ սերմերին, ուստի այդ գեպքում ծլունակության այդ 0/0-ը կոչվում է ծլունակության բացարձակ 0/0՝ ի տարբերություն տեխնիկական ծլունակության 0/0-ի, վորի գեպքում փորձը կատարվում է իսառ (այսինքն առանց նախորոք փուչ սերմերը առողջներից անջատելու) սերմերի վրա։

Իսկ փուչ սերմերի քանակը յերբեմն բավական մեծ չափերի յե-

հասնում: Պրոֆ. Ն. Պ. Կոբրանովի՝ այդ խնդրին նվիրված ուսումնասիրությունները տվել են հետևյալ արդյունքները:

Ծառատեսակների անունները	Փուչ սերմերի $0/0$ -ային հարաբերությունը՝ ամբողջ սերմերի նկատմամբ		
	Մաքսիմում	Մինիմում	Միջին
Լայնատերեւ թղկի . . . . .	21	9	14
Դաշտային » . . . . .	18	8	13
Թեղի . . . . .	40	24	31
Հացի սովորական . . . . .	19	10	14
Լորի . . . . .	10	2	5
Սոճի սովորական . . . . .	3	0	2
Բոխի . . . . .	36	13	24,1
Թեղի դաշտային . . . . .	25	6	14,8

Մեր խիստ լեռնային անտառների պայմաններում տարբեր բարձրությունների վրա փուչ լինելու  $0/0$ -ային հարաբերության տատանումները պիտի յենթադրել, վոր կարող են լինել ավելի մեծ:

Բացի այն, վոր փուչ լինելու հանգամանքը հետևանք է բիոլոգիական հատկությունների, դա զգալի չափով հետևանք է նաև պատահական ոթերեսութաբանական յերևույթների:

Անտառկուլտուրական աշխատանքների տեսակետից կարեոր ետքինիկական ծլունակության  $0/0$ -ի վորումը, վորովհետև շատ դժվար է մեծ պարտիաների սերմերը բոլորովին մաքրել փուչ սերմերից:

Անտառկուլտուրական աշխատանքների բնագավառում ամբողջ հաշիվը տարվում է տեխնիկական ծլունակության  $0/0$ -ի նկատմամբ: Անհրաժեշտ է ասել, վոր ծլունակության  $0/0$ -ի վորոշման փորձերը բնական և լաբորատորիական պայմաններում միշտ տալիս են տարբերություններ, և անհրաժեշտ է այդ հաշվի առնել:

Իմանալով ծլունակության  $0/0$ -ը, շատ հեշտությամբ վորոշում են, թե վորքան սերմ է պահանջվում այս կամ այն քանակությամբ տնկիներ ստանալու համար:

Նախորոք վորոշված ծլունակության  $0/0$ -ը միշտ չի համապատասխանում տվյալ պարտիայի՝ ցանելուց հետո փաստացի ծլածների  $0/0$ -ին: Այդ ուղղությամբ պրոֆ. Ն. Պ. Կոբրանովի, Յախոնտովի և ուրիշների կատարած փորձերը տվել են զգալի տարբերություններ:

Ծառասերմերի ծլունակության  $0/0$ -ի ցածր կամ բարձր լինելը պայմանավորված է մի կողմից՝ վերը թված ֆակտորներով (ոդ, լույս, խոնավություն և այլն) և մյուս կողմից՝ ցանելու և աճեցնելու ժամանակով, տեխնիկայով և այլն:

Զանազան անտառային սերմաբուծական կայանների և առանձին հեղինակների հետազոտությունների փորձերը (վորոշելու համար առանձին ծառատեսակների սերմերի ծլունակության  $^{\circ}/_{\circ}$ -ը) միշտ ել տարբեր արդյունք են տվել: Ստորև բերված աղյուսակը բնորոշում է առանձին ծառատեսակների ծլունակության  $^{\circ}/_{\circ}$ -ները՝ ըստ առանձին հեղինակների:

Ծառատեսակներ	Ըլունակության տոկոսը		
	Գայերի տվյալն.	Գեսսեյի տվյալն.	Տուբակու <sup>թ</sup> տվյալներով
Յեղենի	75—80	75—80	80
Բոխի	70	մինչև 80	50
Ցոճի	70	» 75	80
Հացի	65—70	80—85	50
Կաղնի	65	80—90	90
Շագանովի	50—65	մինչև 80	—
Լորի	60	» 40	30
Սպիտակ ակոցիա	55—60	» 60	—
Թղկի	50—60	80—85	50
Հաճարի	50	80—90	90
Կեչի	20—25	10—15	20
Բարդի	—	—	50

Այդ տվյալները վորոշ չափով կարող են համարվել միջին: Բայց մեր պայմաններում առանձին ծառատեսակներ, ինչպես՝ կեչին, լորին, աչքաշափով կարելի յետ ասել, վոր ավելի ցածր ծլունակություն ունեն:

Ստեփանավանի սոճու 35 թվի բերքից 35—36 թ. ձմեռվա ընթացքում պատրաստած սերմերը տվին  $71 \frac{1}{2}$   $^{\circ}/_{\circ}$  ծլունակություն:

1935 թ. ուշ աշնան ընթացքում Յերևանի Անտառոնտեսության կողմից Հայաստանի Հողժողկոմատի համար հասարակ մեթոդներով պատրաստած ու հանձնած տանձի և խնձորի սերմերի տարբեր պարտիաները՝ ըստ ինժեներ-անտառագետ Արտավազդ Պետրոսյանի մշակած աղյուսակի՝ ունեն հետևյալ պատկերը (տես եջ 42):

Բացի վերը թված յերկու աղյուսակների տվյալներից, կան բազմաթիվ այլ տվյալներ, վորոնց վրա մենք կանգ չենք առնում:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում, վորպես լրացում վերն ասածներիս, մի ընդհանուր հանրագումարի բերել և թվել այն գլխավոր ֆակտորները, վորոնք այսպես թե այնպես ազդում են ծառասերմերի ծլունակության ցածր կամ բարձր աստիճանի վրա:

## Խ ն ձ ո բ

## Տ ա ն ձ

Լաբորատորիայի անալ. №-ը	Ըստ թուրքական պարագաների	Ըլունակության %	Լաբարատոր անա- լիզի №-ը	Ըստ թուրքական պարագաների	Ըստ թուրքական պարագաների
834	16	63,8	96,0	774	80
854	31	61,5	70,0	832	33
927	5	79,8	84,0	929	9,4
928	40	87,6	94,0	931	6,5
930	10,4	81,0	89,0	933	12
932	20	87,6	95,0	972	15
969	45	87,2	91,0	928	40
971	30	87,6	95,0	Գորիսի ակտ.	96,5
973	6	78,4	98,0	»	38,4
987	11,5	94,9	99,0	Ստեփանավան ակտ.	5
Դափանի ակտ.	30	84,2	տեղեկութ. չկա	»	10
Գորիսի ակտ.		5,5 91	»	—	—
»		10,6 93,7	»	—	—
Ստեփանավան	5	100	»		
»	10	100	»		
970	15	93	99		

Մանօրությանը.—Ծառառեցմերը հիմնանում պատրաստվել են Դափանի-Գորիսի, Սաղախլուի, Կիրսկականի, Դուղի և Ստեփանավանի շրջանտառականություններում:

Այդ տեսակետից յեղած փորձերի ամփոփումը թույլ է տալիս մեջանելու հետեւյալ յեղբակացությունները:

1. Տարբեր ծառատեսակների սերմերի ծլունակության  $0/0$ -ի աստիճանները լինում են տարբեր, և միևնույն ծառասերմերի ծլունակությունը տարբեր հողակլիմայական պայմաններում, տարբեր հասակում և տարբեր տարիներին դարձյալ լինում է տարբեր:

2. Նայած ծառասերմերի հավաքելու ժամանակին, հավաքելու և պատրաստելու տեխնիկային, պահելու ձևերին և աճեցման պայմաններին ու մեթոդներին՝ միևնույն ծառատեսակների ծլունակության  $0/0$ -ներն զգալի չափերով տատանվում են վեր ու վար:

Հասունացած և թարմ սերմերը նորմալ խոնավության, լույսի և հողային պայմաններում տալիս են ավելի մեծ  $0/0$ -ով ծիլեր:

3. Նորմալ կերպով զարգացած առողջ սերմերը՝ վորոշ ժամանակ պահելով, ավելի քիչ են կորցնում իրենց ծլունակության  $0/0$ -ը, քանի թե կիսահաս և վատառողջ սերմերը:

Ծառասերմերի ծլունակության հետ սերտ կերպով կապված են նաև նրանց սերմահանգստի տրջանի, ծիման եներգիայի և ստրատիֆիկացիայի հարցերը:

Հայտնի յե, վոր սերմերն ընդհանրապես և ծառասերմերը մտանավորապես ցանելուց հետո անմիջապես ծիլեր չեն տառա, այլ սկըսում են ծիլեր տալ վորոշ ժամանակ հողի մեջ պառկելուց հետո:

Այն ժամանակամիջոցը (որերի թիվը), վորն ընդդրկում է ծառասերմերի ցանելու մոմենտից մինչև սերմերի ծիլեր տալու մոմենտը, կոչվում է հանգստի ժամանակաշրջան:

Տարբեր ծառասերմերի համար այդ ժամանակաշրջանը լինում է տարբեր, և այդ տարբերությունը լինում է մի քանի որից մինչև մի քանի տարի:

Հետեւքաբար, սերմահանգստի տրջանը կոչվում է որերի տյա միջին թիվը, վերն անհրաժեշտ է մի սերմի ծիելու համար:

Ծլման համար պահանջվող որերի այդ թիվը տարբեր և վոչ միայն տարբեր ծառատեսակների համար, այլև միևնույն տեսակի սերմերի համար՝ նայած ինչպիսի պայմաններում ևն աճեցնում նրանց:

Հայտնի յե, վոր միաժամանակ ցանած սերմերը միաժամանակ ծիլեր չեն տալիս, այլ սկզբում յերեան են դալիս հատ ու կենտ ծիլեր, ապա մասսայական կերպով և վերջում նորից հատ ու կենտ և ծլման այդ պրոցեսը յերբեմն տեսում է ամիսներ ու տարիներ՝ նայած թե ինչպիսի ծառասերմեր են ցանված և ինչպիսի պայմաններում է ծլեցումը կատարվում:

Սերմահանգստի ժամանակաշրջանը, ինչպիս նաև ծլունակության  $\frac{0}{0}$ -ը և ծլման եներգիան վորոշ չափով կախված են սերմերի հավաքելու ժամանակից և սերմերի հասունության աստիճանից: Վորքանիջնում է ծլունակության  $\frac{0}{0}$ -ը, այնքան ել թուլանում է ծլման եներգիայի կարողությունը: Բացի վերը թված ֆակտորներից, սերմահանգըստի ժամանակաշրջանի և ծլման եներգիայի պրոցեսների արագությունն զգալի չափով պայմանավորված են նաև հողակլիմայական պայմաններով, նայած թե դեպի վոր կողմն են նայում այն լեռնալանջերը, այսպիս ասած, եքսպոզիցիաները, վորտեղ ցանվում են սերմերը, և ինչպիսի հողակլիմայական ռեժիմ գոյություն ունի այդ վայրում:

Վոր ծլման եներգիայի, սերմահանգստի ժամանակաշրջանի և սերմերի աճեցնելու միջավայրի մեջ կա վորոշ կապ, դա անժխտելի յե, և վորքան վոր միջավայրը սերմեր ծլեցնելու համար նպաստավոր պայմաններ ունի, այնքան ել ծլման եներգիայի պրոցեսներն ավելի

ինտենսիվությամբ են տեղի ունենում և սերմահանգստի շրջանն ավելի կարծ ե լինում. ուս ևս անժխտելի յի:

Որիենտիրովկայի համար բերենք կամենուստեղնոյի անտառաշին փորձագիտական կայտնի տվյալները՝ բնորոշելու համար մի շարք ծառատեսակների սերմերի սերմահանգստի ժամանակամիջոցները:

№Ն բառ կար- գի	Մառատեսակներ	Ծերմերի ցանեւու ժամա- նակը	Ծիւերի յերեան դալու- ժամանակը
I	Թղթի լինային . . . . .	1897 թ. մայիսի 8-ին	1898 թ. մայիսի 25-ին
2	» » . . . . .	1898 թ. դեկտեմբերի 1	1899 թ. » 7-ին
3	» լայնատերեն . . . . .	1897 թ. մայիսի 5-ին	1898 թ. » 25-ին
4	» ամերիկական . . . . .	1898 թ. դեկտեմբ. 2-ին	1899 թ. » 7-ին
5	» թաթարական . . . . .	1897 թ. » 27-ին	1898 թ. » 14-ին
6	» » . . . . .	1898 թ. » 1-ին	1899 թ. » 7-ին
7	Ծիրան . . . . .	1897 թ. ազգիլի 22-ին	1898 թ. » 18-ըն
8	Սզնի սովորական . . . . .	1897 թ. » 22-ին	1897 թ. » 30-ին
9	Կեչի . . . . .	1897 թ. սեպտ. 29-ին	1898 թ. » 19-ին
10	Ցակակեռոս թաթարակ.	1896 թ. հոկտեմբ. 14-ին	1897 թ. » 29-ին
11	» » . . . . .	1897 թ. սեպտեմբ. 30-ին	1898 թ. » 20-ին
12	Հացի սովորական . . . . .	1897 թ. ազգիլի 24-ին	1898 թ. » 29-ին
13	» » . . . . .	1896 թ. հոկտեմբ. 14	1897 թ. » 13-ին
14	» » » . . . . .	1898 թ. սեպտ. 23-ին	1899 թ. » 19-ին
15	Տընտեր (հոճի)	1897 թ. մայիսի 7-ին	1898 թ. » 20-ին
16	» » . . . . .	1889 թ. » 3-ին	1899 թ. » 15-ին
17	» քելունդավոր . . . . .	1897 թ. նոյեմբերի 30	1899 թ. » 7-ին
18	Լորի . . . . .	1898 թ. սկսուսուի 8-ին	1899 թ. » 15-ին
19	» . . . . .	1898 թ. դեկտ. 1-ին	1900 թ. » 15-ին
20	Ցալարակեռոս (չերեմուխ)	1898 թ. նոյեմբ. 29-ին	1900 թ. » 7-ին
21	Տանձի . . . . .	1898 թ. դեկտեմբ. 2-ին	1899 թ. » 15-ին
22	Կծախուր . . . . .	1898 թ. » » »	1899 թ. » 3-ին
23	Մասրի . . . . .	1897 թ. նոյեմբ. 28-ին	1899 թ. » 1-ին
24	Տկողըն (ախիլ) . . . . .	1897 թ. » 27-ին	1898 թ. » 22-ին

Ենչողիս յերեռում ե, այս աղյուսակի պակասությունը կայանում է նախ նրանում, վոր լրիվ չե և մի շարք ծառատեսակներ բաց են թողնված: Բացի այդ, աղյուսակում տրված են միայն այն ծառատեսակները, վորոնք ունեն մեկ տարի սերմահանգստի ժամանակաշրջան:

Հաջորդ աղյուսակը ցույց է տալիս մի խումբ այնպիսի ծառատեսակներ, վորոնց սերմահանգստի ժամանակաշրջանը մեկ տարուց պակաս ե:

Սերմերի ցանելուց վոր-  
քան ժամանակից հետո  
յին ծիւեր տալիս:

Առճի . . . . .	
Կաղնի . . . . .	
Կեչի . . . . .	
Կաղամախի . . . . .	
Բնեղի . . . . .	
Ընկուզ . . . . .	

18—22 որ	
3—5 շաբաթ.	
2—3 >	
1—2 >	
7—10 որ	
2—5 շաբաթ	

Բացի այս աղյուսակում ցույց տրված ծառատեսակներից, կան  
մի շաբաթ այլ ծառատեսակներ են, վորոնց սերմերն ունեն 1—3 տարի  
սերմանանգստի ժամանակամիջոց, ինչպես, որինակ՝ զիհի, անփուռ,  
սալորակեռաս, դլյաղիչ և այլն, վորոնց վրա մենք կանգ չենք առ-  
նում, վորովհետեւ սորատիֆիկացիայի միջոցով մենք հնարավորություն  
ունենք այդ ժամանակամիջոցները կրնատելու, վորի մասին կանգ  
կառնենք քիչ հետո:

Սերմանանգստի ժամանակաշրջանը սերտ կերպով կառված և ծը-  
լելու հներդիայի հետ:

Շլելու եներգիա ասելով հասկանում ենք սերմերի ծլելու արա-  
գության պրոցեսը Շլելու ընդունակ բոլոր սերմերը ցանելուց հետո  
վորոշ ժամանակաընթացքում տալիս են ծիւեր և այդ ամբողջ ծիւերի  
թիվը կոչվում և ծլունակուրյան  $\frac{9}{10}$ -ը:

Իսկ սերմերի այն թիվը, վորը ծիւեր և տալիս ամբողջ սերմերի  
ծլելու ժամանակի մեջ յերրորդի ժամանակամիջոցում, կոչվում և ծլե-  
լու եներգիա:

Այսպես, որինակ՝ յեթե ցանված սոճու սերմերն ամբողջովին ծիւ-  
եր են տալիս 21 որվա ընթացքում, ապա առաջին 7 որվա ընթաց-  
քում ծրած սերմերի քանակը կոչվում է ծլելու հներդիա:

Վորքան վոր ծլելու պրոցեսն արագ և կատարվում, այնքան ել  
կարճ և տեսում ամբողջ սերմերի ծլման ժամանակաշրջանը, այնքան  
ել բռնակները միահասակ են լինում և զոյտթյուն կովի համար զի-  
մացկուն Ահա թե ինչու համար խիստ կարեոր և խմանալ առանձին  
ծառատեսակների ծրման հներդիան:

## ՍԵՐՄԵՐԻ ՍՏՐԱՏԻՖԻԿԱՑԻԱ

Այն ծառասերմերը, վորոնք ունեն յերկար սերմահանգստի ժամանակաշրջան, ինչպես, որինակ՝ հացին, թղկին, լորին և այլն, նախքան հողի մեջ ցանելը, նախորոք ստրատիֆիկացիայի յեն յենթարկվում, ապա ցանվում:

Ստրատիֆիկացիա ասելով հասկանում ենք ծառասերմերը ցանելու համար այնպես նախապատրաստելը, վորակեսղի նրանց սերմահանգըստի ժամանակաշրջանը կրճատվի և ցանելուց հետո նրանք կարճ ժամանակում ծիլեր տան:

Վորովինետեւաշնան սերմերը հավաքելուց հետո անմիջապես ցանելը միշտ հնարավոր չե, վորի պատճառով ել ծառացանի մի մասը կատարում են դարնանը, իսկ մի շարք ծառասերմեր (հացի, թղկի և այլն) դարնանը ցանելուց հետո ծիլեր կտան միայն հաջորդ դարնանը, և այդ հանգամբնքը տնտեսական ու անտառագիտական նկատառումներով ձեռնտու չե, ուստի անհրաժեշտություն ե զգացվում այդպիսի օհրմերը նախքան ցանելը ստրատիֆիկացիայի յենթարկել և նախապատրաստել ցանելու համար:

Վորովինետեւ ստրատիֆիկացիայի նպատակն ե արագացնել սերմերի ծլման պրոցեսներն ու կրճատել սերմահանգստի ժամանակաշրջանը, ուստի այդ նպատակի համար կիրառում են ստրատիֆիկացիայի մի շարք մեթոդներ ու միջոցներ: Այդ միջոցների ու մեթոդների թվին ե պատկանում քիմիական նյութերով (քլորաջրով, ֆուֆորային, աղային, ծծմբական և այլն թթվուտներով) սերմերի վրա ներգործելը, վորոնք փափկացնում են նրանց մաշկը և արագացնում նրանց ծլման պրոցեսները:

Այդ ուղղությամբ յեղած փորձերը դժբախտաբար հիմնականում վերաբերում են ասեղնավոր ծառատեսակների սերմերին, այն ե՝ սոճուն ու յեղենուն, և փորձերի լաբորատոր բնույթ կրելու պատճառով պժվար և մեր պայմանների համար արտադրական նշանակություն ունեցող յեղբակացությունների հանգել: Բացի այդ, ամեն դեպքում քիմիական նյութեր ձեռք բերել հնարավոր չե և առանձին բարդությունների հետ և կապված:

Բայտ իրենց մաշկերի հաստության և գիմացկունության, մի շարք ծառասերմերի ստրատիֆիկացիան նպատակահարմար ե կատարել վոչքիմիական նյութերով. այդ նպատակի համար, բացի քիմիական նյութերի ներգործումից, կիրառում են ստրատիֆիկացիայի ավելի մատչելի միջոցներ ու մեթոդներ, ինչպես, որինակ՝ տաք ջրով խաշելը

(ակացիայի և գլյադիչայի սերմեր), ջրով թրջելը (ընկուղենու և այլ սերմեր) և խոնավ ավազահողում հոլելը (հացենու, թղկենու, լորենու և այլ սերմեր):

Ստրատիֆիկացիայի գոյություն ունեցող բոլոր ձևերից մենք կանգ կառնենք միայն մի քանիսի վրա, վորոնք մեր պայմաններում ավելի մատչելի յեն և առանձին բարդությունների հետ կապված չեն:

1. Սերմերը պահել ձյանի մեջ.—Աշնանը հավաքելով հաստակեղեն (հացու, թղկու, բոխու, լորու) սերմերը, հենց այն վայրում, վորտեղ այդ սերմերը գարնանը պիտի ցանեն, պահում են ձյունի մեջ։ Փորելով մեկից մինչև մի քանի մետր յերկարությամբ և լայնությամբ և 20—25 սանտիմետր խորությամբ հողափոսեր, այդ փոսերի մեջ մինչև 5 սանտիմետր հաստությամբ փոռում են հիշյալ հաստակեղեն սերմերից և ծածկում են մի բարակ հողաշերտով, վորի վրա լցնում են ձյան բավական հաստ շերտ։ Գարնանը ձյունը հալչելիս ծծվում է բարակ հողի շերտի մեջ, ապա սերմերի մեջ։ Վերջիններս ուռչելով, նրանց մաշկը փափկանում է, պատռում են իրենց պատյանը և պատրաստվում են ծիլեր տալու։ Այդպիսի սերմերի ցանելուց ստացվում են համաչափ և լավ ծիլեր։

2. Սերմերի ստրատիֆիկացիան ավագահողում.—Փորելով լայն և յերկար փոսիկներ՝ մինչև 30—40 սանտիմետր խորությամբ, նրանց մեջ լցնում են ստրատիֆիկացիայի յենթակա թրջած սերմեր, նտխորոք նրանց լավ խառնելով խոնավ ավազահողի հետ։

Բացի այդ ձևից, այդ նույն փոսերի մեջ լցնում են յերկուսից յերեք սանտիմետր հաստություն ունեցող թրջած սերմերի շերտեր։ Փոխառվոխ լցնելով նույն հաստության խոնավ ավազահողի շերտեր։ Այդ ձևով պահած սերմերն ուռչելով, գարնանն արդեն պատրաստ են լինում ծիլեր արձակելու։

3. Սերմերի ստրատիֆիկացիան արկղներում.—Խոնավ ավազահողի հետ խառնված սերմերը լցնելով արկղների մեջ, պահում են կամ բացոթյակամ թե ցուրտ նկուղներում և ձմեռվա ընթացքում յերբեմն ջուր են շաղ տալիս նրանց վրա։

Այդպիսի սերմերը պահելով մինչև գարուն, ցանում են և հենց այդ գարնանն ստանում ծիլեր։

Վերը թված բոլոր դեպքերում սերմերը պիտի պահել  $0^{\circ}$  սահմաններում։ Խոնավությունը պիտի լինի համաչափ և ողը մատչելի։

4. Ստրատիֆիկացիա ջրի միջոցով.—Ծառասերմերի ծլման պըսցեսներն ավելի արագացնելու համար շատ հաճախ դիմում են ջրի ողնության։

Հաստ և տմուր պատյան ունեցող սերմերը, ինչպես, որինակ՝ գլուխադիշայի և սպիտակ ակացիայի սերմերը, թրջում են յեռացրած ջրով։ Այս դեպքում այդ սերմերը լցնում են Ը 60° տաքություն ունեցող ջրի մեջ, յերկու ժամ պահում, մի քանի անգամ խառնում, ապա ջուրը քամում և փափկացած, ուռոճացած սերմերը մի քանի բոպեյում փռելով՝ ցամաքեցնում են, ապա ցանում։

Այդ աշխատանքները կատարելու համար պահանջվում է զգաստություն ու հմտություն։ Բացի յեռացրած ջրից, շատ տեսակի սերմեր թրջում են ուղղակի սովորական սառնություն ունեցող ջրով։ Նայած թե ինչ հաստություն և ինչ ամրություն ունեն սերմերի պատյանները, դրանով ել վորոշում են ջրի մեջ պահելու տևողությունները։ Այսպես, յեթե թրջվող սերմերի պատյանը շատ բարակ է, նրանց ջրի մեջ յերկար պահելը միտք չունի, վորովհետեւ սերմերն ուռչելով նրանց մեջ սկսվում են ֆիզիոլոգիական արագ պրոցեսներ, և համապատասխան քանակությամբ թթվածին չլինելու պատճառով սերմերը կարող են փչանալ։

Բացի այդ, սերմերը շատ յերկար թրջած պահելու դեպքում նըրանք կարող են բորբոսակալել և սնկային ու բակտերիալ հիվանդություններով վարակվել։

Ընկուղինու սերմերն արագ կերպով ծլեցնելու և չքարուկների, միների, աղոամբերի, կաչաղակների և այլ կենդանիների հավատակումներից փրկելու նպատակով՝ Գառնիի տնկարանում 36 թվի գարնանն ընկուղներն ամրող մի շաբաթ պահելուց հետո միայն ցանեցինք։ Մեր այդ փորձերը ցույց տվին, վոր ավելի նպատակահարմար և ընկուղները յերկու որ թրջած պահելուց հետո ջուրը բաց թողնել, մեկշերկու ժամ քամահարելուց հետո նորից թրջել և այդպես մի քանի անգամ կրկնելուց հետո ընկուղների մեծ մասի պատյանները ճաքեցին և արդեն պատրաստ ելին սաղմերը դուրս քշել։

Այդ մեթոդի կիրառումը հնարավորություն տվեց մեզ սերմերը ցանելուց հետո 10—12 յերրորդ որում ծիլեք ստանալ։

5. Քիմիական լեզվայի միջնորդությունը։—Քիմիական լուծույթներով սերմերի վրա աղղելու և նրանց ստրատիֆիկացիայի յենթարկելու ձեռնարկությունների նպատակը վոչ միայն սերմերի ծլեցնելու պրոցեսների արագացումն եւ և սերմահանդստի ժամանակաշրջանի կրճատումը, այլև նրանց ծլունակության  ${}^{\circ}/_{\circ}$ -ի բարձրացումն եւ և ծլման եներգիայի արագացումը։

Այդ ուղղությամբ կատարված մի շաբաթ փորձերն ապացուցում են, վոր քիմիական այս կամ այն լուծույթը ստրատիֆիկացիոն միջոց

Միներով հանդերձ, միաժամանակ «զրդոխ» միջոց եւ սերմերի ծլունակությունը բարձրացնելու համար:

Մենք արդեն ասել ենք, վոր քիմիական նյութերով ներգործելու փորձերի արդյունքներն առայժմ արտադրական յեղրակացություններ անելու հնարավորություն չեն տալիս, բայց Վորոնեժի Գյուղատնտեսական ինստիտուտի անտառային փորձագիտական կայանի կողմեց սոճենու սերմերի վրա ներգործելով  $MnCl_2$  0,36% լուծույթով,  $Mg (SO_4)$  0,16% լուծույթով,  $NaNO_3$  0,20% լուծույթով, ֆորմալինի 0,16% պարունակությունով, տվել են դրական արդյունքներ. ծլունակության 0% ը, ըստ նրանց տվյալի բարձրացել է:

Բացի քիմիական նյութերից, վերջին ժամանակներս պրոֆ. Սուկաչովը և ուրիշները մի շարք փորձեր են կատարել սերմերը ունտենիղացիայի յինթարկելու ուղղությամբ. ստացված արդյունքները թեպետ և դրական են, բայց դեռ վաղաժամ ե վորեւ արտադրական նշանակություն ունեցող յեղրակացություն անելու, վորովհետեւ այդ փորձերը դեռ շարունակվում են:

### ՍԵՐՄԵՐԻ ՎՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Սերմերի վորակը, այսինքն՝ ծլունակության, սերմահանգստի արջանը, նրանց տնտեսական պիտանիությունն ստուգելու համար կիրառում են յերկու մեթոդ. ա) հասարակ աչքով արտաքին զննումներ կատարելու և հատկությունների հետ ծանոթանալու և բ) սերմերը ծլեցնելու մեթոդ:

Սերմերը ծլեցնում են բնական պայմաններում, այն եւ հողամարդերում և լաբորատոր պայմաններում—այդ նպատակի համար զանազան սխտեմների ապարատներում. Սերմերը լավ ուսումնասիրելու համար շատ հաճախ թե լաբորատոր և թե բնական պայմաններում դուդահեռ կերպով սերմերը միաժամանակ դնում են յերկու տարբեր ապարատների մեջ՝ մեկով մյուսը կոնտրոլի յինթարկելու նպատակով:

Սերմերի ծլեցնելու համար հարմարությունների բացակայության և բարդություններից խուսափելու, ինչպես նաև ժամանակը շահելու տեսակետից հաճախ սերմերի վորակն ստուգում են հասարակ աչքով: Այդ մեթոդի կիրառման դեպքում հայտարերվում են մի շարք նշաններ, վորոնք այս կամ այն ծառասերմերի համար շատ թե քիչ կայուն հատկանիշ են հանդիսանում:

Ծառասերմերն ընդհանրապես պարունակում են վորով 0% յուղ

(Ճեթ) և դանակով նրանց հատելիս կամ վորեե բանով ճղմելիս նկատելի յե յուղի հետք և շատ հաճախ արձակում են հոտ (սոճի, յեղանի և այլն):

Առողջ սերմերը մաքուր և սպիտակ թղթի վրա ճղմելիս թողնում են յուղոտ լաքայի հետքեր: Առողջ և լիքը սերմերը տաք բովի մեջ գցելիս ուռչում են և ճայթելով թռչում, իսկ փուչ և վատ վորակ ունեցողները կամաց-կամաց այրվում և ածխանում են:

Թղկու առողջ սերմերը դանակով հատելիս ունենում են առողջ և կանաչավուն միջուկ, իսկ հացու սերմերը՝ կապտավուն գույնի միջուկ: Կաղնու սերմերի պատյանը պիտի կպած լինի միջուկին, հակառակ դեպքում միջուկը (շաքիլը) փչացած ե կամ չորացած, և սերմը ցանելու համար պիտանի չե:

Առողջ շաքիլներ ունեցող կաղինն ունենում է դեղնասպիտակավուն գույն, իսկ յեթե կարմրավուն գույն ունի, դա նշան և, վոր սկըսմել ե ծլման պրոցեսը:

Հիվանդ, փուչ և ծլելու համար վոչ պիտանի կաղինները կարելի յե հայտաբերել սերմացուն ջրի մեջ լցնելով. այդ դեպքում առողջներն իջնում են ջրի տակ, իսկ փուչ ու անորակները բարձրանում են ջրի յերես: Սոճու թարմ սերմերն ունենում են հաճելի համ, փայլուն տեսք և ուժեղ բևեկնածեթի հոտ: Տանձի և խնձորի թարմ սերմերն ունենում են սպիտակ գույն և հաճելի ու քաղցր համ:

Ծիրանի, սալորի և այլ կորիզավորների առողջ սերմերն ընդհանուր առմամբ իջնում են ջրի հատակը, իսկ փուչերը դուրս են գալիս ջրի յերեսը:

Հաճարենու առողջ սերմերը լիքն են և նրա յերեք անկյունները լինում են հարթ և ուղիղ:

Ծառասերմերն ստրատիֆիկացիայի յենթարկելուց հետո ուռչում են և փոխվում ե նրանց ձևն ու գույնը, հետեւաբար, այս նշանները միշտ կայուն լինել չեն կարող, դրա համար ել ծառասերմերի վորակը վորոշելու համար ամենաճիշտ մեթոդը՝ նրանց փորձի կարգով ծլեցնելու մեթոդն ե:

Ժամանակի, ինչպես նաև նյութերի խնայողության և հարմարությունների կոմպլեքս ու նպատակահարմար ոգտագործելու տեսակետից ծլունակության <sup>9/0</sup>-ը, սերմահանգստի ժամանակաշրջանը և ծըլման եներդիայի վորոշումը կարելի յե մի ընդհանուր փորձով կատարել: Այդ հարցերի լուծման համար փորձերը կատարում են լաբորատոր պայմաններում—այդ նպատակների համար ստեղծված Լիբենբերդի, Աղիյելսկու և այլ ապարատներում և բնական պայմաններում՝ հողամարդերում:

Սերմերի ծլեցնելու համար ստեղծված այս բաղմաթիվ հարմարությունները և ապարատները տարբերվում են իրենց կոնստրուկցիաներով, ուստի և նրանցով կատարած փորձերի արդյունքները տալիս են տարբեր ցուցանիշներ և տարբեր յեզրակացությունների յեն հանգեցնում. այդ իսկ պատճառով ել առանձին ծառատեսակների համար պիտի ընտրել համապատասխան ապարատներ:

Ստուգման համար վերցրած սերմերի նմուշներն անպայման պիտի բավարարեն հետեւյալ ոլահանջներին.

ա) Փորձի համար վերցրած նմուշներն իրենց սերմերի մեծությամբ, մաքրությամբ, առողջությամբ և այլ հատկությունների միջին տվյալներով պիտի համապատասխանեն տվյալ պարտիայի ամբողջ սերմերին:

բ) Ստուգման յենթակա նմուշը իրեն հետ պիտի ունենա իր նկարագրությունը, այն եւ հայերեն, լատիներեն, և, յեթե հնարավոր ե, ռուսերեն անունը, յերբ ե հավաքված (տարին, ամիս, թիվը), վորտարվա բերքից ե հավաքված (վորտեղ, շրջան, անտառամաս, սարալանջ—հյուսիսային, հարավային և այլն), ծովի մակերեսութից ինչ բարձրության վրա: Նմուշը վերաբերում ե . . . կիլոլանոց, կամ մետր, կամ արկղ պարտիային:

Աչքով վորակն ստուգելիս անհրաժեշտ ե, վոր ստուգման արդյունքներն ամփոփեն հետեւյալ կերպ, վորպես տվյալ սերմի վորակի անցագիր.

1. Հիմնարկության անունը . . . . .
2. Ծառատեսակի անունը . . . . .
3. Պատրաստած սերմի քանակը. . . . .
4. Սերմերի պարտիայի քանակը. Վորից նմուշ և վերցվում . .
5. Ծլունակության վորոշումը դանակահատումով. . . . .
6. Նմուշի նկարագրությունը (վորտեղից ե հավաքված, յերբ և հավաքված և այլն) . . . . .
7. Հավաքված տեղի նկարագրությունը և այլն. . . . .

#### Ստուգագրություն

##### Անցագրի յերերորդ յերեսը.

1. Հատված ե . . . հատ, վորոնց ընդհանուր քաշը . . . գրամ.
2. Մեկ հատի միջին քաշը . . . . . գրամ.
3. Հատվածներից<sup>3</sup>  
ա) առողջ . . . . հատ, վորը կազմում ե նմուշի . . .  $\frac{0}{0}$ -%ը,  
բ) փուչ . . . . հատ, վորը կազմում ե նմուշի . . .  $\frac{0}{0}$ -%ը,  
գ) վնասվածներ . . . հատ, վորը կազմում ե նմուշի . . .  $\frac{0}{0}$ -%ը,  
վորից մնացած են՝ սնկային հիվանդությամբ . . . հատ . . .  $\frac{0}{0}$ -%ը,

միջատներով . . . . . հատ . . . . . %, նեխածներ . . . հատ  
· · · %, փշացած սաղմերով . . . . հատ . . . . %<sup>2</sup>

## Սուրագրություն

Քանի վոր կաղինի վորակը կարելի յե ստուգել ջրի մեջ ընկղմելով, ապա կարելի յե առաջնորդվել հետեյալ ձևով.

ԿԱՂԻՆԻ ԾԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԶՐԻ  
ՄԵԶ ՀՆԿՂՄԵԼՈՎ



Սարագրություն

Ծլեցնելու մեթոդ.—Ստուգման յենթակա սերմերի պարտիայից (մեշոկից) ծլեցնելու համար նմուշը վերցնում են վերին, միջին և ներքին մասերի տարրեր խորություններից, ապա լավ խառնելով իրար, դրանից առանձնացնում են հարյուր հատ սերմ և սկսում ծլեցնել:

Ծլեցման համար ամենահասարակ մեթոդը հողամարգերում ցանելու և ծլման արդյունքների ամենորյա հաշվառման մեթոդն է։ Այդ նպատակի համար պիտի ընտրել մի փոքրիկ, հարմար, վորակով և անասուններից պաշտպանված հողակտոր ընդամենը 1—2 քառ. մետր տարածությամբ և համաչափ խորությամբ և ցանել սերմերը։ Բացի հողամարգերում ցանելուց, ծլեցումը կարելի յէ կատարել նաև ծաղկամաններում և արկղներում, վորոնց մեջ պիտի լցնել թրջած ավազ, կամ խղարաթեփ և հաճախ ջուր լցնելով նրանց վրա, միշտ խոնավ պիճակում պահել։

Բայց պիտի ասել, վոր այդ մեթոդները շատ պրիմիտիվ են և

դժվար և սերմերի ցանելու խորության, խոնավության և այլն մռամբնտների համաչափություն պահպանել և հաշվառում կատարել: Դրա համար ել այդ մեթոդները դրական արդյունք են տալիս միայն մեծ սերմերի նկատմամբ, ինչպես, որինակ՝ ընկուզ, կաղին և այլն:

Ուստի անհրաժեշտություն ե զգացվում ստուգումները կատարել լաբորատոր պայմաններում: Լաբորատորիայում սերմածլեցման ամենաապարդ ձեր հետեւյալն ե.


Մի ափսեյի մեջ փռում են ծծողական թուղթ կամ ֆլանելի կըտոր և նրա վրա շարում են 100 հատ սերմ, ապա ծածկում են ծծողական թղթով և թրջում նրան այնքան, վորպեսզի սերմերը չմնան ջրի տակ և չպրկվեն ողից: Ամեն որ հետեւում են, եյեթե խոնավությունը գոլորշիացել ե, նորից են թրջում և ծխած սերմերի թիվը հաշվեառնում ու նրանց դեն դցում:

Սերմերին անընդհատ և համաչափ խոնավություն հաղորդելու նպատակով, լամպայի պատրույգի սկզբունքի վրա հիմնված՝ ֆլանելից ժապավեն են կտրում, վորի մի ծայրը դնում են ափսեյի մեջ ծծողական թղթի վրա, իսկ մյուս ծայրը՝ ջրով լցրած մի այլ ամանի մեջ, վորն անընդհատ և համաչափ ջուր ծծելով ծծողական թղթին հաղորդում ե խոնավություն (տես նկար 1): Ամենորյա ծլածները ի վերջո ամփոփում են և վորոշում ծլունակության 0/0-ը, սերմահանգստի շըրջանը և ծլման եներգիան:

Թրջելու համար ձնաջուրը և անձրևաջուրն ամենալավ արդյունքներն են տալիս, ուստի պիտի խուսափել այնպիսի ջրերով թրջելուց, վորոնք հանքային նյութերով հարուստ են: Սերմերը մաքուր պահելու նպատակով, լավ կլինի ափսեյի բերանը թափանցիկ ապակով ծածկել այնպես, վորպեսզի ողը ազատ մուտք գործի:


Սերմածլեցման համար գործական մեջ դանըլվող ապարատներից իրենց կոնստրուկցիաների պարզությամբ ու մատչելիությամբ ուշադրության արժանի յեն հետեւյալ ապարատները.

1. Ագիյեվակու ապարատ.—Իրենից ներկայացնում ե ապակյամի սովորական բաժակ՝ ծածկված ապակյա մի կլորակով (վորպես խուփ), վորն իր կենտրոնում ունի մի կլոր անցք: Այդ կլորակի վրա




Նկ. 1. Սերմերի ծլունակության գործակելը

փոռւմ են մահուղի կտոր, իսկ մահուղի կտորին կարված և մի պատրույգ, վորը կլորակի անցքով իջնում և նրա տակի ջրով վրը բաժակի մեջ, իսկ մահուղի վրա փոռւմ են ծծողական թուղթ, վորը պատրույգի և մահուղի միջոցով ստանում են խոնավություն։ Կլորակի վրա փռած ծծողական թղթի վրա դասավորում են ծլման յենթակա սերմերը և ծածկում մի այլ ապակյա բաժակով, վորի հատակի կողմը նեղ ե և իր կենտրոնում ունի անցք՝ ողափոխություն կատարելու համար (տես նկար № 2)։



Նկ. 2 Աղիկուկու գործիքը

**Նոբելի ապարատը.**—Կավից պատրաստած և կիսաթրծած, 5 սանտիմետր հաստությամբ և 20 սանտիմետր լայնություն ու յերկարություն ունեցող քառակուսի մի շերտիկ ե, վորի կենտրոնում շրջադաշտային փոս և պատրաստված՝ ջուր լցնելու համար։ Կավային այդ շերտիկի կենտրոնական մասում արված են փոսիկներ, վորտեղ դասավորում են աճեցվող սերմերը (տես նկ. 3)։






Նկ. 3. Նոբելի ապարատը

Այդ շերտիկը ծածկում են կավե մի ծածկոցով այնպես, վոր նրանց մեջ մնում է վորոշ ազատարածություն։ Կիսաթրծած շերտիկի ծակոտիներով խոնավությունը հասնում և սերմերին, և վերջիններս այդ խոնավությունից սկսում են ծլել։ Ծլման ար-

Դյունքների հաշվառումը կատարվում է այնպես, ինչպես վերը նկարագրեցինք:

Լիբինիքերգի տպարտը.—Գոյություն ունեցող բաղմաթիվ ապարատներից մեր կարծիքով ամենից հարմարը պիտի համարել Լիբենքերգի ապարատը, մանավանդ վոր այս ապարատում կարելի յե ավելի մեծ քանակությամբ սերմեր ծլեցնել, կամ մի շարք տարրեր ծառասերմերի ծլեցման փորձերը միաժամանակ կատարել: Այս ապարատն իրենից ներկայացնում է 50 սանտ. յերկարությամբ, 30 սանտ. լայնությամբ, 5 սանտ. խորությամբ ցինկից պատրաստված մի արկղ:

Արկղի ներսում, լայնությամբ, յերկու կողմերում ամրացված են մետաղյա, այսպես ասած՝ թեվիկներ, վորոնց վրա իրարից վորոշ հեռավորությամբ դնում են ապակյա շերտիկներ: Այդ շերտիկների վրա վորում են ծծողական թուղթ, վորը շերտիկի յերկու կողմերից կախվում է արկղի մեջ: Ծծողական թղթի վրա դասավորում են սերմերը իրակ արկղի մեջ լցնում են ջուր, վորը հասնելով ծծողական թղթի ծայրերին, վերջինս սկսում է ջուրը ծծելիր մեջ և խոնավությունը հաղորդել սերմերին (տես նկ. 4): Միապաղաղ խոնավություն ու ջերմություն պա-



հելու համար արկղը ծածկում են ապակյա ծածկոցով այնպես, վորպեսզի արկղի մեջ ողիք փոփոխություն կատարվի: Բոլոր դեպքերում ել ծլած սերմերի արդյունքներն ամփոփում են այնպես, ինչպես նկարագրել ենք վերը:

Բացի վերը նկարագրված ապարատներից, կան մի շարք այլ ապարատներ և ծլեցնելու հարմարություններ, որինակ՝ տերմոստատների մեջ, ելեկտրական լույսի ու ջերմության տակ և այլ ծլեցնելու ապարատներ, վորոնց վրա մենք կանգ չենք առնում:

Նկ. 4. Լիբենքերգի դուծիքը  
և յերկայնակի հատվածքը, Յ տեսքը վերևոց,  
С լայնակի հատվածք

ներ, ինչպես, որինակ՝ տերմոստատների մեջ, ելեկտրական լույսի ու ջերմության տակ և այլ ծլեցնելու ապարատներ, վորոնց վրա մենք կանգ չենք առնում:

Այս կամ այն ապարատում դասավորելով սերմերը, հետեւմ են նրանց ծլման պրոցեսներին և ժամանակին կատարում համապատասխան հաշվառում:

Իրենց յերկարության չափով ծիլեր տված մանր սերմերը և իրենց յերկարության կիսից վոչ պակաս չափով ծիլեր տված մեծ սերմերը (ընկուզ, կաղին և այլն) արդեն համարվում են ծլած։ Աճած սերմերի քանակն ամբողջ ծլեցվող սերմերի նկատմամբ արտահայտում են տոկոսներով, վորը, ինչպես վերն ասել եմ, կոչվում է ծլունակության տեխնիկական  $\%$ ։ Այսպես, յեթե փորձարկած 100 սերմերից ծիլեր են տվել 85 հատ, այն ժամանակ ծլունակության  $\%$ -ը հավասար է 85-ի։

Թյուրիմացություններից և պատահականություններից խուսափելու համար մեկ հարյուրյակի փոխարեն պիտի աճեցնել մի քանի հարյուրյակ սերմեր, և բոլոր ծլած սերմերը գումարել և բաժանել այնքան հարյուրյակների, վորքան վոր ծլած է յեղել, այն ժամանակ կստացվի ծլունակության միջին  $\%$ -ը։

Ծլած սերմերի քանակը՝ ամբողջ սերմերի նկատմամբ տալիս են մեղ ծլունակության բացարձակ տոկոսը։

Տեխնիկական ծլունակության և մաքրության տոկոսների առատադրյալը բաժանած 100-ի, տալիս են մեղ սերմերի տեսեսակառ պիտօնիությունը։ Դիցուք թե տեխնիկական ծլունակության տոկոսը հավասար է 85-ի, իսկ մաքրության տոկոսը հավասար է 90-ի, այն ժամանակ տնտեսական պիտանիությունը կլինի  $\frac{85 \times 90}{100} = 75,5$ ։

Ամբողջ ժամանակում աճած սերմերի թիվը, ինչպես ասացինք, կոչվում է ծլունակության տոկոս, իսկ ծլած սերմերի այն թիվը, վոր աճում է ամբողջ ժամանակի  $\frac{1}{3}$ -ի ժամանակաշրջացքում՝ արտահայտած տոկոսներով, կոչվում է ծլման եներգիա (արագություն)։

Փորձի համար ծլեցվող սերմերն ապարատում դնելուց հետո, դիցուք թե 4-րդ որում, ծլում են 10 հատ, 5-րդ որում՝ 15 հատ, 6-րդ որում՝ 20 հատ և 7-րդ որում՝ 15 հատ։ Յեթե բաղմապատկելու լինենք ծլելու ժամանակները ծլած սերմերի քանակով և ստացած արտադրյալի գումարը բաժանենք ծլած սերմերի ընդհանուր թվի վրա, կըստանանք սերմանական ժամանակամիջոցը։ Հստ մեր որինակի, սերմանանդստի ժամանակաշրջանը հավասար կլինի՝

$$\frac{4 \times 10 + 5 \times 15 + 6 \times 20 + 7 \times 15}{60} = 5,6 \text{ որում}$$

Նախորոք իմանալով սերմերի այդ հատկությունները, շատ հեշտ կլինի անցնել ծառասերմերի հավաքման կազմակերպական աշխատանքներին, իսկ նախքան այդ, անհրաժեշտ է համառոտ տեղեկություններ տալ առանձին ծառատեսակների մասին, վորոնց նկարագրությանը կանցնենք ստորև։

ՄԵՐ ԱՆՏՍՈՒԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ  
ՆՐԱՆՑ ՍԵՐՄԵՐԸ

Արհեստական անտառացման, անտառների բնական վերաճին նպաստելու, լեռնաանտառային ագրոմելիորատիվ ձեռնարկումների, ինչպես նաև քաղաքների ու ավանների կանաչազարդման և այլ տիպի զանազան նպատակային ծառուտների ստեղծման համար ստորև համառոտակի կերպով նկարագրենք այն դլխավոր ծառերի ու թփուտների տեսակները, վորոնք մեր լեռնային պայմաններում շատ թե քիչ տարածված են և իրենց կենսաբանական հատկություններով ու տնտեսական նշանակությամբ համապատասխանում են վերը թված բնագավառների պահանջներին ու կլիմայական պայմաններին, և վորոնց դարկ տալը հնարավոր եւ արդյունավետ:

Հայտնի յեւ, վոր բոլոր ծառատեսակներն ըստ իրենց տերևների ձևի, կաղմի և մի շարք այլ հատկությունների բաժանվում են յերկու դլխավոր խմբերի.

ա) փշատերև կամ ասեղնավոր (սոճի, գիհի, անփուտ և այլն) և  
բ) տերևավոր կամ, ինչպես ասում են, լայնատերև ծառատեսակներ (հաճարի, թղկի, կաղնի և այլն):

Թե առաջին և թե յերկրորդ խմբերը, վորպես բնության արտադրողական ոգտակար ուժերից մեկը մեր տնտեսական կյանքում, մեծ դեր են խաղում: Հիշյալ յերկու խմբերին պատկանող բոլոր ծառատեսակները մեծ հաջողությամբ այս կամ այն նպատակի համար ոգտագործվում են: Արդյունաբերության, գյուղատնտեսության և այլ բնագավառների զարգացումը նորանոր պահանջներ և ներկայացնում դեպի անտառային տնտեսությունը և մի շարք ծառատեսակներ, վորոնք մինչև վերջին տարիները համարվում եյին «անարժեք» կամ «քիչ արժեքավոր», արդյունաբերության նոր ճյուղերի առաջացման հետեւ վանքով այդ կարդի ծառատեսակների համար բացվել են լայն հեռանկարներ: Այսպես, որինակ՝ մեր սովորական անտառային կաղամախին, վորը մինչև վերջին տարիներս համարվում եր «անտառային մոլախոտ» և, վորպես փափուկ ու շինարարության համար վոչ պիտանի ծառատեսակ, աշխատում եյին վոչնչացնել՝ առաջնություն տալով ուրիշ ծառատեսակներին: Այժմ այդ վերաբերմունքը հիմնականում փոխվել ե, վորովհետեւ արհեստական մետաքսի և լուցկու արդյունաբերության համար կաղա-

մախին կազմում ե հումքի հիմնական բաղա։ Հայաստանի Անտառային տնտեսության հիմնական պաշարը կազմող հաճարենին մինչև վերջին տարիներս համարվում եր «յերկրորդական նշանակություն ունեցող ծառատեսակ», բայց վերջին ժամանակներս, շնորհիվ արդյունաբերության համապատասխան ճյուղերի զարգացման, այդ ծառատեսակն առաջնակարգ նշանակություն ձեռք բերեց և դարձավ եքսպորտ նշանակություն ունեցող ծառատեսակ։

Սոցիալիստական պլանային ինտենսիվ տնտեսության պայմաններում բոլոր ծառատեսակների նպատակահարմար ոգտագործման համար բացվել են լայն հեռանկարներ։ Վորպես մեր խիստ ընդդժված ուլյեֆին հետեանք՝ հողակլիմայական տարրեր զոնաների նպատակահարմար ոգտագործումը տարրեր ծառատեսակների աճեցման համար մեր յերկրի զարգացման ընդհանուր շահերի տեսակետից որվա խնդիր ե դարձել։ Նայած թե ինչ նպատակներ են հետապնդում անտառկուլտուրական ձեռնարկումները, համապատասխան դրան ել պիտի կատարել ծառատեսակների ասորտիմենտի ընտրությունը։ Արհեստական անտառանեցման նպատակով ծառատեսակների համապատասխան ընտրություն կատարելու համար անհրաժեշտ ենք համարում համառոտ կերպով թվել անտառտնտեսության համար կարեռը ծառատեսակների տնտեսական և կենսաբանական հատկությունները։

### ՓՇԱՏԵՐԵՎ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ

Այս խմբին են պատկանում հարյուրավոր տեսակներ, վորոնք տարածված են ամբողջ աշխարհում։ Սակայն նրա գլխավոր տեսակները՝ սոճին, յեղենին և կեղրը, հիմնականում տարածված են Խորհրդային հյուսիսում և կազմում են աշխարհի փշատերեւ ծառատեսակների հիմնական պաշարը։ Փշատերեների խմբին պատկանող ծառատեսակներն իրենց մեծությամբ խիստ տարրերվում են, սկսած փոքրիկ թփուտներից, ինչպես մեր լեռնալանջերում աճող ցածրահասակ դինին, և վերջացրած աշխարհի ամենախոշոր և ամենայերկարակյաց մամոնտի ծառով, վորի բարձրությունը հասնում է մինչև 150 մետրի, տրամագիծը՝ 20 մետրի և ազգում է մինչև 5000 և ավելի տարի։ Այդ վիթխարի ծառն աճում ե Ամերիկայի Կալիֆորնիա նահանգում։ Փշատերեւ ծառատեսակները՝ շինարարության ու արդյունաբերության մեջ վորպես շինանյութ և վերամշակման համար հումք, մեծ դեր են խաղում։

Բնորոշ և, վոր նրանք բազմանում են բացառապես սերմերով և ընդունակ չեն ընձյուղներ տալու։ Փշատերեւ ծառատեսակներն ոգտագործվում են ամենաբազմազան կարիքների համար։ Վորպես Հայաստանի հողակլիմայական պայմանների հետեանք՝ փշատերեւ ծառատե-

սակների ներկայացուցիչների միայն յերեք տեսակն են աճում բնական անտառներում, այն ել շատ փոքրիկ տարածություններով: Դրանք են:

1. Սոճի սովորական (Pinus silvestris L.), վորը բնական պայմաններում տարածված ե կիրովականի շրջանի Շահալիի անտառամասում՝ Դիլիջանում, Ստեփանավանի շրջանի Գյուլագարակ գյուղի մոտ, Բզովդալի լեռան ստորոտում, Դսեղի անտառամասում, Շամշադինում և Իջևանում: Հիշյալ վայրերում սոճին աճում ե հաջողությամբ: Բնական վերաճը բավական հաջող է կատարվում, յեթե կիրառվում են հատման համապատասխան մեթոդներ և պաշտպանվում են անասունների արածացումներից: Սոճին բարձրաբռն ե, ճյուղերից մաքուր, հարթ և մշտադալար: Շինարարության համար առաջնակարգ նշանակություն ունեցող փայտեղենի վորակ ունի: Նրա տերևները նորոգվում են աստիճանաբար, և նա յերբեք միանգամից տերևաթափ չի լինում: Տերենելն իրենց գոյությունը պահպանում են 3—5 տարի և ապա թափվում:

Սոճին ծաղկում ե գարնանը՝ ապրիլի վերջերին և մայիսի սկզբներին: Արական ծաղիկները լինում են դեղնագույն, իսկ իզականը՝ կարմրագույն, փոքրիկ կոնի ձևով, վորոնց ծայրերի վրա առաջանում են 1—3 հատ փոքրիկ ճյուղեր մինչև հաջորդ տարին: Այդ կոներն առաջին տարում հաղիվ թե սիսեռի մեծություն են ունենում և միայն 2-րդ տարվա գարնանից նրանք սկսում են ուժեղ աճել, ուժեղ կանաչ դույն են ստանում և միայն աշնանը հասունանալով՝ ստանում են բաց-դարչնագույն կամ մուգ-դեղնավուն գույն: Նրանք այդպես մնում են մինչև յերկրորդ ձմեռը և միայն յերրորդ տարվա վաղ գարնանը՝ ապրիլի վերջերին և մայիսի սկզբներին կոները բացվելով նրանց միջից սերմերը դուրս են թափվում: Այսպիսով սոճու ծաղկման մոմենտից մինչև սերմերի հասունանալը և թափվելը տևում է 2 տարի, իսկ սերմերի հասունանալը և թափվելը՝ 18 ամիս: Կոների յերկարությունը հասնում է 3—6 սմ, իսկ սերմերինը՝ 3—6 մմ, վորոնք ունեն թևեր՝ տարածվելու համար (տես նկ. 5):

Սերմերի գույնը խիստ փոփոխական ե, սպիտակագույն, դեղնասպիտակավուն, գույնզգույն և այլն: Սերմերի այդ տարբեր գույներն ու մեծությունները պայմանավորված են սոճենիների տարատեսակներով (ռասաներով): Սոճու կոները հավաքում են ծառերի վրայից հունվար, փետրվար, մարտ ամիսներին: Ռուսաստանում կոների հավաքը դիմավորապես կատարում են ձմեռվա ընթացքում անտառպատրաստումների նպատակով հատվող ծառերից, յերբ նրանց հատելով՝ գցում են հատատեղերում: Ծառերից թափված կոները չպիտի հավաքել վորով-

Հետև նրանց միջի սերմերը դուրս են թափվել: Հատված կամ կանգուն ծառերից հավաքած կոներն անմիջապես պիտի փոխադրել չոր և տաք շենքերում, վորտեղ նրանք սկսում են բացվել և սերմերը դուրս գալ բայց մեծ քանակությամբ սերմեր պատրաստելու համար համապատասխան աղատ շենքեր չլինելու պատճառով անհրաժեշտ ե կոների բացվելու պրոցեսները կատարել կարճ ժամանակամիջոցում, վորպեսզի հնարավոր լինի կարճ ժամանակում պատրաստել մեծ քանակությամբ սերմեր: Դրա համար հարկավոր ե կոները չորացնել ավելի բարձր ջերմաստիճանի տակ: Այդ նպատակի համար կառուցում են համապատասխան կոնաչորանոցներ:

Կոները լցնում են կոնաչորանոցների մեջ և սկըսում տաքացնել այնքան, վորպեսզի ջերմությունը բարձրանա մինչև  $50-55^{\circ}$  C-ի. և յերբ կոներն սկսում են ճաքճքել և բացվել, կրակը պիտի անմիջապես թուլացնել ու վերացնել այնպես, վորպեսզի ջերմաստիճանն իջնի մինչև  $15-18$  աստիճան: Լավ պիտի հիշել, վոր յեթե ջերմաստիճանը յերկար ժամանակ մնա  $50-$ ի սահմաններում, սերմերը կբռվեն և կկորցնեն իրենց ծլունակությունը: Կոներից դուրս յեկած սերմերը ձեռքով զգուշությամբ տրորում են, վորպեսզի նրանց թերթը պոկվեն, ապա քամհարում և անջատում սերմերից: Կոնաչորանոցներ չլինելու պեպում շատ հաճախ կոները չորացնում են հացափոերում: Այդ դեպում պիտի շատ զգուշ լինել, վորովհետեւ շատ տաք փոռում լցնելուց սերմերը կկորցնեն իրենց ծլունակությունը: Մուսաստանի սոճու



Նկ. 5. Սոճի (*Pinus sylvestris* L.) 1—ձյուղը, ա—արական ծաղկափթիթները, բ—իդական ծաղկափթիթները, սա և բ—յերկու առանձին թեփուկներ՝ փաշանոթներով, 3ա և բ—թեփուկը՝ 2 ձեռվ, տեսքը՝ լրսից և ներսից, 4ա—հասունացած կանի թեփուկը՝ 2 փետրավոր սերմերով, բ—փետուրն առանձին, ս—սերմն առանձին, օ—սերմը հատված, միջին սաղմը

պեպում շատ հաճախ կոները չորացնում են հացափոերում: Այդ դեպում պիտի շատ զգուշ լինել, վորովհետեւ շատ տաք փոռում լցնելուց սերմերը կկորցնեն իրենց ծլունակությունը: Մուսաստանի սոճու

**10** կիլո կոնից ստացվում է 120—130 գր մաքուր սերմ։ Մեկ կիլո այղպիսի սերմի մեջ պարունակում է մինչև 150 հազար հատ։ Սոճու սերմերն իրենց ծլունակությունը պահում են 3—4 տարի։

Ռուսաստանի պայմաններում աղատ կանգնած սոճին սկսում է սերմեր տալ 15 տարեկան հասակից, իսկ խիտ անտառներում՝ 40—50 տարեկան հասակում։ Հայաստանում՝ Ստեփանավանում և Արագածում՝ արհեստական սոճուտներում յերիտասարդ ծառերն սկսել են կոներ տալ 8—9 տարեկան հասակում։ Սոճին առատ պտղաբերում է 3—5 տարին մեկ անգամ։ Բացի սովորական սոճուց, կան շատ տեսակի այլ սոճիներ, ինչպես, որինակ՝ սև, վեյմուտյան, Ղրիմի և այլն, վորոնք հիմնականում տարբերվում են իրենց կոների, տերևների մեծությամբ, ձևերով և գույնով, վորոնց վրա մենք կանդ չենք առնում, վորովհետեւ նրանց սերմերի պատրաստման տեխնիկան նույնն է, ինչ վոր վերը նկարագրեցինք։

Արհեստական անտառացման փորձերը ցույց են տալիս, վոր Հայաստանի պայմաններում ամենից հաջող արդյունքներ են տալիս տեղական սոճին, ապա Ռուսաստանի հարավից բերված սովորական սոճին։

**2. Անփուտ (Taxus baccata L.).—Մշտաղալար (մշտականաչ), բարակ, յերկար, տափակ տերևներով և խիտ սաղարթով ծառ է։ Հայաստանում անփուտն աճում է իջևանի, Շամշադինի և Դիլիջանի շրջաններում։ Բոլոր ծառերի նկատմամբ անփուտն ամենաստվերատարն է և, ինչպես ամենուրեք, նույնպես և Հայաստանում առանձին ծառություն չի կազմում, այլ պատահում է հատ ու կենտ, հաճարենու խիտ և մութ անտառներում։ Անփուտը շատ դանդաղաճ է և նրա բնական ու արհեստական վերականգնումը շատ մեծ դժվարությամբ է տեղի ունենում։**

Գեղեցիկ, ամուր, դիմացկուն, կարմրագույն և դյուրահեղիկ փայտեղենի շնորհիվ պահանջը դեպի անփուտը շատ մեծ է, վորի հետևանքով ել նրա պաշարը խիստ կրճատվել է։ Արհեստական և բնական աճի դժվարությամբ տեղի ունենալու պատճառով անփուտը մահվան և վոչնչացման և յենթակա։ Չնայած, վոր ապրում է 1—3 հազար տարի և հասնում է մինչև 20—25 մետր բարձրության, այնուամենայնիվ նոր տարածություններ գրավելու անընդունակ է։ Սկսում է պտղաբերել 30 տարեկան հասակից, ծաղկում է մարտ-ապրիլ ամիսներին, և սերմերը հասունանում են սեպտեմբերի վերջերին կամ հոկտեմբերին։ Սերմերն ամփոփված են մսալից պտղի մեջ և շատ ամուր են՝ ինչպես վոսկոր։ Ցանելուց հետո մինչև ծիլերի յերեան դալը տևում է 1—2 տարի։ Աճում է խիստ դանդաղ և ստվերակալված միջավայրում։ Դեպի տաքությունը և ցրտությունն ըստ յերևութիւն անտարբեր եւ

3. Գիհի (*Juniperus L.*).—Հայաստանում աճում են գիհի տրեելյան (*J. palycargos C. Koch.*), գիհի դաճաճ (*Juniperus nana Willd.*), գիհի սարինյան (*J. Sabina L.*), գիհի սովորական (*J. communis L.*), գիհի ցածրաճ (*J. depressa Stev.*) և այլն։ Հիշյալ տեսակներից ամենափոքը, վորը փռվում է գետնի մակերեսի վրա և իրենից ներկայացնում է փոքրիկ թփուտ, դա գիհի ցածրաճն է։ Մնացած տեսակները թփուտներն են, վորոնք ունեն 1—2 մինչև 5—7 մետր բարձրություն։ Հայաստանի հին կառուցումներից յերեսում է, վոր հին ժամանակներում Հայաստանի անտառներն ավելի հարուստ են յեղել գիհու մեծ ծառերով, վորովհետեւ հին բերդերի, պալատների և այլ կառուցումների մեջ մինչև հիմա ել մնացել են գիհու գերանների հետքեր։ Գիհիները մշտադալար են, գեղեցիկ, ամուր և համեմատարար թեթև փայտեղենով, վորոնց ոգտագործում են թանգարժեք կահկարասիքի, մատիտի և այլ արդյունարերության մեջ։ Գիհիները բավական տարածված են նաև Խորհրդային Միության անտառներում։ Հայաստանում նրանք աճում են գլխավորապես հարավային և հարավարևելյան լուսավորված, տաք քարալանջերում, վորոնք խիտ ծառուտներ չեն կազմում (*Ալլահվերդու*, *Գառնիի*, *Մեղրիի*, *Իջևանի* և *Շամշադինի շրջաններում*), վորը ցույց է տալիս գիհու տարածվելու հնարավորությունները։ Գիհիները շատ դանդաղ են աճում, և այդ դանդաղությունը թերեւ վորոշ չափով բացատրվում է նրանով, վոր նրանք աճում են հարավային և հարավարևելյան չոր և հողագուրկ, քարքարոտ լանջերում, քարածերպերի մեջ։

Գիհին սովորաբար մեղ մոտ ծաղկում է ապրիլի սկզբներին, վորի սերմերը հասունանում են հաջորդ տարում, այսինքն՝ ծաղկելու մոմենտից մոտավորապես 18 ամսից հետո։ Պտուղները գնդաձեւ են, սև, գորշագույն, վորոնք սլատված են կանաչավուն գույնի փոշիով (տես նկ. 6). մսալից պտղի մեջ ամփոփված է նրա գնդակորիզ սերմը։ Սովորական գիհին աճեցնում են կենդանի կանաչ ցանկապատեր ստեղծելու համար։ Մեր պայմաններում կարելի յէ ոգտագործել նաև վլվող ու վողողվող մերկ լեռնալանջերի անտառապատման համար։

Սովորական գիհուն վորոշ չափով մոտ է նմանապես գիհիսարինյան, վորի պտուղները սեագույն են և պատված կանաչ փոշիով, վորոնց հավաքում են ուշ աշնանը Խորհրդային Միության մեջ նրա կուլտուրան դարդացնում են անտառ-ագրոմելիորատիվ նպատակներով, գլխավորապես շարժվող ավազների ամրացման համար։ Հայաստանում աճած գիհիներից ուշադրության արժանի յէ գիհիսարինյան, վորը հաջողությամբ աճում է մեր մի շաք շրջաններում և առատ պտղաբերում է (տես նկ. 7)։



Նկ. 6. Գիհի սովորական (Juniperus communis L.)



Նկ. 7. Պինդ աբելլա (Juniperus polycarpes C. Koch. L.)

Բացի վերը թված փշատերև ծառատեսակներից, արհեստական կերպով Հայաստանի ղանազան վայրերում աճեցված են նոճի (Ախթալայի հանգստյան տանը), տույա և յեղենու այլ տեսակները (Յերեանում, Զագ տնտեսությունում և այլն):

## ՏԵՐԵՎԱՎՈՐ (ԼԱՅՆԱՏԵՐԵՎ) ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ

Այս խմբին են պատկանում, բացի փշատերևներից, աշխարհի ամենաբազմազան ծառատեսակներն ու թփուտները, վորոնք ղարդարում են մեր ընությունը և մատակարարում ամենաարժեքավոր փայտեղեններ, մրգեր ու պտուղներ: Հայաստանի անտառները շատ հարուստ են լայնատերև ծառատեսակներով: Մեր հողակլիմայական բարենպաստ պայմանների շնորհիվ տերեսավոր ծառատեսակների մի շարք ներկայացուցիչները, ինչպես, որինակ՝ հաճարին, կաղնին, թղկին, ընկուղենին, թեղին, բոխին, լորին և այլն, մեր խիստ ընդգծված ռելյեֆի խայտարդետ անտառների ղարդն են կազմում: Ստորև բերվում են ամենազլիսավոր ծառատեսակները, վորոնք մեր անտառային տնտեսության մեջ կարևոր տեղ են գրավում:

Ակացիա սպիտակ (Robinia pseudacacia L.).—Սպիտակ ակացիայի խկական հայրենիքը Հյուսիսային Ամերիկայի արևելյան նահանգներն են: Ամերիկայի գյուտից հետո ակացիան ուժեղ կերպով սկսեցին տարածել յեվրոպական և ասիական յերկրներում և այժմս արհեստական ծառուտների՝ պարկերի, ծառուղիների ամենատարածված ծառերից մեկն ե: Խորհրդային Միության սահմաններում ուժեղ կերպով սկսվել է տարածվել անցյալ դարի 70—80-ական թվականներին՝ տափաստաններում արհեստական անտառացման աշխատանքներ կատարելու ժամանակ: Հայաստանի շատ շրջաններում սպիտակ ակացիան դարձել է ամենասիրելի ծառերից մեկը: Դեպի հողը խստապահանջ չե, մեծ հաջողությամբ աճում ե քարքարոտ, սև և ավաղահողերում: Ցրտերից պաշտպանված և բավարար խոնավություն ունեցող վայրերում, ինչպես, որինակ՝ Ալլահվերդում, Շահալիում և նման ձորերում, տարեկան աճ ե տալիս մինչև 2 մետր: Ուժեղ ցրտերից տուժում ե, մանավանդ նրա ճյուղերը: Հայաստանում յեղած փորձերը ցույց են տալիս, վործովի մակերեսույթից մինչև 1500—1700 մ բարձրության վրա աճում ե բավարար չափով և 25—30 տարեկան հասակում տալիս է ամուր և լավ վորակի շինափայտ: Սպիտակ ակացիան ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, իսկ շատ բարձր և ցուրտ վայրերում՝ հունիսին, տերեներ արձակելուց հետո կամ նրանց հետ միաժամանակ:

Վողկուզանման, սպիտակ, բուրավետ նեկտարներով հարուստ ծաղիկները, վորոնք դեպի իրենց են գրավում մեղուներին, կտնաչ մանր տերևների հետ միասին արտակարգ գեղեցկություն են տալիս ակացիային (տես նկ. 8): Շնորհիվ վերը թված հատկությունների և նրա արագաճության ու բարձր վորակի փայտեղենի՝ վերջին ժամանակներս արհեստական անտառացման, քաղաքների ու ավանների կանաչազարդման աշխատանքների բնագավառում ակացիայի կուլտուրային լայն չափերով զարկ են տալիս:

Ակացիայի պտուղները լոբածեն և 6—8 հատը կազմում են մի փունջ, վորոնք հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին և

մնում են ծառերից կախված մինչև ձմեռը: Սակայն ձմեռովա և գարնան փոփոխական յեղանակներին և քամիների ազդեցության տակ լորիները պոկլում, գետին են ընկնում և բացվում յերկումասի, վորոնց մի մասի վրա փոսիկների մեջ մի-մի բարակ թելերով ամրացված են լինում սերմերը: Հաճախ առանց ծառից պոկվելու այդ լորիները բացվում են և սերմերը թափվում:

Սերմահավաքը պիտի կազմակերպել նախքան լորիների թափվելը, այն և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, հավաքելով նրանց ուղղակի ծառերի վրայից: Պտուղները հավաքելուց հետո, նրանց պիտի

Նկ. 8. Սպիտակ ակացիայի ճյուղ. ա—ծաղկելու կույզ, բ—լորիանման սերմեր

անմիջապես չորացնել, ապա մեշոկների ու արկղների մեջ պահել: Մաքուր սերմեր ստանալու համար չորացրած այդ լորիները փայտով ծեծում են այնքան, մինչև նրանք բացվեն և նրանցից դուրս գան սերմերը, ապա քամհարելով առանձնացնում են և մաքուր սերմերը պարկերի և ամանների մեջ պահում չոր ու ցուրտ պահեստներում: Ազատ աճած ակացիան սկսում

և ծաղկել 4—5 տարեկան հասակում, վորի սերմերն ունենում են 50—80% ծլունակություն և իրենց ծլունակությունը պահպանում են 3—6 տարի:

**Արջնիկուզ (Corylus colurna L.).**—Սակավ ծառատեսակներից մեկը, վորի տարածման շրջանը շատ փոքր եւ և պաշտպանված եւ հաճարու, կաղնու, թղկու ստվերատար անտառներում, հյուսիսային լանջերի վրա, հատ ու կենտ կամ շատ փոքրիկ պուրակներով։ Հայաստանում պատահում եւ իջևանի անտառներում։ Արջընկուղն առաջին և յերբեմն շրջ կարգի մեծություն ունեցող ծառ ե, վորն ունի բարձրաբուն, ամուր և գեղեցիկ փայտեղեն։ Տերևների և պտուղների ձևով միանգամայն նման և տկողինին, միայն այն տարրերությամբ, վոր տկողինը թփուտ եւ և նրա ընկուղներն ավելի թույլ են, խոշոր ու կլոր, իսկ տերևները՝ փոքր, կոշտ և մաղմզուկներով, քան թե արջընկուղինը։ Արջընկուղի սերմերը հասունանում և սկսում են թափվել հոկտեմբերի սկզբներին, հետևաբար սերմերը պիտի հավաքել հոկտեմբերի սկզբներին, նախքան նրանց թափվելը, հակառակ դեպքում՝ թափված սերմերը մկներն արագությամբ հափշտակում են։ Արջընկուղի կուլտուրայի փորձեր չկան։ Բայց նրա բարձրաբուն և արժեքավոր փայտեղենի ու սերմերի համար արժանի յե, վոր նրա կուլտուրային զարկ տրվի, մանավանդ վոր նա պատկանում ե մեր անհետացող արժեքավոր ծառատեսակների շարքին։

**Բարդի (Populus L.).**—Բարդու ցեղին են պատկանում 50-ից ավելի զանազան տեսակի բարդիներ, չհաշվելով խառնածիններին և տարատեսակներին։ Բարդիներն իրենց թվում ունեն առաջին և յերկրորդ կարգի մեծության պատկանող ծառեր։ Լինելով բարձմատեսակ, նրանց պահանջները դեպի արտաքին պայմանները՝ հողը, կլիման, ջերմությունը և այլն, խիստ տարբերվում են միմյանցից։ Արմատային և ճյուղային կտրոններով, ինչպես նաև սերմերով հեշտությամբ զարգացնելու հնարավորությունների, արագաճության, հարթ և բարձրաբուն փայտեղենի շնորհիվ, բարդիների կուլտուրաներին զարկ տալն անտառկուլտուրական ձեռնարկումների բնագավառում նրան դարձել են ամենաշահավետ ծառատեսակներից մեկը։ Բարդիների մեծ մասը դեպի հողակլիմայական պայմանները խստապահանջ չե և նրանց՝ վորպես արագաճ ծառատեսակների, մանավանդ մեր անտառազուրկ շրջաններում, լայն չափերով պիտի զարկ տալ։ Բարդիների փայտեղենները, բացի շինարարության և ատաղձագործության ու վառելիքի բնագավառներից, լայն չափով ողտաղործում են թղթի, արհեստական մետաքսի և լուցկու արդյունաբերության մեջ։ Բարդենու մի քանի տեսակները հայաստանում ամենուրեք տարածված են և նրանց ար-

հեստականորեն զարկ տալու տեխնիկան, մանավանդ կտրոններով, մեր գյուղացիք բավական յուրացրել են (Թառնի, Աշտարակ, Վաղարշապատ և այլն): Մեր կոլեկտիվ տնտեսություններն իրենց անտառացման և կանաչազարդման աշխատանքների բնագավառներում մեծ ուշադրություն պիտի դարձնեն բարդենու տարածման վրա: Հայաստանի անտառներում մեծ հաջողությամբ աճում ե բարդու ցեղին պատկանող կաղա-



Նկ. 8 ա. Կաղամախի սերմեր

**մախին** (*Populus tremula* L.), վորին մեր մի շարք շրջաններում մեծ իրավամբ կոչում են լեռնային բարդի: Կաղամախին բնական պայմաններում տարածվում է դլխավորապես արմատա-ընձյուղներով, արմատներից արձակելով ընձյուղներ: Բայց վորովհետև արմատա-ընձյուղներից առաջացած ծառերը վատորակ են լինում, հետևաբար անհրաժեշտ

դարկ տալ սերմերով աճեցնելուն։ Կաղամախին ծաղկում և գաղ գարնանը, նախքան տերևների արձակելը։ Ծաղիկները կարմրադարչնադույն կատվիկ են (փշիկ), սպիտակ մազիկներով, վորոնք բամբակի տպավորություն են թողնում (տես նկ. 8 ա)։

Սերմերը շատ մանր են, սև գույնի, վորոնք ծածկված են նուրբ և թեթև բամբակով, վորի շնորհիվ քամիները նրանց հեշտությամբ տարածում են, և ջրի մեջ ընկնելու դեպքում նրանք չեն խորասուղվում։ Սերմերը մինչև հասունանալն ամփոփված են լինում փոքրիկ տուփիկների մեջ, իսկ հասունանալուց հետո տուփիկները բացվում են, և սերմերը կամաց-կամաց դուրս գալիս ու տարածվում։

Սերմերը հավաքվում են կատվիկներով, յերբ տուփիկներն սկսում են բացվել։ Հավաքած կատվիկները փռելով մի չոր շենքում, չորացնում են, հետո բարակ ճիպոտով ծեծում այնքան, մինչև սերմերն առանձնանան տուփիկներից։ Բոլորովին մաքուր սերմեր ստանալու նպատակով մանրացրած կատվիկները լցնում են մաղի մեջ, ճեռքով տրորում, վորի ընթացքում մանր սերմերը՝ անջատվելով բամբակներից, մաղից դուրս են գալիս, իսկ բամբակները մնում են մաղի մեջ։

Մեկ կիլոգրամ մաքուր սերմի մեջ պարունակում ե 10—12 միլիոն հատ։ Սերմերի ծաղկելուց մինչև հասունանալը տևում ե 1—1,5 ամիս։ Նրանց հասունանալուց ու հավաքելուց հետո անմիջապես պիտի ցանել, վորովհետեւ նրանք շատ շուտ կորցնում են իրենց ծլունակությունը։ Այդպիսի կորստից խուսափելու նպատակով պրոֆ. Ն. Ն. Ստեպանովը նպատակահարմար ե համարում կատվիկները հավաքել նախքան տուփիկների բացվելը, ցանել մարգերում կամ ել այդ ժամանակ կտրել ճյուղերը և տնկել մարգերի մեջ, վորպեսզի սերմերը հասունանալուց հետո տուփիկներից դուրս թափվեն և սերմանեն մարգերը։

Բացի կաղամախուց, վորը հանդիսանում է մեր անտառային տարածված ծառատեսակներից մեկը, դեռ անհիշելի ժամանակներից մեր գյուղացիներն իրենց այգիներում, ծառուղիներում և հատուկ պլանտացիաներում մեծ հաջողությամբ աճեցնում են բարդու մի շարք տեսակներ, ինչպես, որինակ՝ սպիտակ բարդին, բրգանման, բալզամյա, յեփրատյան և այլն, վորոնց սերմերն ունեն ընդհանուր նմանություն կաղամախու սերմերին և հավաքելու պայմաններն ել նույնն են, վորի պատճառով ել նրանց վրա կանգ չենք առնում։

Բոխի (Carpinus Betulus L.)—Բոխին հայաստանի անտառային ծառատեսակների ամենատարածված ծառերից մեկն ե, բացի Ապարան-Արագածի և Գառնիի անտառներից, մնացած բոլոր անտառային շրջաններում բոխին ամենուրեք տարածված ե, հաճախ կաղմում ե



Лл. 9. Береск (Carpinus Betulus L.)

մաքուր բոխուտ, կամ հաճարի, կաղնու և այլ ծառատեսակների հետ  
կազմում ե խառը ծառուտներ:

Բոխուր փայտն ամուր ե, ծանր և փայլող: Ողտագործում են  
առաղձագործության, գյուղատնտեսական մեքենաշինարարության և  
այլ բնագավառներում: Իր մեծությամբ բոխին դասվում ե յերկրորդ  
կարգի մեծություն ունեցող ծառատեսակների շարքը և ունենում է  
20—25 մ բարձրություն, մինչև մեկ մ տրամագիծ, ապրում է 150—200  
և ավելի տարի: Առաջին հինգ տարին աճում է դանդաղ, վորից հետո  
սկսում ե արագ աճել: Սկսում է ծաղկել գարնանը՝ նախքան տերևներ  
արձակելը, իսկ սերմերը հասունանում են հոկտեմբեր-նոյեմբեր ամիս-  
ներին: Սերմերը գորշագույն, հաստակող են և նստած են լինում յե-  
ռատերևանոց պտղակած բաժակում (տես նկ. 9):

Բոխին առատ պտղաբերում ե ամեն տարի և աշնանը ցանելուց  
հետո, առաջին ծիլերը տալիս ե գարնանը, իսկ գարնանը ցանելուց  
հետո՝ հաջորդ գարնանը:

Ընկուզենի (Juglans regia L.)—Այս ցեղին պատկանող շատ տե-  
սակները մեր յերկրագնդի մակերեսից արդեն անհետացել են և միայն  
նրանց մնացորդները հայտաբերվում են յերկրաբանական ուսումնա-  
սիրությունների ժամանակ, նստվածքների մեջ:

Հստ յեղած գրական տեղեկությունների, դանազան աշխարհա-  
մասերում աճում են մինչև 44 տեսակներ և տարածված են գլխավո-  
րապես Հյուսիսային ու Հարավային Ամերիկայում, Հնդկաստանում,  
Հունաստանում, Տամակաստանում, Պարսկաստանում, Ավղանստանում,  
Ֆրանսիայում, Չինաստանում, Ճապոնիայում, Մանջուրիայում և Խոր-  
հըրդային Միության սահմաններում (Ղրիմում, Հեռավոր Արևելքում,  
Միջին Ասիական հանրապետություններում և Կովկասում):


Խորհրդային Միության սահմաններում մասսայական կերպով  
տարածված են յերկու տեսակի ընկուզներ, սովորական ընկուզ, վորն  
աճում է Միջին Ասիայում, Ղրիմում և Կովկասում և մանջուրական  
ընկուզ՝ Հեռավոր Արևելքում:

Սովորական ընկուզենու կուլտուրան բավական դարգացած և  
չայաստանում, և նրա տարածման ու մշակման տեխնիկան այնքան և  
յուրացված, վոր բացառությամբ մի քանի բարձր լեռնային շրջանների  
(Ն. Բայազետի, Մարտունու, Ամասիայի և այլն), մնացած բոլոր շր-  
ջաններում ընկուզենին դարձել է պտղատու ծառերի հիմնական տե-  
սակներից մեկը և այնքան և ընտելացել մեր հողակլիմայական պայ-  
մաններին, վոր արդեն համարվում է տեղական ծառատեսակ: Բացի  
արհեստական կուլտուրաներից, մեր մի շարք անտառային շրջաննե-

բում (իջևանի, Շամշադինի, Ղափանի և այլն) պաշտպանված խոնավ և հարուստ գետահովիտներում կան մեծ քանակությամբ վայրի ընկուղենու ծառուտներ։ Ընկուղենին առաջին կարգի մեծության ծառ է, վորի քարձրությունը հասնում է 30 և ավելի մետրի, իսկ տրամագիծը՝ 1,5—2—3 մետրի։ Ընկուղենին ունի մեծ և խիտ սաղարթ, վորը յերբեմն բոնում է մինչև 300 քառ. մետր տարածություն և նրա տակ վոչ մի այլ ծառատեսակ չի աճում։ Նրա չայտեղենը թեթև և, ճկուն, դյուրահեղիկ և գեղեցիկ, վորից պատրաստում են թանգարժեք կահկարասիք, հրացանի կոթեր և այլն։ Տարածվում է սերմերով և հատվող բներից տալիս ե առատ ընձյուղներ։

Արագաճ և, լուսասեր և ապրում է 250—300 տարի։ Ակսում է պըտղաբերել 9—10 տարեկան հասակից և շարունակում է մինչև խոր ծերության հասակը։ Յեթե ընական սլատահարներ չեն խանգարում, առատ պտղաբերում է յուրաքանչյուր տարի։ Յուրաքանչյուր ծառ տալիս է մի քանի տասնյակ, մինչև 16,000 կգ ընկուղ (Վրաստանի Գորիի շրջանի Կեխվի դյուղում)։

Ծնորհիվ ընկուղենու կուլտուրայի զարգացման հեշտության, նրա արագաճության, թանգարժեք պտուղների և փայտեղենի, այժմս ընկուղենու կուլտուրայի վրա մեծ ուշադիրություն և դարձվում։ Այդ նպատակի համար Միջին Ասիայում կազմակերպված են ընկուղենու խորհրդային տնտեսություններ։



Նկ. 10. Ընկուղենի (Juglans regia L.)

Ների և փայտեղենի, այժմս ընկուղենու կուլտուրայի վրա մեծ ուշադիրություն և դարձվում։ Այդ նպատակի համար Միջին Ասիայում կազմակերպված են ընկուղենու խորհրդային տնտեսություններ։

Ընկուղենին ծաղկում է ապրիլին, տալով կատվիկներ (տես Նկ. 10).

10), վորից առաջանում են մեծ պտուղներ՝ տեղավորված կանաչ մսաւից պատյանի մեջ։ Սերմերը հասունանում են սեպտեմբերին. ծառից ընկնելով, սերմերի կանաչ պատյանը պատռվում է և դուրս են գալիս կճեպավոր ընկույզները։ Սերմացուի համար պիտանի յեն նրբակճեպ ընկուղները։

Ընկուղը կարելի յե ցանել հավաքելուց հետո, բայց չքարուկների և մկների հավիշտակումներից խուսափելու համար պիտի ցանել վաղ դարնանը։

Դեպի խոնավությունը, ջերմությունը և հողը պահանջվուա և և լավ աճում ե գետահովիտներում, հետեաբար, նպատակահարմար և տնկարաններ հիմնել այդպիսի վայրերում։

**Թեղի (Ulmus L.).**—Հայաստանի անտառներում աճում են դաշտային թեղին (ulmus Campestris L.), լեռնային թեղին (ulmus montana Sm.), բրդաձև թեղին (ulmus elliptica c. Koch.)։

Դրանցից ամենատարածվածը դաշտային, ապա լեռնային թեղին ե։

Դաշտային թեղին աճում է ծովի մակերեսութից մինչև 1500 մ բարձրության վրա, իսկ լեռնայինը՝ մինչև 1800—2000 մ։ Թե լեռնային և թե դաշտային թեղիներն

ունեն ամուր փայտանյութ, վորը

պինդ ու ճկուն և բավական դիմացկուն։ Արագած են, տարած-

վում են սերմերով և վերանորոգ-

վում են բնաշընձյուղներով, ինչ-

ուս նաև արմատաշընձյուղնե-

րով։ Լեռնային թեղին դեպի հողը

և խոնավությունն ավելի պաշտաման չանչկոտ է, քան թե դաշտայինը։

թեղու պտուղ թեղու պտուղ

Յերկուսն ել առաջին կարգի մեծության ծառեր են և բարձրանում

են մինչև 30 մ, իսկ տրամադիմը հասնում է մինչև 1 մետրի։ Ապրում


են մինչև 300 տարի։ Փայտեղենն ոգտագործում են գլխավորապես կասաշինարարության մեջ։

Ծաղկում են ապրիլին, նախքան տերեների արձակելը։ Սերմերը հասունանում են մայիսին կամ հունիսին (նայած թե ինչպիսի պայ-

մաններում են աճում)։ Պտուղը չոր, փոքրիկ ընկուղ է, վորն ունի մի հատ սերմ և շրջապատված է նուրբ թեփ (տես նկ. 11—12)։

Աղատ աճած թեղիներն սկսում են պտղաբերել 8—10 տարեկան

հասակում և ամեն տարի կամ 2 տարին մեկ անգամ տալիս են տոստ



Նկ. 11. Դաշտային

թեղու պտուղ

Նկ. 12. Լեռնային


թեղու պտուղ

տատանվում է 20—30%, վորոնք շատ շուտ կորցնում են իրենց ծլունակությունը, վորի պատճառով ել հավաքած սերմերն անմիջապես ցանում են:

**Թղկի (Acer L.).**—Թղկու ցեղին են պատկանում մինչև 120 ծառատեսակներ, վորոնք տարածված են աշխարհի զանազան մասերում:

Հայաստանի անտառներում աճած թղկիներից մինչև այժմ արձանագրված են 5 տեսակ:

1. Լայնատերեվ թղկի (Acer platanoides L.).—Առաջին կարգի մեծության ծառ է, վորի բարձրությունը հասնում է 25—30 մետրի և ունի մինչև 1 մետր տրամագիծ: Փայտեղենը դժվար է ճեղքվում, ճկուն է, վորի համար գործածում են հյուսնության, չարխագործության, կառաշինարարության, մեքենաշինարարության և ֆաների արդյունաբերության մեջ: Դեպի հողը պահանջկոտ է և ցրտին դիմացկուն, աճում է ծովի մա-



Նկ. 13. Լայնատերեվ թղկինու սերմ

կերեռութից մինչև 1800 մ և ավելի բարձրության վրա: Ընդհանուր առմամբ մաքուր ծառուտներ չի կազմում. ընդհանրապես աճում է կաղնու և հացու հետ, կազմելով խառը ծառուտներ: Բազմանում ու տարածվում է սերմերով, վերաճում է բնաշնձրով և բավական արագած է:

Աղատ աճած ծառերն սկսում են պտղաբերել 20 տարեկան հասակից, իսկ խիտ անտառներում՝ 35—40 տարեկանից: Ծաղկում է գարնանը, նախքան տերևների արձակելը կամ նրանց հետ միաժամանակ: Սերմերը յերկրնանի, թևավոր, դեղնագույն են և հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին (տես Նկ. 13): Առատ բերք է տալիս համարյա թև ամեն տարի. աշնանը ցանած սերմերի առաջին ծիլերը յերևան են գալիս գարնանը, իսկ գարնանը ցանածներինը՝ հաջորդ գարնանը:

2. Դաշտային թղկի (Acer campestris L.).—Մեր անտառներում բավական տարածված ծառ է, վորն իր մեծությամբ պատկանում է

յերկըրդ կարգի մեծության ծառախմբին, տալով 15—20 մ բարձրություն։ Դաշտային թղկին դեպի կլիման և հողն ավելի պահանջկու է, բայց չորության հետ ավելի յե հաշտվում, քան լայնատերև թղկին։ Աճում ե կաղնու հետ միասին, զբաղեցնելով անտառի ծածկի յերկրորդ հարկը։

Ծաղկում ե գարնանը, տերևներն արձակելու հետ միաժամանակ կամ հետո. սերմերը հասունանում են աշնանը և մնում են ճյուղերից կախված մինչև ձմեռը (տես նկ. 14)։

Աղատ աճած առանձին ծառերն սկսում են պտղաբերել 8—10-տարեկան հասակում, իսկ ծառուտում՝ 25—30 տարեկանից. առառ պտղաբերում են 2 տարին մեկ անգամ։ Աշնանը ցանած սերմերը ծիլեր տալիս են գարնանը, իսկ գարնանը, ցանածները՝ հաջորդ գարնանը։



2

Նկ. 14. Դաշտային թղկենու սերմ

հետեաբար, անհրաժեշտ ե նրանց ստրատիֆիկացիայի յենթարկել, ապա դարնանը ցանելը Սերմերն իրենց ծլունակությունը պահպանում են մինչև 2 տարի։

3. Յեռաբլբակ բղկի (*Acer ibericum* M.B.).—Բնորոշ է իր տերեների յեռաբլբակ ձևով, վորոնք ունեն կանաչ, փայլուն գույն, իսկ սերմերի փոքրիկ թերկները ծոված են դեպի ներս։ Յեռաբլբակ թղկին տարածված ե Դերետ, Աղստաֆինկա, Հասան-սու և այլ գետաձորերի քարքարոտ չոր լանջերում ծովի մակերեսույթից 800—1500 մ բարձրության վրա։ Բարձրությունը հասնում է մինչև 10 մետրի. պատահում ե հատ ու կենտ և յերբեք ծառուտ չի կազմում։

4. Բարձրալեռնային բղկի (*Acer Traut Vetteri* Medw).—Տարածված ե անտառների վերին գոտիներում, այսպես ասած՝ յենթալպիական զոնայում, ցրված կերպով և համատարած ծառուտ չի կազմում։ Շնորհիվ կլիմայական խստությունների, վորոնց պայմաններում աճում ե նա, նրա բունը ծռմոված ե լինում և ճյուղավորված, վորի բարձրությունը հաղիվ թե 15—18 մետրի յե հասնում։ Տերեները 5 բլբականի, սրակլորածե են։ Ծաղկում ե հունիսին, սերմերը հասունանում են հոկտեմբերին և ունեն յերկար թևեր ու կլորածե պտուղ-

ներ: Շլունակությունը պահպանում է մինչև մեկ տարի և աշնանը ցանելուց ծիլերը տալիս են դարնանը, իսկ դարնանը ցանելու դեպքում՝ հաջորդ դարնանը:

5. Գեղեցիկ բղկի (*Acer laetum* C. A. Mey.).—Հստ Ա. Մուշեցյանի՝ հայտաբերված է միայն Կիրովականի և Գյունեյի անտառներում, ծովի մակերեսույթից 1600 մ բարձրության վրա \*): Բնորոշ է իր կանաչավուն կեղևով և 7—9 բլթականի տերևներով: Գեղեցիկ թղկին Սև ծովի ափերին ունենում է մինչև 25 մ բարձրություն, իսկ Հայաստանում ըստ Ա. Մուշեցյանի՝ հայտաբերված է մինչև 20 մ բարձրություն ունեցող ծառ: Սերմերը տափակ են և մերկ:

Բացի վերոհիշյալ տեսակներից, Ստեփանավանի Արջասարում աճում են մի քանի ծառ կազմրատերև թղկիներ, վորի առանձնահատկություններն առաջժմս նկարագրված չեն:

Վերջին տարիներում կանաչաղարդման կարգով լայն մասշտարչներով արհեստական կերպով զարկ է տրվում ամերիկական թղկուն (*Acer Negunda*), վորը մեծ հաջողությամբ ու արագությամբ աճում է մեր մի շաբք շրջաններում և միայն բարձր ու ցուրտ լեռնային շրջաններում և ցրտահարության մատնվում:

Լորի (*Tilia L.*).—Հայաստանում աճում են յերկու տեսակի լորիներ՝ մանրատերև լորի (*Tilia parvifolia* Ehrh.)—և խոշորատերև լորի (*Tilia platyphylla* Scop.): Թե մանրատերև և թե խոշորատերև լորիներն առաջին կարգի մեծություն ունեն, վորոնց բարձրությունը հասնում է 30—40 մ, իսկ տրամագիծը՝ 1,5—2 մ, ապրում են մինչև 600—700 տարի:

Լորին ստվերատար է, ցրտից չի վախենում, դեպի հողը պահանջկոտ է, լավ աճում է նորմալ խոնավություն ունեցող հողերում: Ծառուտում ճյուղերից մաքրվում է և տալիս է հարթ—ուղիղ բուն, իսկ ծառուտից դուրս, աղատ պայմաններում խիստ ճյուղավորվում է և բնի դեպի վեր բարակելն ավելի յե ընդգծված: Փարթամ սաղարթունի, վորի տերևների մողայիկ դասավորությունը տալիս է նրան գեղեցիկ տեսք: Լորու տնտեսական արժեքը շատ մեծ է, նրա փայտեղենը գեղեցիկ է, սպիտակ, փափուկ, թեթև, դյուրահեղկ և հեշտ մշակվում, վորը լայն չափերով ողտագործվում է փայտե ամանների, կոշկի կաղապարների, յերաժշտական գործիքների և տնային կահկարասիների պատրաստման համար:

\* Ա. Մուշեցյան—Անտառի և Խորհրդային Հայաստանի անտառների մասին եջ 80:

Յերիտասարդ լորենու յենթակեղեցից պատրաստում են զանազան խսիրներ, գործվածքներ, մաշալկաներ և այլն:

Ծաղիկներն ոգտագործում են բժշկականության մեջ: Բացի այդ, նրանք մեղրատու յեն և հոտավետ: Լորին գեղեցիկ ծառ լինելով հանդերձ, բացի անտառացման նպատակների համար լայն չափերով ոգտագործելուց, տարածում են կանաչազարդման նպատակներով, վորով-

հետև սաղարթները հատումներից ու գեղարվեստական ձևավորումներից չեն տուժում: Լորին արագաճ ե, մազմանում ե սերմերով և հատվող բներից առաջանում են առատ ըն-



Նկ. 15. Մանրտերելորի (*Tilia parvifolia* Ehrh.)



Նկ. 16. Լորենու սերմ

ձյուղներ, վորոնք շատ արագ աճելով, 25—30 տարեկան հասակում տալիս են պիտանի փայտեղեն: Բացի սերմերով և ընձյուղներով, լորենուն բաղմացնում են նաև անդալիսներով:

Ազատ աճած ծառերն սկսում են ծաղկել և սերմեր տալ 15—20 տարեկան հասակում, իսկ անտառում՝ 25—30 տարեկան հասակում: Ծաղկում ե տերևներն արձակելուց հետո, հունիս-հուլիս ամիսներին և

իր անուշահոտ բուրմունքով հեռվից զգացնել ե տալիս և դեպի իրեն դրավում մեղուներին (տես նկ. 15):

Սերմերը հասունանում են աշնանը և ծառերի վրա մնում են մինչեւ ուշ ձմեռ: Ծաղիկներից առաջացած սերմերն իրենցից ներկայացնում են փոքրիկ ընկուղիկներ, վորոնց մեծությունը սիսեռի հատիկից ել փոքր ե: Այդ ընկուղիկները նստած են յերկար պտղակոթի ծայրին, իսկ պտղակոթից ամրացած ե ծածկատերելը (տես նկ. 16):

Նորմալ ծլունակությունը համարվում է  $30^{\circ}/_0$ -ից վոչ ցածր: Ծլունակությունը պահպանում է մինչեւ 2 տարի:

Աշնանը ցանելուց հետո ծիլեր ե տալիս գարնանը, իսկ գարնանը ցանածները՝ հաջորդ գարնանը: Սերմերը հավաքում են աշնան վերջին և ձմեռված ընթացքում. հավաքելուց հետո չորացնում են և արկղների ու պարկերի մեջ լցնելով, պահում են:

Գարնանը ցանելու համար աշնանից պիտի լավ ստրատիֆիկացիայի յենթարկել:

Խնձորենի (malus communis Dest.)—Հայաստանի բոլոր անտառներում, առանց բացառության, կարելի յե հանդիպել վայրի խնձորենու տեսակներին, վորոնց պտուղները տարբերվում են իրենց մեծությամբ, գույնով, համով և այլն: Դեպի հողը խստապահանջ չե, ցրտին և մասամբ ել չորությանը դիմացկուն ե. աճում և ծովի մակերևույթից մինչեւ 1800 մ բարձրության վրա:

Բարենպատ պայմաններում ունենում է 10—15 մ բարձրություն, վորի փայտեղենը գնում ե մանր արհեստագործական կարիքների համար:

Թեպետ վայրի խնձորենու ուտելու համար այնքան ել պիտանի չեն, բայց նրանց մեջ յերբեմն պատահում են այնպիսիները, վորոնք բավական համեղ են և քաղցր:

Խնձորենին ծաղկում ե ապրիլին, պտուղները հասունանում են ոգոստոս-սեպտեմբեր ամիսներին, և այդ ամիսներին ել սկսվում ե նրանց հավաքը:

Պտուղները հավաքում են ծառից, կամ նախորոք թափ տալով՝ հավաքում են դետնից: Բարեհաջող պայմաններում մի մարդ որական հավաքում է մինչեւ 250 կիլոգրամ: Վայրի խնձորենու պտուղները՝ նրանց վերամշակման ու տեղափոխման դժվարությունների հետևանքով, թերեւ այնքան ել արժեքավոր չեն: Չնայած վերջին տարիներում սննդարդյունաբերության կազմակերպությունների կողմից մեծ պահանջ է առաջադրվել դեպի այդ պտուղները, սակայն ամենաարժեքավորը նրանք սերմերն են, վորոնց ոգտագործում են պտղաբուծության զարգացման համար: Ապագա կուլտուրական պտղատու խնձորենու այգիներ ստանալու համար վայրի խնձորենու սերմերը հանդիսանում են ամենաալավ մատերիալը: Դեպի այդ սերմերը պահանջը մեծ է վոչ միայն մեր յերկրի համար, այլ և եքսպորտի:

Մեծ քանակությամբ սերմեր պատրաստելու համար գոյություն տւնեն, այսպես ասած, ջարդող մեքենաներ, վորոնք պտուղը ջարդում են և այդ ջարդած պտուղները լցնում ջրով լիքը տակառների մեջ. այդպիսով ծանր սերմերը խորասուղվում են ջրի հատակում, իսկ պտղի մսալից մասը բարձրանում է ջրի յերեսը, վորը հավաքում և վերամշակում են ուրիշ նյութեր ստանալու համար:

Խորասուղված սերմերը ջրից հանելով՝ ցամաքեցնում, չորացնում ու պահում են: Իսկ յեթե հնարավոր չե ջարդող մեքենա ձեռք բերել, ապա այդ ոպերացիան կատարում են ավելի հասարակ ձևով:

Հավաքած պտուղները լցնում են մի շենքի մեջ, վորտեղ նրանց կուտակում են իրար վրա և, յեթե հնարավոր ե, դռներն ու պատուհանները փակում: Պտուղները տաքանալով՝ սկսվում ե նրանց նեխման պլրոցեսը և նրանք, այսպես ասած, լիսկում են այնքան, մինչև վոր սկսում են սպիրտի հոտ արձակել: Այդ պտուղները լցնում են ջրով լիքը տակառների կամ տաշտակների մեջ, ձեռքով կամ վոտքով տրուրում այնքան, մինչև վոր սերմերը պտուղներից դուրս են պլրծնում: Տրորված այդ պտուղների վրա հաճախ ջուր լցնելով ու խառնելով, նրանց մսալից մասերը բարձրանում են ջրի յերես, վորոնց հավաքում են կամ թափում, իսկ սերմերը՝ վորպես ավելի ծանր, իջնում են տակառների հատակը: Հատակն իջած սերմերը վերցնում են, չորացնում և մինչև ցանելու մոմենտը պահում: Մեկ տոնն պտուղից միջին հաշվով ստացվում է 12—13 կիլոգրամ մաքուր չոր սերմ:

Պտուղների ռացիոնալ վերամշակումով, բացի սերմերից, պտուղների մսալից մասից ստանում են խնձորի սոկ, վորից պատրաստում են գինի, ողի, պավիղլո և այլն, վորոնց պահանջը շատ մեծ է: Խնձորենու աշնանը ցանած սերմերը ծիլեր են տալիս գարնանը, իսկ գտրնանը ցանածները՝ հաջորդ գարնանը:

Կաղնի (Quercus Tourn).—Անտառային ծառատեսակների շաքում կաղնին իր փայտեղինի տեխնիկական հատկություններով ու կարեռությամբ ամենաառաջնակարգ տեղերից մեկն և գրավում: Նրա ծանր, ամուր և ճկուն փայտեղենն ոգտագործում են բնակարանային շինարարության և այլ կառուցումների համար: Նրանից պատրաստում են տակառներ, անիզներ, պարկետներ, կահկարասիք և թանգարժեք ֆաներա: Կեղևից ստանում են դարաղանյութ, վորի 1000 կիլոյից ստացվում է 60 կիլո մաքուր և թանգարժեք դարաղանյութ: Կաղնու սերմերից, վորոնք կոչվում են կաղիններ, պատրաստում են կոֆե, և բացի այդ, նրանք հանդիսանում են խոզերի համար ամենալավ գիրացնող կերակրանյութ:

Կաղնին իր մեծությամբ առաջին կարգի ծառ է, վորի բարձրու-

թյունը բարենպաստ պայմաններում հասնում է մինչև 40 մ, իսկ տրամագիծը՝ մինչև 2 մետրի։ Ապրում է մինչև 600—700 տարի։ Կանգրական տեղեկություններ, վոր ապրում է նույնիսկ մինչև 1500 տարի։

Կաղնին սկզբի 8—10 տարիներին աճում է դանդաղ, իսկ հետո՝ արագ, տալով տարեկան 30—40 սմ աճ, վորը շարունակվում է մինչև 100—120 տարեկան հասակը, վորից հետո աճը բարձրությամբ դադարում է, իսկ հաստությամբ՝ շարունակում։ Կաղնին բազմանում է սերմերով և արմատներից ու բներից տափս է ընձյուղներ (շիվեր), վորոնց արտադրելու համար մինչև 80—100 տարեկան հասակը բավական ուժեղ է։

Կաղնու արժեքավոր փայտեղենի, գեղեցկության, դյուրաճության շնորհիվ նա շատ վաղուց ե իր վրա գրավել մարդկանց ուշադրությունը։ Արհեստական անտառացման դեռ առաջին փորձերից արժանի ուշադրություն է դարձված այդ ծառի վրա. այդ տեսակետից հարուստ են նաև Հայաստանի անցյալ պատմությունը (Դվինի և Գառնիի անտառապատման աշխատանքները)։

Կաղնին ամենատարածված ծառատեսակներից մեկն է և նրա տեսակներից, այսպես ասած՝ ձմեռային կաղնին աճում է մինչև անգամ լենինգրադի մոտերքին։ Առանց բացառության, Հայաստանի բոլոր անտառներում տարածված է կաղնու այս կամ այն տեսակը, վորոնք յերբեմն կազմում են մաքուր ծառուտներ (կաղնուտներ) և յերբեմն ելքոխենու, հացենու, թղկենու հետ խառը ծառուտներ։

Հայաստանի անտառային ծառատեսակների մեջ կաղնին իր աշխարհագրական տարածականությամբ առաջինն է, վոր սկսվում է ամենացածր գոտուց և բարձրանում է մինչև անտառի ամենավերին գոտին՝ 2500 մետր ծովի մակերեսույթից։ Աճում է մեր ամենացուրտ անտառային շրջաններում, վորտեղ ուրիշ ծառատեսակներ, ինչպես, որինակ հաճարին, ընկուզենին մասսայական կերպով աճել չեն կարող։ Դեպի հողը պահանջկոտ է և բարենպաստ պայմաններում տափս է լավ աճ (սկահող, կավա-ավաղային հող և այլն)։ Սակայն, շնորհիվ նրա արմատների ճկունության և հարմարվելու ընդունակություններին՝ կաղնին հարմարվում է նաև մեր հարավ, հարավ-արևելյան քարքարոտ, չոր սարալանջերի պայմաններին, տալով 4 և 5-րդ բոնիտետի վոչ խիտ ծառուտներ։

Ազատ պայմաններում աճած կաղնին սկսում է ծաղկել և 20—30 տարեկան հասակում, իսկ խիտ ծառուտներում՝ 50—60 տ. հասակում։ Ծաղկում է տերեների արձակելու հետ միաժամանակ, սերմերը հասունանում են աշնանը և սկսում են թափվել աշնան առաջին վաղորդյան ցրտերից (տես նկ. 17)։

Առաջին հերթին թափվում են հիվանդ և ֆսասված կաղինները, հետեաբար, նրանց հավաքելը միտք չունի, հետո սկսում են թափվել առողջները, վորոնց հավաքը պիտի կազմակերպել հենց այդ մոմենտից։ Առողջ կաղինները նկատելի յեն իրենց արտաքին փայլով, խոշորությամբ և լցվածությամբ։ Կաղիններն իրենց մեծությամբ տարբերվում են, վորապիսի հանգամանքն, իհարկե, բացատրվում է նրանց տարբեր տեսակներին պատկանելով և այն պայմաններով, վորոնց մեջ աճում են նրանք։ Լավ պայմանների և բերքի առատ տարվա սերմերը խոշոր են լինում։ Առատ բերքատվությունը տեղի յե ունենում 3—5 տարին մեկ անգամ։ Կաղինները հավաքում են գետնից, յերբ նրանք արդեն թափված են լինում, կամ նախորոք թափ են տալիս, ապա հավաքում,



Նկ. 17. Կոթավոր կաղնի (*Quercus pedunculata* Ehrh.) կաղիններ, ծաղիկներ  
և տերեններ

և վերջապես հավաքում են ուղղակի ծառերից։ Այն ծառերը, վորոնցից նախատեսված և հավաքելու կաղիններ, նրանց տակը նախորոք փոցխերով մաքրում են, վորապեսդի հնարավոր լինի արագ և մաքուր կաղիններ հավաքել։ Կաղինները հավաքելուց հետո անմիջապես փռում են մի չոր տեղում, ցամաքեցնում, չորացնում, ապա տեղափոխում և պահում։ Չորացումը տևում է 1-ից մի քանի որ նայած յեղանակին և կաղինների թացության աստիճանին։

Առանց նախորոք չորացնելու, արկղների ու պարկերի մեջ լցնել կամ իրար վրա դարսել չի կարելի, հակառակ դեպքում նրանք կփտեն։ Կաղինների ծավալը, նրանց նուրբ կեղեր և մեծ քանակությամբ ջուր

պարունակելը, վորի հետևանքով և նրանց արագ նեխվելու վտանգն ու ծլունակությունը կորցնելը, մկների կողմից նրանց սպառնացող վտանգը և այլն—խիստ դժվարացնում են նրանց պահպանումը։ Այդ իսկ պատճառով ել, յերբ ուզում են սերմերը պահել մինչև գարնանացանի ժամանակը, նրանց հորում են։ Դրա համար ուշ աշնանը մի բարձր չոր վայրում 0,75 մ խորությամբ և 1 մ լայնությամբ ու յերկարությամբ հորեր են փորում և նրանց մեջ կրակ անելով՝ կողքերն այրում, չորացնում են, ապա նրանց հատակում ու կողքերում ծղոտ, մասր և չոր ճյուղեր և տերևներ են փռում, ապա լցնում են կաղինը՝ վերևից ծածկելով ճյուղերով և ապա հողով։ Ողափոխության համար անցքեր են թողնում, բայց այնպես, վորպեսզի ջուր չանցնի նրանց մեջ. բացի այդ ձևով պահելուց, շատ հաճախ կաղինները լցնում են քթոցների մեջ կամ ել այդ նպատակի համար պատրաստված մեծ զամբյուղների մեջ և դնում են հոսող ջրի մեջ։ Այդ նպատակի համար ընտրում են այնպիսի վայր, վորը գարնան հեղեղումների ժամանակ վտանգի տակ չինի։ Դրա համար աղբյուրների կամ փոքրիկ առվակների առաջ պատրաստում են փոքրիկ ջրամբար, վորի վերևի մասում թողնում են անցք ջրի հոսելու համար և այդ ջրամբարում խորասուզում են քթոցներով ու զամբյուղներով լիքը կաղիններն այն չափով, վոր ջրի ստեղծութեալքում սառցաշերտը զամբյուղներին չհասնի։ Այդ ձևով կաղինները կարելի յե պահել մինչև գարուն։ Ջրամբարի ջուրը միշտ պիտի հոսի, հակառակ դեպքում սերմերը կփչանան։

Աշխատանքների հեշտության տեսակետից հաճախ կաղինները հավաքելուց և պատրաստելուց հետո ժամանակավորապես պահում են անտառում մինչև ձյան գալը։ Ցրտահարություններից խուսափելու համար իրար վրա դարսած կաղինները ծածկում են չոր տերևներով, խոտով կամ ծղոտով մինչև ձյան գալը։

Անտառի ծմակ և ստվերակալած վայրում ճյուն են լցնում, լավ նստացնում մինչև 20—30 սմ հաստությամբ, վորի վրա լցնում են 10 սմ խորությամբ կաղինների մի շերտ և բոլոր կողմերից ծածկում են ճյունով։ Ձյան շերտը նորից խտացնում են և այդ շերտի վրա նորից լցնում կաղնու մի շերտ ու նույն ձևով ծածկում ճյունով։ Այդպիսի շերտեր անում են մի քանի հատ, և ստացվում են ձյան մի փոքրիկ բլբակ։ Պաշտպանելու համար այդ բլբակը ծածկում են 30—40 սմ հաստությամբ տերևների ու ցողունների մի շերտով, վորոնք գարնանը պաշտպանում են նրան ձյան հարվելուց։ Գարնանը բլբակի մի կողմը բաց են անում և կաղինները կամաց-կամաց վերցնում և ըստ կարիքի ոգտագործում։

Կաղիններն իրենց ծլուսակությունը պահպանում են մինչև դարուն։ Աշնանը ցանելուց հետո ծիլեր տալիս են գարնանը։ Բայց աշնան ցանքը վտանգավոր է այն տեսակետից, վոր ձմեռվա ընթացքում և մինչև դարուն, մինչև նրանց ծիլերի դուրս գալը, մկները և ուրիշ կենդանիներ կարող են նրանց հափշտակել։ Ուստի նպատակահարմար է ցանքը կատարել վաղ գարնանը, յերբ 3—5 շաբթվա ընթացքում բոլորովին ծլում են։

Հայաստանի անտառներում աճում են կաղնու մի շարք տեսակներ, ինչպիսիք են՝ արաքսյան կաղնի (*Quercus araxina* Trautv.), գլխավորապես Մեղրիի և Ղափանի շրջաններում, մանավանդ Արաքս գետի հովտում։ Արևելյան կաղնի (*Q. macranthera* Fisch. et Mey.). տարածված է ամենուրեք, սկսած ծովի մակերեսույթից 1200 մետր բարձրությունից մինչև անտառների վերջին սահմանը—2500 մետր։ Զմեռային կաղնի (*Q. Sessiliflora* Sm.). տարածված է ամենուրեք՝ սկսած ամենացածր տեղերից մինչև 1200 մետր ծովի մակերեսույթից բարձր։

Կօրավոր կաղնի (*Q. pedunculata* Ehrh.)—Պատահում է իջևանի և Ալլահվերդու շրջաններում հատ ու կենտ կերպով, այն ել ներքին դուտիններում—այդինքում։

Բացի վերոհիշյալներից, 1935 թ. գարնանը Աղբքեջանի Լենքուրանի շրջանից Յերևանի անտառատնտեսությունը բերել է տվել շագանակատերև կաղնու տնկիններ, վորոնց տնկել են Գառնիի Աղատ գետի հովտում, Զաննաթլու գյուղի մոտ։ Այդ տնկիններն այժմ իրենց լավ են զգում։

Հանարի (*fagus*).—Հաճարին առաջին կարգի մեծության ծառ է, վորի բարձրությունը բարենպաստ պայմաններում հասնում է մինչև 40 մետր և տրամագիծը՝ մինչև 2 մետր։ Ապրում է մինչև 400 տարի։ Ստվերատար է և դեպի ողի խոնավությունը պահանջկոտ, բայց դեպի հողը խստապահանջ չե, միաժամանակ խուսափում է շատ քարքարոս և չոր հողերից։ Աճում է հյուսիսային, հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան խոնավ, ստվերավորված, հումուսով հարուստ թարմ հողերում։ Հաճարին ծովային և լեռնային կլիմայի ծառ է համարվում, վորը հաջողությամբ աճելով հյուսիսային խոնավ լանջերում, տալիս է մաքուր և խիտ ծառուտներ, վորոնք ուժեղ ստվերակալում են իրենց գրաված հողային տարածությունը և հնարավորություն չեն տալիս ուրիշ ծառատեսակներին ու խոտարույսերին աճելու իրենց ստվերի տակ։

Այդպիսի ծառուտների սաղարթների տակ կարելի յե տեսնել միայն հաճարինների սպիտակավուն, հարթ և ճյուղերից մաքուր կոկուկ բներ, իսկ գետնի վրա՝ մեռած տերևների ծածկոցը։

Հաճարի տեսակներից Հայաստանում աճում ե միայն արևելյան հաճարը (*fagus orientalis Lipsky*), վորը կազմում ե մեր անտառների հիմնական պաշարը։ Բացառությամբ Գորիսի, Ղափանի, Մեղրիի, Աղիպետկովի, Գառնիի, Ծաղկաձորի և Ապարան-Արագածի անտառներից՝



Նկ. 18. Հաճարի (*Fagus orientalis Lipsky*)

Հայաստանի մնացած բոլոր անտառների հիմնական մասը կազմում են հաճարկուտները։ Կամ հաճարի, բոխի, կաղնու և այլ ծառերի խառը ծառուտները։

Ալլահվերդու, Կիրովականի, Իջևանի, Դիլիջանի, Շամշադինի անտառային տարածությունների ամբողջ հյուսիսային լանջերը ծածկված են հաճարիների հիանալի անտառներով։ Նրանք սկսվում են ամենացածր դոտիներից և վերջանում ամենավերին գոտիներով, մինչև 2500 մ ծովի մակերեսույթից։ Հաճարի փայտեղենը չորացնելուց հետո, նրա գեղեցիկ գույնը, միջուկի ճառագայթների յուրահատկությունը, թեթևությունը և ամրությունը նրան պիտանի յեն դարձրել կահույքային, ֆաներային և ավելարդյունաբերության համար։

Լինելով ստվերատար՝ առաջին 10 տարիներում աճում երավական դանդաղ, բայց հետո սկսում է աճել արագ։ Մկնում եւ պտղաբերել 40—50 տարեկան հասակում։ Բազմանում է գլխավորապես սերմերով, վորոնք բավական թանգարժեք են, վորովհետև նրանցից ստացվում է յուղ։ Ծաղկում է գարնանը՝ տերևներ արձակելու հետ զուգընթացարար, և սերմերը հասունանում են սեպտեմբերի վերջերին—հոկտեմբերին, վորոնք 2-ական կամ 3-ական հատ տեղավորված են գնդաձև, փշակալած պատյանում։ Վերջիններս ամրացած են ճյուղերին պտղակոթի միջոցով։ Աշնանն այդ գնդիկները գագաթից տալիս են 4 ճեղքվածքներ, վորոնցից թափվում են ընկուղիկները։ Ընկուղիկներն իրենցից ներկայացնում են 3 անկյունանոց փոքրիկ սերմեր, վորոնց մեծությունը հասնում է 1—1,5 սմ (տես նկ. 18)։

Յերկույթերեք տարին մեկ անգամ տալիս եւ միջակ բերք և 5—7 տարին մեկ անգամ՝ առատ բերք։

Սերմերը թափվելուց հետո հավաքում են հողի յերեսից, մաքրում, չորացնում և պահում ցուրտ, բայց չոր ամրաբներում։ Պետք եւ լավ հիշել, վոր հաճարի ընկուղներն իրենց մեջ պարունակում են են ձեթ և չոր ու տաք շենքերում նրանք հեշտությամբ չորանում են և նրանց միջի յուղը գոլորշիանում ե, վորից հետո նրանք կորցնում են իրենց ծլունակությունը։ Բացի այդ, մկները հարձակվում են նրանց վրա և վոչնչացնում։ Գարնանը ցանելուց հետո 15—35 որվա ընթացքում ծիլերը դուրս են գալիս։

Հացի (*fraxinus excelsior* L.)—Հայաստանի բոլոր անտառներում ամենուրեք տարածված ե հացին, այն ել միայն մի տեսակը՝ սովորական հացին (*fraxinus excelsior* L.). Աճում ե ծովի մակերեսույթից մինչև 1800—2000 մ բարձրության վրա։ Նկատելի յեն նրա տարափոխված վարիանտները, վորոնք տարբերվում են տերևների գույնով, խայտարդետությամբ և ճյուղերի դեպի ներքև քաշ ընկնելով, վորը հիշեցնում է լացող ուսենուն։ Պիտի յենթաղբել, վոր այդ յերեսույթները հետևանք են կլիմայական ֆակտորների ներգործություն

Բացի սովորական հացենուց, այգիներում, ծառուղիներում և վերջին տարիներում անտառային կուլտուրաներում զգալի չափով զարկ ե տրված ամերիկական հացենուն (fraxinus americana L.): Այդ տեսակը հաջողությամբ աճում է միջին զոնաներում, այն եւ ծովի մակերնութիւն 600—1300 մ բարձրության վրա, գլխավորապես պաշտպանված և խոնավ հովիտներում: Սովորական հացին առանձին մեծ ծառուտներ չի կազմում և տարածվում է կաղնու, թղկու, բոխու և այլ ծառերի հետ միասին՝ կազմելով խառը ծառուտ: Մաքուր հացուտներ լինում են շատ հազվագյուտ և շատ փոքրիկ տարածություններով: Սովորական հացին առաջին կարգի մեծության ծառ է, վորն ունի ուղիղ բուն: Մեղանում լավ պայմաններում ունենում է մինչև 30 մ բարձրություն և 1 մ տրամագիծ, իսկ ընդհանուր առմամբ բարենպաստ պայմաններում նրա բարձրությունը հասնում է մինչև 40 մետրի:

Լուսաւեր ե, լավ աճում է հարուստ



Նկ. 19. Հացի (Fraxinus excelsior L.)

Նկ. 20. Հացենու սերմ

և խոնավ հողերում, շատ ուժեղ ցրտերից նրա մատղաշ ճյուղերը տուժում են: Փայտեղենը ծանր է, ամուր, դիմացկուն, վորը գլխավորապես դնում է ավեցիոն, գյուղատնտեսական, մեքենաշինարարության, տնային կահկարասիքի, կառաշինարարության և այլ կարիքների համար:

Բազմանում ու տարածվում է սերմերով, հաջողությամբ վերաճում ե ընձյուղներով: Լավ պայմաններում և աղատ աճած ծառերն սկսում են



ծաղկել և պտղաբերել 7—8 տարեկան հասակում, իսկ բարձր գոտիների խիտանտառներում՝ 20—25 տարեկան հասակում։ Ծաղկում է զարնանը, նախքան տերևների արձակելը, և ծաղիկները փունջ-փունջ են (տես նկ. 19):

Պտուղները լեղվածե են՝ բութ ծայրով, հաստ կաշվակեղե և մեկթեանի, վորոնք նստած են պտղակոթի վրա (տես նկ. 20): Այդ պտուղների հիմքում տեղավորված է կանաչավուն սերմը։ Առատ պտղաբերում է համարյա թե ամեն տարի և լավ պահելու դեպքում ծլունակությունը պահպանում է մինչև 3 տարի։ Սերմերը հասունանում են հոկտեմբերին և յերկար ժամանակ մնում են ծառերից կախված։ Գարնանը ցանելուց հետո ծիլերը դուրս են գալիս հաջորդ գարնանը, հետեւարար, գարնանը ցանելու համար անհրաժեշտ է նախորոք ստրատիֆիկացիայի յենթարկել:

**Սոսի** (*Platanus orientalis* L.).—Հինգ բլթականի, լայն գեղեցիկ տերևներ ունի, վորոնց հակառակ յերեսը սպիտակ գույն ունեն։ Առաջին կարգի մեծության ծառ է, վորի բարձրությունը հասնում է մինչև 40, իսկ տրամագիծը՝ մինչև 2 մետրի, ապրում է մինչև 3000 տարի։ Առանձին առատ և լավ պայմաններում աճած ծառերի հաստությունը յերբեմն հասնում է մի-

քանի մետրի, տալով  
ընդարձակ և գեղեցիկ  
սաղարթ, վորն ստվերակալում է մի։ Քանի  
հարյուր քառ. մետր  
տարածություն, դրա  
համար ել լայն չափերով ողտագործում են  
քաղաքների և գյուղերի կանաչաղարդման  
համար։ Փայտանյութը ամուր է, պինդ,  
գեղեցիկ, թեթև և հղկելուց հետո ստանում է գեղեցիկ տեսք, վորը բավական թանգ է գնահատվում արդյունաբերության, կահկարասիքի պատրաստման և այլ բնագավառներում։

Բացի վերը թված հատկություններից, սոսին ուշադրության արժանի յե նաև վորպես շատ արագած ծառատեսակներից մեկը։ Ծաղկում է զարնանը, տերևներ արձակելու հետ սիաժամանակ։ Սերմերը



Նկ. 21. Սոսու պտուղը (*Platanus orientalis*)

չափազանց մանր են և համախմբված—նստած փոքրիկ գնդիկի (միշուկի) վրա, կազմելով փշանման գնդիկ՝ կախ են ընկնում պաղակոթից (տես նկ. 21): Սերմերը հասունանում են աշնանը, վորոնք ծառերից մնում են կախված մինչև ձմեռ և ուշ գարուն: Նկատելի յե, վոր սերմերով դժվարությամբ ե աճում, վորի համար ել աճեցնում են կտրոններով: Տալիս ե առատ ընձյուղներ:

Առու բնական անտառներ չկան, նրանք պատահում են ցրված, հատ ու կենտ և մեծ մասամբ արհեստական ծագում ունեն: Բնական ծագում ունեցող սոսուտի մի փոքրիկ պուրակ հայտաբերված ե մեր Ղափանի շրջանի Բասուտ գետի հովտում, վորի վրա առանձին հսկողություն և սահմանված: Բացի այդ, արհեստական կերպով հատ ու կենտ ծառերի կարելի յե հանդիպել Մեղրում, Շամշադինում Սեքարում, Վաղարշապատում և Յերևանում:

Տանձենի (ρίτος L).—Տանձենին ևս պատկանում ե մեր այն ծառատեսակների խմբին, վորը տարածված ե Հայաստանի անտառներում ամենուրեք: Ճիշտ ե, տանձենին, ինչպես և խնձորենին ինքնուրույն մեծ ծառուտներ չեն կազմում, բայց բոլոր բարձրությունների վրա կարելի յե պատահել նրա այս կամ այն տեսակին:

Հայաստանում տանձենու տեսակները բավական շատ են, բայց, դժբախտաբար, նրանք գեռ լավ ուսումնասիրված չեն: Նրանց մեջ կան 2-րդ կարգի մեծության ծառեր, վորոնք արժեքավոր են իրենց գեղեցիկ և ամուր, թանգարժեք փայտեղենով, պտուղներով ու սերմերով: Նրանց մեջ կան այնպիսի տեսակներ, վորոնք շատ խոշոր նշանակություն ունեն պտղաբուծության դարգացման համար: Գառնիի և Միկոյանի անտառներում պատահում են տանձենու այնպիսի տեսակներ, վորոնք խիստ չորության ու ցրտի մեծ հաջողությամբ դիմանում են: Այդ կարգի տեսակները կարելու են վոչ միայն պտղաբուծության համար, այլև չոր և հողաղուրկ սարալանջերն անտառապատելու համար: Բայց Ա. Մուշեղյանի, մեր անտառային սահմաններում աճում են 7 գլխավոր տեսակներ, ինչպիսիք են՝ սովորական յերկայնատերեն, զիթոնատերեն, հաստակոթ, ուղղեցյան և ուռետերեն տանձենիները \*): Բոլոր տեսակի տանձենիների սերմերի հատկությունները և պատրաստման ու վերամշակման տեխնիկան համարյա թե

\* ) Ա. Մուշեղյան—Աստուածի և Խորհրդային Հայաստանի անտառների մասին, եջ 92

նույն են, ինչ վոր խնձորենու սերմերինն եյին, վորոնց մասին մենք բավական մանրամասն խոսել ենք և այստեղ ավելորդ ենք համարում կը կնել:

### ԳԼԽԱՎՈՐ ԹՓՈՒՏՆԵՐ

Մեր անտառային բուսականության մեջ, բացի վերը թված գլխավոր ծառատեսակներից, խիստ ուշագրավ են նաև մի շարք պտղատու ծառաթփուտներ և թփուտներ, վորոնցից մի քանիսի վրա անհրաժեշտ ե կանգ առնել:

**Հոնի (Carnus mascula L.).**—Մինչեւ 6—7 մետր բարձրությամբ և 15—20 սմ տրամագծով թուփի եւ Փայտեղենը ծանր եւ և ամուր, վորը գլխավորապես գնում ե մուրճերի կոթեր պատրաստելու համար: Բավարար պտղաբերում ե ամեն տարի, յեթե բնական պատահարներ չեն խանգարում: Պտուղը մսալից ե, փափուկ, կարմիր գույնի, վորի մեջ տեղավորված ե յերկու կողմից սուր, յերկարավուն կլոր կորիզավոր սերմ, վորը փայտի տպավորություն ե թողնում: Պտուղները յուրահատուկ անուշահոտությամբ թթվաքաղցրահամ են, վորոնցից պատրաստում են մուրաբա, ողի և այլն: Մեծ չափերով աճում ե իջևանի, Շամշադինի, Ալլահվերդու, Գորիսի, Մեղրու, Ղափանի և այլ անտառային շրջաններում: Աճում ե սերմերով, վորոնց անհրաժեշտ ե նախքան ցանելը 1—2 տարի ստրատիֆիկացիայի յենթարկել, հետո ցանել:

**Սղի (Crataegus L.).**—Հայաստանի անտառային բոլոր շրջաններում, սկսած ամենաբարձր գոտիներից և վերջացրած ամենացածր գոտիներում, աճում են սղնու այս կամ այն տեսակները, վորոնցից հայտնի յեն սեապտուղ, սովորական, կարմիր և արևելյան սղնիները:

Արևելյան սղնին տարածված ե գլխավորապես Մեղրու, Միկոյանի, Ազիզբեկովի, Գառնու և Արագածի անտառներում, վորն ունի խոշոր, կարմիր և համեմատաբար ավելի քաղցր ու համեղ պտուղներ:

Սղնին հաջողությամբ բազմանում ե սերմերով և տափս ե ընձյուղներ: Ծաղկում ե գարնանը, նախքան տերևներ արծակելը, և պտուղները հասունանում են սեպտեմբերին: Պտուղների մեջ տեղավորված են նրա սերմերը—կորիզիկները:

Զարդացնում են գլխավորապես կենդանի (կանաչ) ցանկապատեր ստեղծելու նպատակով, վորովինետե նրանք ունեն մեծ, ամուր ծակող փշեր: Բացի այդ, սղնու փայտեղենը թանգ ե գնահատվում: Սղնին թուփ ե, վորի բարձրությունը հասնում ե մինչեւ 8 մետրի:

**Զկեռ (Mespilus germanica L.).**—Թուփի ե, մինչեւ 5—6 մ բարձ-

ըությամբ։ Բացի Ապարան-Արագածի, Ծաղկաձորի, Գառնու և այդ բարձրություններին հավասար անտառներից, մնացած բոլոր անտառամասերում, մանավանդ ցածր և միջին գոտիներում կարելի յեւ պատահել զկեռի թփուտների։ Տալիս եւ չոր պտուղներ, վորոնց մեջ տեղավորված են կորիզավոր հատիկներ (սերմեր)։ Պտուղներն ունենում են սալորի մեծություն և ուտելու համար համեղ ու պիտանի յեն դառնում ուշ աշնան ցրտահարություններից հետո։ Պտուղներից ստանում են նաև ողի։ Տարածվում եւ սերմերով և տալիս եւ ընձյուղներ։

Սալոր վայրի (*Prunus instititia* L.)—Մինչև 7—8 մետր բարձրության բազմաբուն ծառ է։ Կանաչ-դեղնավուն, յերբեմն կարմիր գույնի և թթու համ ունեցող նրա պտուղները, վորոնք իրենց մեջ պարունակում են սերմեր, հասունանում են ոգոստոսին։ Գնահատելի յեն նրա սերմերը, վորոնցից ստանում են տնկանյութեր՝ լավ տեսակի սալորներ ստանալու համար։

Բացի վերոհիշյալ թփուտներից, ուշադրության արժանի յեւ նաև վայրի կեռասին, վորն աճում է Ծաղկաձորի, Կիրովականի, Ալլահվերդու և այլ անտառներում։ Մեծ չափով տարածված են մոշի, մորու, հաղարճենու, տկողինի թփուտները, վորոնք աճում են Ալլահվերդու, Կիրովականի, Իջևանի, Շամշադինի, Ղափանի անտառներում։ Դերես գետի հովտում պատահում են վայրի նուռ, թուղ և խաղող։

Արագածի, Գառնու, Միկոյանի և Մեղրու շրջաններում կան վայրի նշենիների տեսակներ, վորոնց վրա մենք առանձնապես կանգ չենք առնում։

ԾԱՌԱՍՏԵՐՄԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ա) Նախապատրաստական տեխնոլոգիաները.— Արտադրական պլանական կատարումը պահանջվելիք համապատասխան քանակի, վորակի և տեսակի սերմերով ապահովելու համար վերը թված անհրաժեշտ գիտելիքների հետ միասին անհրաժեշտ ե իմանալ նաև այդ սերմերի հավաքման աշխատանքների կազմակերպչական կողմը։ Իսկ դրա համար անհրաժեշտ ե նախորոք տանել համապատասխան նախապատրաստական աշխատանքներ, վորոնք կապահովեն ժամանակին, վորակով և համապատասխան քանակով սերմերի հավաքման պլանը։ Դրա համար անհրաժեշտ ե նախքան սերմերի հասունանալը պատրաստել համապատասխան քանակությամբ պարկեր, արկղներ և զամբյուղներ՝ սերմերի հավաքման և փոխադրման համար։ Այնքան, վորքան սերմերի փոխադրությունից հետո անհրաժեշտ ե նրանց վերամշակումը, մանավանդ տանձի, խնձորի, սալորի, հոնի և այլ սերմերի, վորոնք ավելի մեծ աշխատանքներ ու հարմարություններ են պահանջում, անհրաժեշտ ե, վոր ժամանակին պահանջվելիք բոլոր հարմարություններն ստեղծվեն, հակառակ դեպքում սերմերը կարող են փչանալ։ Նման կորըստից խուսափելու համար անհրաժեշտ ե նախքան սերմերի հավաքն սկսելը՝

ա) նախատեսել այն վայրերը, ուր պիտի տեղափոխվեն, վերամշակվեն և պահվեն հավաքված սերմերը.

բ) այդ վայրում պատրաստել համապատասխան շենքեր և պահեստներ.

գ) սերմերի հավաքման և վերամշակման համար ձեռք բերել անհրաժեշտ գործիքներ, ինչպիսիք են՝ ավել, թի, սուր մեծ դանակներ, տակառներ, տաշտակներ, ցանցից պատրաստած քամիչներ (կամ մեծ մաղեր), կոնահատներ, փոցիներ և այլն։

Վորակյալ սերմեր հավաքելու համար նախորոք պիտի պայմանավորվել բանվորների հետ, ընտրելով փորձվածներին, կազմակերպելով նրանց հետ զրույց՝ սերմերի հավաքելու մասին, տալով նրանց համապատասխան հրահանգչական-տեխնիկական ցուցումներ։ Արելով նրանց ուշադրությունն այն բանի վրա, թե ինչպիսի սերմեր ինչպի-

ակ ծառերի վրայից պետք ե հավաքել և ինչպիսիք գետնից, պետք ե ցույց տալ նրանց լավ սերմերի բնորոշ նշանները և այլն:

Հայտնի յե, վոր մինչև հիմա սերմեր ու պտուղներ հավաքում են գլխավորապես հետեւյալ նպատակների համար՝

ա) մշտական տեղերում ցանելու և նոր անտառներ ստանալու նպատակով.

բ) տնկարաններում ցանելու, տնկիներ ստանալու և այդ տնկիներն ուրիշ տեղեր տեղափոխելու համար.

գ) բնական վերաճին նպաստելու կարգով չվերաճող հատատեղերում, նոսր և ծերացած ծառուտերում ցանելու համար.

դ) համապատասխան արդյունաբերություններում վերամշակելու և սննդամթերքներ ստանալու համար (կոնսերվի, խմիչքեղենի, հրուշակային, կաֆե և այլն).

ե) վորպես սեղանի թարմ միրդ ոգտագործելու համար.

զ) վորպես անասնակեր (կաղին՝ խոզերի համար և այլն) ոգտադրելու համար,

է) տեղական բնակչությունը հավաքում և չորացնելու և ողի, թթվածքներ և այլ սննդամթերքներ ու գունաներկեր պատրաստելու համար:

Վերը թված բնագավառների պահանջներին համապատասխան՝ անհրաժեշտ ե նախորոք վորոշել այն անտառամասերը, վորտեղ այս կամ այն նպատակի համար կատարվելու յե ծառասերմերի պտուղների հավաքը:

Կասկած չի կարող լինել այն մասին, վոր անտառկուլտուրական նպատակների համար սերմերը պիտի հավաքվեն այնպիսի վայրերից, վորոնց բնական պայմանները հնարավորության սահմաններում համապատասխան են այն վայրերի ընդհանուր պայմաններին, վորտեղ նրանք ցանվելու յեն: Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ ե, վոր ստույգ վորոշվի առանձին ծառատեսակների լավ հասունանալու ժամանակը և սահմանվեն նրանց հավաքելու ժամկետները:

Նախորդ գլխում առանձին ծառատեսակները բնութագրելիս մենք այդ խնդիրը շոշափել ենք ընդհանրապես, բայց վորովհետեւ տարբեր կլիմայական պայմաններում սերմերի հասունացումը տարբեր ժամանակներում ե տեղի ունենում, ուստի խիստ կարեոր ե, վորպեսզի յուրաքանչյուր առանձին դեպքում այդ խնդրի վրա ուշադրություն դարձվի:

Բացի աշխարհագրական վայրերի ընտրությունից, շատ խիստ կարեոր ե նաև հաշվի առնել ծառուտի բնույթը (նրա ծագումը, հասակը, բոնիտետը և այլն):

Մեր յերկրի խիստ լեռնային լինելու հանգամանքը և դրան վորպես հետևանք հողակլիմայական պայմանների տարբեր զոնաները վոչ միայն ըստ աղմինիստրատիվ շրջանների, այլև միևնույն շրջանի պայմաններում և նույնիսկ յուրաքանչյուր անտառամասերի սահմաններում թույլ չեն տալիս մեղ առանձին ծառատեսակների ծաղկման, նրանց սերմերի հասունացման և քաղելու համար ճշգրիտ ժամկետներ վորոշել, ուստի գրքի վերջում բերված աղյուսակը, վոր նվիրված ե այդ հարցերին, կարող ե ծառայել միայն վորպես որինստիր։ Դեկավարվելով այդ աղյուսակում բերված տվյալներով և ստուգելով այդ տվյալները տեղերում, առանձին անտառամասերի և գոտիների նկատմամբ տեղական աշխատողները կարող են այդպիսի աղյուսակներ կազմել իրենց շրջանների անտառների մասին։ Աղյուսակում շոշափված հարցերը լավ իմանալու դեպքում հեշտանում ե պլանավորման գործը և առանձին աշխատանքների սկսման և ավարտման ժամկետները, ինչպես նաև ուժերի և միջոցների բաշխումը։

բ) Սերմերի հավաքը.—Նախորոք իմանալով առանձին ծառերի ծաղկելու և սերմերի հասունանալու ժամկետները, ինչպես նաև նրանց հատկությունները, կազմակերպված կերպով կարելի յե սկսել սերմերի հավաքը։ Ծառասերմերի հավաքը, շնորհիվ այդ բնագավառի տեխնիկայի հետամնացության, կատարվում է շատ սլրիմիտիվ ձևով, այն եւ ձեռքով։ Սակայն շատ խիստ կարեոր ե, վոր սերմերը հավաքվեն արեվային չոր յեղանակներին, գլխավորապես ցերեկվա ժամերին։

Սերմերի հավաքումը կարելի յե բաժանել մի քանի ժամկետների, կախված սերմերի թափվելու արագությունից և սերմերի հասունանալու ժամանակից։

### Հստ ժամանակի՝

Գարնանը— ներքին գոտիներում ապրիլի կեսերին, իսկ բարձր գոտիներում՝ ապրիլի վերջին կամ մայիսին հավաքում են բարդի, կաղամախի և ուռիի սերմերը։

Գարնան վերջին կտմ ամառվա սկզբներին—հավաքում են թեղու սերմերը։

Ամառվա ընթացքում հավաքում են թթի, ղեղին ակացիայի, կեշիի, վայրի սալորի, վայրի կեռասի, վայրի նշենու և մահալերյան բաւմնու սերմերը։

Ամառվա վերջին յեվ մասամբ ամենա սկզբին հավաքում են տանձի, խնձորի, հոնի, սղնու, կտտկենու, տկողինի, չիչխանի, ընկուղի, մամուխի, մասրի, սպիտակ ակացիայի, գլեղիչիայի և այլ սերմերը։

ԱՅՆ ընթացքում — հացենու, թղկու, լորու, կաղնու, հաճարի, բոխու, զկեռի և ֆոշնու սերմերը:

ԱՅՆ վերջին յեվ ձմեռվա ընթացքում — սոճու կոները:

Բացի այդ, մի շարք ծառասերմեր, ինչպես, որինակ՝ հացի, լորու և թղկու, վորոնք մնում են ծառերից կախված մինչև ձմեռ, նրանց հավաքումը կարելի յե շարունակել նաև ձմեռվա ընթացքում, սակայն ավելի լավ ե անհրաժեշտ քանակի այդ սերմերը դարձյալ հավաքել աշնանը և ստրատիֆիկացիայի յենթարկել՝ գարնանը ցանելու համար: Զմեռը հավաքում են միայն այն դեպքում, յերբ աշնանը վորևե ոլատմառով չեն կարողացել անհրաժեշտ քանակի սերմերը պատրաստել:

Նկատի ունենալով սերմերի հավաքման դժվարությունները, մասնավանդ մանր սերմերի, վորոնք դետին թափվելով կարող են քարերի և խոտերի մեջ աննկատելի լինել և բացիայդ, քամին ել կարող ե նրանց քշել և տանել, նպատակահարմար ե ծառասերմերի մի մասը. հավաքել նախքան նրանց թափվելը, իսկ մյուս մասը՝ թափվելուց հետո: Այսպես, որինակ՝ նպատակահարմար ե նախքան լրիվ հասունանալը, ուղղակի ծառերի վրայից հավաքել թեղու, կաղամախու, բարդու, ուռի և կեչու սերմերը, վորոնք հավաքելուց 1—3 որ հետո լրիվ հասունանում են:

Սոճու, հացի, թղկու, լորու սերմերը պիտի հավաքել, յերբ նրանք լավ հասունացած, բայց դեռ ծառերից թափված չեն լինի: Ցեզ վերջապես կաղնու, ընկուղի, տանձի, խնձորի, հոնի, սալորի, հաճարի, վայրի կեռասի և այլ սերմերը պիտի հավաքել, յերբ նրանք լավ հասունացած և թափված կլինեն, կամ նրանց թափել, ապա հավաքել: Սակայն բոլոր դեպքերումն ել պիտի զդուշ լինել, վոր թե թափված և թե ծառերի վրա մնացած ընկուղենու, կաղնու և այլ սերմերը ժամանակին հավաքվեն, հակառակ դեպքում՝ կրծող կենդանիները և թըռչունները կարող են լավորակ սերմերը հափշտակել: Անտառային արնատեսություններին հայտնի յեն դեպքեր, յերբ մկներն ու չքարուկները մի քանի որվա ընթացքում հափշտակել են թափված ընկուղների և կաղինների ամբողջ բերքը:

գ) Սերմերի տեղափոխումը յեվ վերամշակումը.—Հավաքած սերմերը, յեթե հնարավոր ե և թանգ չի նստելու, հենց իրենց տեղում անմիջապես պիտի չորացնել, մաքրել զանազան խառնուրդներից, տեսակավորել և հիմնականորեն կամ ժամանակավորապես ապահով կերպով պահել, վորպեսզի նրանք չփչանան, կամ կենդանիները չհափշտակեն:

Այն սերմերը, վորոնց պահանջվում է վերամշակել, ինչպիսիք են՝ տանձ, խնձոր և այլն, առանց հապաղելու պետք եւ սկսել նրանց վերամշակումը, վորի մասին մենք արդին խոսել ենք: Իսկ յեթե սերմերի հավաքման վայրում այդ աշխատանքները կատարելու հնարավորություն չկա կամ նպատակահարմար չե, ապա շուտափույթ կերպով պիտի կադմակերպել նրանց տեղափոխությունը դեպի նախատեսված վայրերը: Հակառակ դեպքում իրար վրա կուտակված սերմերը կտաքանան, կայրվեն, կնեխվեն, կփոխեն և կոչնչանան, լավագույն դեպքում վորպես սերմացու անպետք կլինեն:

Սերմերի տեղափոխումը պիտի կատարել վորքան կարելի յե արագ և անվտանգ, այնպես, վորպեսպի նրանք ճանապարհին չտրորվեն, չջարդվեն, չթրջվեն և չտաքանան, իսկ դրա համար անհրաժեշտ ե նրանց վարպետորեն տեղափորել պարկերում, արկղներում, կապել նըրանց և տեղափորել փոխադրական միջոցների մեջ:

Սերմերը տեղափոխելուց և վերամշակելուց հետո ամենաիմնական և ամենակարևոր աշխատանքը, վորը կարող ե արդարացնել բոլոր ծախսերը և ապահովել սերմացվով, դա սերմերի տնվտանգ պահուանումն և յեվ ստրատիֆիկացիան:

Հավաքված և պատրաստված այն ծառասերմերը, վորոնք անմիջապես չեն ոգտագործվելու և պիտի պահպեն մինչև գարուն (բացի ուռիի, քարդու, կեչու և թեղու սերմերից), պետք ե հողի մեջ ստրատիֆակացիայի յենթարկել և չոր ու ցուրտ պահեստներում, ջրի, ձյան մեջ և այլ ձեռվ պահել. պահելու աշխատանքները պիտի կատարել անմիջապես: Իսկ այն ծառասերմերը, վորոնք վորոշ ժամանակից հետո յեն ոգտագործվելու կամ ուրիշ վայրեր ուղարկվելու, անհրաժեշտ և նրանց ևս ժամանակավորապես ապահով պահել:

## ПЯТИГОДЧИК 4РЩЧШЫЛЪЗОЛЬ

1. Э. Л. Вольф — Хвойные деревья и кустарники Европейской и Азиатской частей СССР, 1925 г.
2. Проф. В. Ф. Овсяников — Хвойные породы, 1934 г.
3. Проф. Курдиани С. З. — Дендрология, 1934 г.
4. Проф. В. Н. Сукачев — Дендрология с основами лесной геоботаники 1934 г.
5. В. П. Князев — Описание лесных деревьев и лесоведение, выпуск второй, 1934 г.
6. А. Н. Углицких — Лесные и декоративные деревья и кустарники, 1927 г.
7. Д. И. Кайгородов — Беседы о лесе, 1931 г.
8. И. А. Альтов, М. К. Гладышевский, Ф. М. Дальникович, Е. А. Данилов, В. В. Лебедев, . К. Панков, Б. В. Щербаков . . . — Первая книга по агролесомелиорации 1933 г.
9. П. А. Голосов — Хранение желудей, 1935 г.
10. Средне-волжский лесн. трест „Средлес“ — Урочные наряды по лесокультурным работам, 1931 г.
11. В. Г. Каппер — Об организации ежегодных систематических наблюдений над плодоношением древесных пород.
12. Шп. Шп. — Цыпшик и Кирбет-жылъ 2шышишынъ шыппанъ 1935 р.
13. В. В. Калитаев и П. М. Дубинин — Отбор, хранение и подготовка к посеву семян основных культур, 1936 г.
14. К. В. Каменский — Методы лабораторного испытания сенного материала, 1935 г.
15. Комитет по заготовкам с/х продуктов при СНК СССР — Учебное пособие по хранению зерна, 1934 г.
16. ВНИЛДМИ — Опыты и исследования, вып. V, 1934 г.
17. " — " " " вып. II, 1934 г.

18. Ю. Н. Масыгин — Селекция и семеноводство, 1935 г.
19. В. Г. Сперанский — Развитие плодоводства в Таджикистане, 1936 г.
20. В. П. Церннт — Как вырастить из семян красивейшие деревья и кустарники, 1925 г.
21. Инж. тех. Б. И. Селибер — Справочник по лесной промышленности и лесному хозяйству.
22. Николай Старк — Лесоразведение в связи с типами, 1926 г.
23. В. Н. Хохлов и П. И. Лисицин — Общая селекция и семеноводство полевых культур, 1934 г.
24. Н. И. Степанов — Древесные семена, их свойства, сбор и хранение, 1930 г.
25. Курс частного лесоводства, том 1-ый, 1931 г.
26. Проф. А. Н. Тольский — Основы лесокультурного дела в СССР, часть 1-ая, Лесное семеноводство 1932 г.
27. А. М. Солоухин — Состояние лесосемянного дела в Лен области, журнал „Лесного хозяйства и лесоэксплоатации“ № 1, за 1936 г.
28. И. И. Журавлев — Зараженность семян грибами и борьба с ними — Лесхозяйство и Лесоэксплатация № 5, за 1935 г.
29. Инж. В. П. Каверин — Добывание, обескрыливание и очистка хвойных семян, 1935 г.
30. Культурная флора СССР, том XVII — Орехоплодные — под редакцией проф. Е. В. Вульф.
31. М. А. Мурзаев — Сбор и заготовка дикорастущих орехов, 1935 г.
32. „ Сбор, заготовка и использование дикорастущих плодов и ягод, 1934 г.
33. Проф. Н. С. Нестеров — Очерки по лесоведению, 1933 г.
34. Գ. Խաչարյան — Թթվաբանութեան մշկութագիր 1935 թ.
35. И. А. Альтов, П. Н. Сигида, В. В. Загуменный — Справочная книга по зеленому строительству.
36. И. В. Фигуровский — Климатический очерк северо-восточной Армении 1920 г.

## ԲՈՎԱՆԴԱԿԻԹՅՈՒՆ

եջ

<b>Առաջարան . . . . .</b>	3
<b>Ծառատեսակների բազմացումը . . . . .</b>	6

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

<b>Ծառատեսակների բերքատվության . . . . .</b>	.
<b>Հաշվառումը . . . . .</b>	8

### ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

<b>Բերքատվություն և նրա վրա ազդող ֆակտորները . . . . .</b>	12
--	----

### ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

<b>Ծառասերմերի վորակը . . . . .</b>	25
-------------------------------------	----

### ԳԼՈՒԽ ԶՈՐՅՈՐԴ

<b>Սերմերի ծլունակությունը . . . . .</b>	30
--	----

### ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ


<b>Մեր անտառային գլխավոր ծառատեսակները և նրանց սերմերը . . . . .</b>	57
--	----

### ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

<b>Ծառասերմերի հավաքման աշխատանքների կազմա- կերպումը . . . . .</b>	91
--	----

### ՀԱՎԵԼՎԱԾ

<b>Մոտավոր տվյալներ Հայաստանի անտառային գլխավոր ծառատեսակների ծաղկման, սերմերի հասունու- թյան, բերքատվության ժամկետների և այլ հատկու- թյունների մասին . . . . .</b>	95ա
---	-----



Պատ, խմբ.՝ Ար Ո լ դ ու լս ա ն լ ա ն  
Մասնագիտ, խմբ.՝ Ար Մ ո ւ շ ե ղ ա ն

---

Տելք, խմբ.՝ Հ. Մ ո ւ ը ա դ յ ա ն  
Սըբագըիչ՝ Խ. Ա լ վ ա դ յ ա ն

---

Գլավ. լիտպ. 1124, հրատ. 381, պատ. 719, տիրաժ 2000  
Հանձնված է արտադրութ. 21/X 36 թ.  
Ստորագրված է տպագր. 20/XI

---


Դյուլիցի տպարան, Յերևան  
Նալբանդյան 11.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004210

Digitized by srujanika@gmail.com




BIBLIOTHEQUE  
UNIVERSITY LIBRARY  
THE GERMANY

HANNOVER - DEUTSCHLAND

ԴԻՆ 1 թ. 50 ԿՈՊ.

744



504,



ЕРЕВАНСКИЙ ЛЕСХОЗ

А. ՊՈՎԻԿՅԱՆ

ЛЕСНЫЕ СЕМЕНА

СЕЛЬХОЗГИЗ

1936

ЕРЕВАН